Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ 95-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2014

ՀՏԴ 378.4(091)
ԳՄԴ 74.58
Ե 813

Գլխավոր խմբագիր՝
ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյան

Խմբագրական խորհրդի անդամներ՝
Էդ. Գ. Մինասյան, Ա. Ա. Ավագյան, Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ա. Ստեփանյան, Հ. Գ. Մարգարյան, Հ. Գ. Ավետիսյան, Մ. Ռ. Գաբրիելյան, Հ. Բ. Գրիգորյան, Վ. Ա. Գաբրիելյան, Ս. Պ. Մուրադյան, Յու. Ս. Ավետիսյան, Ռ. Կ. Սաքապետոյան, Վ. Զ. Պետրոսյան, Ժ. Ա. Քալանթարյան, Ն. Կ. Հարությունյան, Ա. Լ. Սարգսյան

Պատասխանատու խմբագիր՝
Լ. Վ. Ավետիսյան

Կազմեցին և հրատարակության պատրաստեցին՝
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Էդ. Գ. Մինասյանը և
բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Ա, Ավագյանը

Ե 813 ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ 95-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ: Եր., ԵՊՀ հրատ., 2014. - 128 էջ:

Գիրքը նվիրված է ԵՊՀ անդրանիկ ֆակուլտետի՝ պատմալեզվաբանականի հիմնադրման 95-ամյակին: Ներկայացված է ֆակուլտետի և նրա հիմքի վրա առաջացած ինքնուրույն ֆակուլտետների (Պատմության և Հայ բանասիրության) անցած ուղին՝ հիմնադրումից մինչև մեր օրերը:

Նախատեսվում է համալսարանի պատմության հարցերով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 378.4(091)
ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-1889-9

© ԵՊՀ հրատարակչություն 2014թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Շնորհավորում եմ Երևանի պետական համալսարանի անդրանիկ՝ պատմության և հայ բանասիրության ֆակուլտետների հիմնադրման 95-րդ տարեդարձը: Մայր բուհը ոչ միայն հայ ժողովրդի պատմության վերջին ինքնուկես տասնամյակների ականատեսն ու վկան է, այլև այդ կենսագրության մասն ու կերտողներից մեկը:

Հիրավի, Երևանի պետական համալսարանի հայագիտական վերոհիշյալ ֆակուլտետներն անցել են իրադարձություններով հարուստ ճանապարհ, կայացման ու զարգացման դժվարին, սակայն կարևոր ու պատասխանատու փուլեր, որոնց ընթացքում ձևավորվել ու ամրապնդվել են համալսարանական ավանդույթները: Իմ համոզմամբ՝ այդ ձեռքբերումներից ամենակարևորը հազարավոր շրջանավարտներն են՝ մարդիկ, ովքեր հսկայական ներդրում ունեն մեր երկրի հանրային կյանքի տարբեր ոլորտներում՝ քաղաքականություն, տնտեսություն, կրթություն, գիտություն ու մշակույթ:

Այսօր մենք ակնածանքով ենք հիշում այն երախտավորներին, ովքեր իրենց բացառիկ միտքը, վառ տաղանդն ու մտավոր կարողություններն անմնացորդ ներդրել են հանուն Երևանի պետական համալսարանի կայացման:

Համալսարանի հայագիտական երկու ֆակուլտետներն էլ ունեն կարևոր առաքելություն: Դա մեր պետությանը, մեր ժողովրդին, գիտելիքի լույսին ու բարուն ծառայելու պատրաստ բանիմաց ու լայնախոհ մասնագետներ պատրաստելն է: Այդ առաքինություններով օժտված համալսարանականներն են, որ շարունակելու են կերտել Հայաստանի ու Երևանի պետական համալսարանի կենսագրությունը և կոչված են պատվով կրելու «համալսարանական» անունը:

Յուրաքանչյուր հոբելյան լավ առիթ է անցած ուղին վերագնահատելու ու նոր անելիքները նախանշելու համար: Մաղթում եմ, որ գալիք տասնամյակները ԵՊՀ-ի համար լինեն հաջողությունների, նորանոր ձեռքբերումների և առաջընթացի ժամանակներ, և որ նրա կենսագրության գալիք տասնամյակներն անվերջ բազմապատկվեն ու պսակվեն նորանոր հաջողություններով:

Սերժ Սարգսյան
ՀՀ նախագահ
ԵՊՀ խորհրդի նախագահ

Սիրելի՛ պատմաբաններ և բանասերներ,

Յուրաքանչյուր ժողովրդի ազգային նկարագիրը պայմանավորված է նրա հոգևոր-մշակութային զարգացման աստիճանով: Իր երկարամյա պատմության ընթացքում մարդու համար մշտական ուղեկից են եղել դպրոցն ու ուսումը: Ուստի հայ լուսավորյալ մտավորականներին, մշակույթի և հասարակական գործիչներին խորապես մտահոգում էր մայր հայրենիքում ժամանակաշրջանի պահանջներին համապասխան բարձրագույն կրթօջախ ունենալու հարցը: Այն իրականություն դարձավ ազգային պետականության վերականգնումից հետո: 1919 թ. մայիսի 16-ին ՀՀ Նախարարների խորհրդի որոշմամբ ազդարարվեց Երևանի համալսարանի հիմնադրումը: Իր գործունեությունը համալսարանը պետք է սկսեր Երևանում 1919-1920 ուսումնական տարում, որը, սակայն, իրերի բերումով կայացավ Ալեքսանդրապոլում:

Համալսարանի պարապմունքները սկսվեցին փետրվարի 1-ին և շարունակվեցին մինչև հունիս միայն մեկ՝ պատմալեզվաբանական ֆակուլտետում, որը համալսարանի անդրանիկ գործող ֆակուլտետն էր:

Մեկ կիսամյակ անց՝ 1920 թ. հունիսի 21-ին, Հայաստանի Նախարարների խորհրդի որոշմամբ համալսարանը Ալեքսանդրապոլից պետք է տեղափոխվեր Երևան և տեղակայվեր Աստաֆյան փողոցում գտնվող ուսուցչական սեմինարիայի շենքում: Երևանում համալսարանը իր պարապմունքները պետք է վերսկսեր 1920 թ. հոկտեմբերի 16-ին, սակայն հայ-թուրքական ռազմաճակատում և ընդհանրապես երկրում ստեղծված ծանր իրավիճակը հնարավորություն չտվեց իրականացնելու այն: Պարապմունքները Երևանում վերսկսվեցին 1921 թ. հունվարի 24-ին:

Հետագայում իր ողջ գործունեության ընթացքում՝ սկզբում պատմալեզվաբանական, ապա պատմության և բանասիրու-

թյան ֆակուլտետները պահպանել են և այժմ էլ շարունակում են գալիք սերունդներին փոխանցել գիտելիքի այդ կաճառի լավագույն ավանդույթները:

Իբրև ուսումնագիտական և կրթամշակութային առաջատար օղակ՝ այսօր էլ ԵՊՀ պատմության և հայ բանասիրության ֆակուլտետները հավատարիմ են իրենց ավանդույթներին՝ զորավիգ դառնալով հայոց երկրին ու պետականությանը:

Մայր բուհի անդրանիկ ֆակուլտետների ծննդյան հինգսունհինգամյակի առթիվ համալսարանի գիտական խորհրդի անունից, որպես պատմության ֆակուլտետի շրջանավարտ, երախտագիտության խոսք եմ ուղղում ԵՊՀ հիմնադիր երկու ֆակուլտետների բոլոր տարիների հայրենանվեր դասախոսներին, շնորհավորում համալսարանի անունը բարձր պահող շրջանավարտներին, հաջողություններ ցանկանում ներկայումս սովորող ուսանողությանը:

Մաղթում եմ գիտելիքի և լույսի ջահը վառ պահել գալիք սերունդների համար:

Արամ Սիմոնյան
ԵՊՀ ռեկտոր

ԱՌԱՋԱԲԱՆ

2014 թ. մեծ շուքով նշվեց ՀՀ Մայր բուհի՝ Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հիմնադրման 95-ամյակը: Լինելով հայ ժողովրդի՝ 20-րդ դարի ամենամեծ ձեռքբերումներից մեկը՝ ԵՊՀ-ն, իր գոյության տարիներին զարգանալով ու հզորանալով, դարձել է հանրապետության ուսումնագիտական ու կրթամշակութային խոշոր կենտրոն, ակնառու նվաճումների է հասել Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների համար բարձրորակ կադրերի պատրաստման գործում:

Իր ստեղծման առաջին օրվանից խորհրդանշելով հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը՝ այն իր շուրջը համախմբեց հանրապետության մտավորականության մեծ մասին, որոնք իրենց կարողությունները ներդրեցին մեր երկրի զարգացման, անկախ պետականության ստեղծման, կայացման ու հետագա ամրապնդման գործում: Պահպանելով անցած տարիների ընթացքում իր արդյունավետ գործունեության շնորհիվ նվաճած հեղինակությունն ու վարկանիշը, վերջին տասնամյակներում իրականացնելով կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովմանն ուղղված մի շարք բարեփոխումներ՝ ԵՊՀ-ն ներկայումս դարձել է ոչ միայն Հայաստանի երրորդ հանրապետության առաջատար կրթական հաստատությունը, այլև աշխարհի առաջնակարգ համալսարանների լուրջ գործընկերը:

ԵՊՀ երկու տասնյակից ավելի ֆակուլտետների շարքում միշտ իրենց կարևորագույն տեղն են ունեցել համալսարանի առաջնեկը դարձած պատմության և բանասիրության ֆակուլտետները, որոնք հսկայական աշխատանք են կատարել պատմաբանների ու բանասերների որակյալ կադրեր պատրաստելու ուղղությամբ:

Սկզբում ֆակուլտետը կոչվում էր պատմալեզվաբանական, իսկ 1922 թվականից՝ պատմագրական: Ի դեպ, ֆակուլտետը դեռ այն ժամանակ լիովին ապահովված էր դասախոսներով: Նա իր ինքնուրույն գոյությունը պահպանեց մինչև 1924 թ., ապա մտավ հասարակագիտական ֆակուլտետի (հասֆակ) կազմի

մեջ՝ որպես նրա ենթաբաժիններից մեկը: 1925-1926 ուսումնական տարվա վերջում այդ ֆակուլտետի մանկավարժական բաժինը դարձավ ինքնուրույն ֆակուլտետ, որի կազմի մեջ մտան պատմագրական բաժինն ու ենթաբաժինը: Այդպես շարունակվեց մինչև 1930 թ.՝ համալսարանի նոր վերակառուցումը:

1933-1934 ուսումնական տարվանից նորից սկսեց գործել պատմագրական ֆակուլտետը, որը մի քանի տարի անց բաժանվեց պատմության և բանասիրության ֆակուլտետների:

Ֆակուլտետներում միշտ առաջնային է համարվել որակյալ կադրերի պատրաստումը: Բավական է ասել, որ 95 տարիների ընթացքում ԵՊՀ-ի 22 ռեկտորներից 5-ը եղել են պատմաբաններ՝ Հակոբ Մանանդյան, Հովհաննես Պողոսյան, Կամսար Առաքելյան, Մկրտիչ Ներսիսյան, ներկայումս՝ Արամ Սիմոնյան: Ռեկտորներ են եղել նաև գրականագետ Նորայր Դաբաղյանը և փիլիսոփա Հենրի Գաբրիելյանը, որոնք ավարտել են պատմագրության ֆակուլտետը:

Այս երկու ֆակուլտետների շրջանավարտներից շատերը ներկայումս զբաղեցնում են պետական բարձր պաշտոններ, հասարակական-քաղաքական գործիչներ են, ղեկավարում են գիտակրթական հիմնարկներ:

Բավական է նշել, որ ԵՊՀ պատմության ֆակուլտետի շրջանավարտներից էին ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարներ Սուրեն Թովմասյանը (1953-1960 թթ.) և Ստեփան Պողոսյանը (1990-1991 թթ.), ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը (1992 թ.), իսկ բանասիրության ֆակուլտետի շրջանավարտներից են ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը (1991-1998) և ՀՀ ներկայիս նախագահ Սերժ Սարգսյանը (2008 թվականից առ այսօր):

95 տարվա հեռավորությունից, երբ հետադարձ հայացք ենք նետում Հայաստանի Մայր բուհի հիմնադիր ֆակուլտետների անցած ուղուն, պարզորոշ երևում է, թե որքան մեծ դեր են խաղացել նրա շրջանավարտները հայոց պետականության կայացման, ամրապնդման ու զարգացման գործում: Այսօր էլ ֆակուլտետները շարունակում են պահպանել իրենց լավագույն ավանդույթները՝ դրանք զարգացնելով ու փոխանցելով գալիք սերունդներին:

Ձեռնամուխ լինելով ֆակուլտետների 95-ամյա պատմության շարադրմանը՝ դեկանատներն ու ամբիոնները նպատակ են ունեցել մի գրքում հնարավորինս ամբողջական ներկայացնելու ֆակուլտետների անցած ուշագրավ ուղին: 2002 թ. պատմության ֆակուլտետի տարբեր տարիների շրջանավարտների առաջին մեծ հավաքը, ինչպես նաև ԵՊՀ հիմնադրման 90-ամյակի առթիվ հիմնադիր ֆակուլտետների մասին հրապարակված երկու աշխատությունները կարևորեցին ֆակուլտետների անցած ուղու մասին մեկ ամբողջական աշխատություն ստեղծելու գաղափարը:

Արխիվային հարուստ, հաճախ հազվագյուտ փաստաթղթերի հայտնաբերումն ու մանրակրկիտ ուսումնասիրությունը, պատմության ֆակուլտետի շրջանավարտ Լ. Պ. Ղարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը» (Երևան, 1994 թ.) մենագրությունը, «Երևանի համալսարան, 1918-1920 թթ.» վավերագրերի ժողովածուն, «ԵՊՀ ռեկտորները», ԵՊՀ 90-ամյակի հոբելյանի օրերին լույս տեսած «ԵՊՀ կենսագրական հանրագիտարանը» (գլխավոր խմբագիր՝ Ա. Սիմոնյան) և «ԵՊՀ տարեգրություն-90» (կազմող՝ Ժ. Մանուկյան, գլխավոր խմբագիր՝ Ա. Սիմոնյան) «Երևանի պետական համալսարանի պատմության 90-ամյա ֆակուլտետը» (կազմող Է. Մինասյան, գլխավոր խմբագիր՝ Ա. Սիմոնյան, Երևան, 2009), ինչպես նաև «ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի 90-ամյակը» (կազմող Ա. Ավագյան, Երևան, 2009) աշխատությունները, «Մեր անվանի դասախոսները» մատենաշարը (3 հատորով), ինչպես նաև ֆակուլտետներում դասավանդած ու դասավանդող դասախոսների կենսագրական տեղեկությունների հավաքումը մեծապես օգնեցին ստեղծելու սույն ժողովածուն, որը ԵՊՀ հիմնադիր ֆակուլտետների պատմությունը ներկայացնող առաջին փորձն է: Այն, անշուշտ, հետագա լրացման կարիք կունենա: Խմբագրական խորհուրդը շնորհակալությամբ կընդունի արված դիտողություններն ու առաջարկությունները, որոնք հաշվի կառնվեն գրքի վերահրատարակման ժամանակ:

ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

Հայ ժողովուրդը, հատկապես նրա մտավորականությունը, վաղուց էր երազում սեփական հայրենիքում ունենալ գիտակրթական մայր օջախ՝ հայկական համալսարան, որտեղ կարելի կլիներ բարձրագույն գիտելիքներ ստանալ ու սովորել հայերենով: Այդ հնարավորությունը իրականություն դարձավ Առաջին հանրապետության տարիներին: Հայոց պետական իշխանություններին պատշաճը պետք է մատուցել, քանզի նրանք գիտակցեցին և իրականացրին ժողովրդի այդ ձգտումները: Այդ ժամանակ առավել ևս զգացվում էր բարձրագույն կրթությամբ պատմաբան ու բանասեր կադրեր ունենալու անհրաժեշտությունը, ուստի պատահական չէ, որ երբ 1919 թ. հիմնադրվեց համալսարանը, առաջնեկը դարձավ պատմալեզվաբանական ֆակուլտետը: Համալսարանի հիմնադրումը հայ ժողովրդի՝ կրթության, լուսավորության նկատմամբ ունեցած ցանկությունների, դարավոր ձգտումների, հասունացած պահանջների իրագործման արդյունք էր: Հայ ժողովուրդը, որ դեռ միջնադարում հասել էր համալսարանական կրթօջախներ ունենալու մակարդակի, պատմության նորագույն շրջանում ավելի քան զգում էր դրա անհրաժեշտությունը առավել ևս անկախության և սեփական ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու պայմաններում:

1919 թվականի մայիսի 16-ին Հայաստանի առաջին հանրապետության Նախարարների խորհուրդը, որոշում ընդունելով համալսարան հիմնելու մասին, առաջնահերթ համարեց բացել պատմալեզվաբանական ֆակուլտետ[1]:

Այդ որոշման հիման վրա 1919 թ. հունիսի 5-ին Նախարարների խորհուրդը ընդունում է «Օրենք Երևանի համալսարանի մասին»[2]: Համալսարանի տեսուչ (ռեկտոր) է հաստատվում Եվրոպայում և Ռուսաստանում լայն ճանաչում ունեցող իրավագետ, պրոֆեսոր Յուրի Ստեփանի Ղամբարյանը: Որոշվում է համալսարանի պրոֆեսորի աշխատավարձի չափը (մինիստրական), իսկ արտասահմանից հրավիրվելու դեպքում՝ ավելի բարձր: Որոշվում է նաև ֆակուլտետում ուսանողների ընդունելության կարգը[3]:

Հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի՝ 1919 թ. նոյեմբերի 5-ի ՀՀ Նախարարների խորհրդին ուղղած զեկուցագրից տեղեկանում ենք, որ Երևան քաղաքում հարմար շենք չգտնելու պատճառով նախարարությունը առաջարկում է համալսարանը ժամանակավորապես տեղափոխել Ալեքսանդրապոլ (Գյումրի), որտեղ կային անհրաժեշտ հարմարությունները: Այս գրության հիման վրա վարչապետ Ալ. Խատիսյանը մակագրում է որոշումը[4]: Մինչև համալսարանի և նրա անդրանիկ ֆակուլտետի բացումը անհրաժեշտ էր լուծել երկու կարևոր խնդիր: Առաջին՝ այն ապահովել որակյալ դասախոսական կազմով, երկրորդ՝ ստեղծել ընդունելության կարգ և կազմակերպել ընդունելություն: Հենց այս խնդիրների իրագործմանն էլ ձեռնամուխ եղան համալսարանի կազմակերպիչները:



Հանրային կրթության նախարարները (Գ. Մելիք-Ղարագյոզյան, Ս. Տիգրանյան, Ն. Աղբալյան) և կազմակերպիչները՝ Յու Ղամբարյանն ու նրա օգնական, հայտնի քիմիկոս Դ. Զավրյանը, անժխտելի ու մեծ ավանդ ունեցան ոչ միայն համալսարանի բացման, այլև նրա անդրանիկ պատմալեզվաբանական ֆակուլտետը բարձրորակ դասախոսական կազմով ապահովելու գործում: Նրանց ջանքերով դասախոսական աշխատանքի են հրավիրվում ժամանակի անվանի գիտնականներ, փորձառու և ճանաչված մանկավարժներ Մանուկ Աբեղյանը (հայ հին գրականություն), Ստեփան Մալխասյանցը (պատմական լեզվաբանություն), ֆակուլտետի առաջին դեկան Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (հայ մատենագրություն և հայոց գրականության հին շրջան), Երվանդ Տեր-Մինասյանը (հայոց պատմության հին շրջան), դեկանի պաշտոնակատար (1920 թ. հունիս - հուլիս) Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը (հայ եկեղեցու պատմություն և գրչության արվեստ), Սիրական Տիգրանյանը (հայ

[1] Տե՛ս ՀՀԱԱ ֆ. 207, ց. 1, գ. 220, թ. 78:
[2] Տե՛ս ՀՀԱԱ ֆ. 199, ց. 98, թ. 83: Տե՛ս նույն տեղում ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 105:
[3] Տե՛ս նույն տեղում՝ ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 105:
[4] Տե՛ս Ղարիբջանյան Լ., Երևանի պետական համալսարանը, Երևան, 1994, էջ 36:

իրավունքի պատմություն և հոգեբանություն), Հակոբ Մանանդյանը (հայոց պատմություն), Գրիգոր Ղափանցյանը (համեմատական լեզվաբանություն), Աշխարհբեկ Քալանթարը (Արևելքի պատմություն և հնագիտություն) և այլք:

Երկրորդ կարևոր հարցը՝ ուսանողության հավաքագրումը, կարգավորվեց ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. հուլիսի 8-ին հաստատված «Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնների» համաձայն, որով իսկական ուսանող կարող էին դառնալ առաջին հերթին միջնակարգ կրթությամբ քաղաքացիները, ապա միջնակարգ կրթություն չունեցողները, որոնք կարող էին ընդունվել որպես ազատ ունկնդիր՝ ընդհանուր ժողովի թույլտվությամբ: Դիմումի հետ պահանջվում էր ներկայացնել միջնակարգ կրթության վկայական կամ նրա վավերացված պատճենը, ծննդյան վկայականը և զինվորական ծառայության վկայականը: Ուսանողները պետք է վճարեին ուսման վարձ՝ տարեկան 500 ռուբլի, իսկ ազատ ունկնդիրները՝ 100 ռուբլի: Պարզվում է, որ մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետ ընդունվելու համար դիմել էր 632 քաղաքացի: Սակայն համալսարանի ժամանակավոր կանոնների համաձայն՝ ընդունվելու էր ընդամենը 260 ուսանող, որոնցից 121-ը՝ հիմնական, իսկ 139-ը՝ որպես ազատ ունկնդիր: Ուսանողների մեջ մեծ թիվ էին կազմում ուսուցիչները[5]:

Նախապատրաստական այսպիսի աշխատանքներից հետո՝ 1920 թ. հունվարի 31-ին, Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) առևտրային դպրոցի շենքում տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը: Ներկա էին խորհրդարանի նախագահ Ա. Սահակյանը, նախարարապետ (վարչապետ) Ա. Խատիսյանը, հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, օտարերկրյա դիվանագետներ: Բացման խոսքով հանդես եկավ համալսարանի առաջին ռեկտոր (տեսուչ) պրոֆեսոր Յու. Ղամբարյանը, ապա ելույթ ունեցավ Ն. Աղբալյանը: Խոսելով համալսարանի բացման կարևորության մասին՝ Ն. Աղբալյանը նշում է. «Այս համալսարանում մուտքը պետք է լինի մատչելի ամենքի համար, մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժվար, որ ուսումը լինի ձրի, գիտությունը վարվի գործնական եղանակով, որ հիմք դրվի համայնական գիտական աշխատանքների»[6]:

Ելույթներին հաջորդում է պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան, պրոֆեսոր Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի անդրանիկ դասախոսությունը՝ «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի մշակութային գործերում» թեմայով: Մեսրոպ արքեպիսկոպոսը նվիրյալ հայրենասեր էր, իսկական մտավորական, տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների: Ծնվել էր 1865 թ. Զանգեզուրի Ծիկահող գյուղում: 1882 թ. ավարտել էր Շուշիի թեմական, 1885 թ.՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցները, 1890 թ.՝ Դորպատի համալսարանը: Մասնագիտական գիտելիքները կատարելագործել էր նաև Վիեննայում, Փարիզում, Երուսաղեմում, Լոնդոնում, Բեռլինում և Վենետիկում: 1895-1898 թթ. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակներով նշանակվել էր Երևանի թեմի եկեղեցական-ծխական ուսումնարանների տեսուչ, Շուշիի հոգևոր թեմական դպրոցի տեսուչ: 1902 թ. նա Սանկտ Պետերբուրգի համալսարանում պաշտպանել էր ատենախոսություն[7], նշանակվել Էջմիածնի Սինոդի անդամ, Գևորգյան ճեմարանի տեսուչ, ձեռնադրվել եպիսկոպոս: Հաշվի առնելով նրա գիտակրթական մակարդակն ու մանկավարժական հարուստ փորձը, կազմակերպչական ունակությունները՝ նրան հրավիրել էին Հայաստանի նորաբաց համալսարան: Մեկ տարուց ավելի ժամանահատվածում (1919 թ. հունիս- 1920 թ. դեկտեմբեր) նրան հաջողվեց մեծ ծավալի աշխատանք կատարել ոչ միայն ֆակուլտետի ուսումնական գործընթացը կազմակերպելու, այլև գիտական աշխատանքներ հրատարակելու ուղղությամբ:

1920 թ. հունվարի 31-ին՝ համալսարանի և նրա անդրանիկ ֆակուլտետի բացման օրը, լույս տեսավ «Հայաստանի համալսարան» մեկօրյա թերթը, որի վաճառքից ստացված եկամուտը հատկացվեց չքավոր ուսանողների օգնության ֆոնդին:

[5] Տե՛ս Ղարիբջանյան Լ., նշվ. աշխ., էջ 38:

[6] «Հառաջ», 1920 թ. փետրվարի 15, թիվ 26:

[7] Տե՛ս, Երևանի պետական համալսարան, Կենսագրական հանրագիտարան, Ա. Սիմոնյանի խմբագրությամբ, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 5:

Թերթում, բացի համալսարանի ռեկտոր (տեսուչ) Յու. Ղամբարյանի հոդվածից, տպագրվել են նաև ֆակուլտետի դեկան Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի «Ողջո՛ւյն Հայաստանի համալսարան», ֆակուլտետի դասախոսներ Երվանդ Տեր-Մինասյանի «Հայաստանի համալսարանը», Ստեփան Մալխասյանցի «Համալսարանը և լեզուն», 1920 թ. հունիսից դեկանի պաշտոնակատար Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի «Երա՞զ, թե՞ իրականություն» հոդվածները: Հետաքրքիր է, որ թերթում հրատարակվել է նաև համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի (1920 թ. փետրվար-մայիս) դասացուցակը: Դրանից պարզ երևում է, որ համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի դասերը սկսվել են փետրվարի մեկից և տևել մինչև հունիսի մեկը: Նշվում են նաև դասավանդվող առարկաները, դրանց ժամաքանակները, դասախոսները: Հետաքրքիր է, որ հաշվի առնելով ունկնդիրների մակարդակը և նրանց զբաղվածությունը՝ դասախոսությունները սկսվել են երեկոյան ժամը հինգից՝ յուրաքանչյուր առարկան երկոական ժամով: Անպատրաստների համար նախատեսվել է ևս երկու լրացուցիչ ժամ՝ հատկապես գրաբարից և ֆրանսերենից: Ըստ դասացուցակի՝ առաջին կիսամյակում դասավանդվում էր առաջին՝ հայ գրականություն (հին շրջան, պրոֆեսոր Մեսրոպ եպիսկոպոս), երկրորդ՝ հայոց պատմություն (հին շրջան, պրոֆեսոր Երվանդ Տեր-Մինասյան), երրորդ՝ գրաբար (դոցենտ Ստեփան Մալխասյանց), չորրորդ՝ գրչության արվեստ (դոցենտ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան), հինգերորդ՝ համեմատական լեզվաբանություն և հունարեն (դոցենտի պաշտոնակատար Ռուբեն Աբրահամյան), հոգեբանություն (դոցենտի պաշտոնակատար Սիրական Տիգրանյան), Արևելքի պատմություն (պրիվատ-դոցենտ Աշխարհբեկ Քալանթար), ընդհանուր պատմություն (նոր դարեր, դասախոս Ն. Սիմոնյան), ֆրանսերեն (դասախոս է. Ուսպենսկայա): Շուտով ֆակուլտետը համալրվում է նոր դասախոսներով: Հանրային կրթության և արվեստի նախարարության հոկտեմբերի 30-ի 161 և 162 հրամաններով Գրիգոր Ղափանցյանը և Աշոտ Գասպարյանը 1920 թ. օգոստոսի մեկից նշանակվում են համապատասխանաբար ԵՊՀ պատմալեզվաբանական ֆակուլտետի պրիվատ-դոցենտ և ընդհանուր պատմության դասախոս:

Այսպիսով՝ պատմալեզվաբանական ֆակուլտետը աստիճանաբար համալրվում է բարձրորակ մասնագետներով: Ֆակուլտետում հենց բացման ժամանակ ունկնդիրների թիվը 260 էր, իսկ դասախոսներինը՝ 32: Ուսումնական տարվա առաջին օրը՝ փետրվարի մեկին, առաջին հանդիսավոր դասախոսությունը կարդալու պատիվը ընծայվեց անվանի գիտնական, հայագետ Ստեփան Մալխասյանցին: Դասախոսությանը, ուսանողությունից բացի, ներկա էին նաև ՀՀ Հանրային կրթության նախարարը, համալսարանի ռեկտորը, նրա օգնական կազմակերպիչը, ֆակուլտետի դասախոսները և հասարակայնության ներկայացուցիչներ: Պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի ուսումնագիտական և կազմակերպչական աշխատանքների մասին մանրամասն տեղեկություններ են պարունակում դեկան Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի, դեկանի պաշտոնակատարներ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի ու Հակոբ Մանանդյանի զեկուցագրերը և ֆակուլտետի ժողովների նիստերի արձանագրությունները: Դրանցից մենք տեղեկանում ենք մասնագիտական գրականության ձեռքբերման դժվարությունների, ուսումնական գործի ուղղությամբ կատարված աշխատանքների, ինչպես նաև դասախոսությունների որակի բարձրացման, տեքստերի տպագրման նախապատրաստման և հրատարակման, ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքների, նոր ուսանողների ընդունելության, ուսումնական պարապմունքների արդյունավետության բարձրացման խնդիրների մասին: Արձանագրություններից երևում է, որ չնայած ֆակուլտետում անվանի դասախոսների անձնուրաց ջանքերին, ինչպես նաև ուսանողության մեծ խանդավառությանն ու ջանասիրությանը, այնուամենայնիվ առաջին կիսամյակի արդյունքները չեն բավարարում տնօրենության սպասելիքները, և ֆակուլտետի դասախոսներն ու ղեկավարությունը հանգում են այն համոզման, որ համալսարանը՝ որպես ուսումնագիտական հաստատություն, պետք է գործի ոչ թե Ալեքսանդրապոլում, այլ մայրաքաղաքում: Շուտով՝ 1920 թ.



մայիսի 27-ին, այդ առթիվ պաշտոնապես հանրային կրթության նախարարին է դիմում ֆակուլտետի դեկան Մեսրոպ եպիսկոպոսը՝ նշելով, որ «Առաջին սեմեստրի փորձը համոզեց բոլոր դասախոսներին, որ անհրաժեշտ է համալսարան ունենալ Երևանում: Ֆակուլտետի հանձնարարությամբ զատկի տոներին եկա Երևան: Դիմեցի հանրային կրթության նախարար պարոն Ն. Աղբալյանին, և նա խոստացավ հնարավոր քայլեր կատարել այդ ուղղությամբ: Նույն խնդրանքով, պարոն նախարար, նորից դիմում եմ Ձեզ, որ միջոցներ ձեռք առնեք առաջիկա ամիսներին: Սեպտեմբեր ամսին համալսարանը տեղափոխվի Երևան, որ նա ունենա հատուկ շենք, և որ այդ որոշումը տեղի ունենա ըստ կարելվույն շուտ, որպեսզի կարելի լինի հոգալ բնակարաններ նաև դասախոսների համար»[8]: Համամիտ լինելով այս հարցադրմանը՝ նոր նախարար Գ. Ղազարյանը առաջարկ է մտցնում Նախարարների խորհուրդ՝ համալսարանը Երևան տեղափոխելու վերաբերյալ, որի հիման վրա 1920 թ. հունիսի 21-ին խորհուրդը որոշում է՝

1. Համալսարանը Ալեքսանդրապոլից տեղափոխել Երևան:
2. Ուսուցչական սեմինարիայի շենքը (որտեղ գործում է այժմյան պատմության ֆակուլտետը) հատկացնել համալսարանին:
3. Պրոֆեսորների համար գտնել մասնավոր շենքեր[9]:

Ուսուցչական սեմինարիայի շենքի վերանորոգման համար նախարարությունը հատկացնում է 500.000 ռուբլի: Համաձայն որոշման՝ Երևանում համալսարանը իր պարապմունքները պետք է վերսկսեր 1920 թ. հոկտեմբերի 16-ին, սակայն քաղաքական լարված իրավիճակի պատճառով դա հնարավոր չեղավ: Հայաստանի խաղաղ զարգացումը խանգարվեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմի հետևանքով: Որ համալսարանը իսկապես չի կարողանում վերսկսել պարապմունքները, երևում է դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Մանանդյանի՝ պատմալեզվաբանական ֆակուլտետի գործունեության մասին 1920 թ. հոկտեմբերի 17-ին գրած մի զեկուցագրից և ապա նույն ֆակուլտետի դասախոսների 1920 թ. հոկտեմբերի 29-ի ժողովի

[8] ՀՀԱԱ ֆ. 207, ց. 1, գ.337, թ. 117:
[9] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 128:

արձանագրությունից. «...Ս. Տիգրանյանը առաջարկում է մեկ շաբաթով հետաձգել ֆակուլտետի վերաբացումը՝ նկատի ունենալով ռազմաճակատի լուրջ դրությունը:

Կարծիքների կարճ փոխանակությունից հետո ձայների մեծամասնությամբ որոշվեց մնալ նախկին վճռին, այսինքն՝ թողնել ֆակուլտետի վարչությանը հայտարարելու ֆակուլտետի աշխատանքների սկզբի մասին, երբ այդ հնարավոր կգտնի»[10]: Փաստորեն դրությունը ռազմաճակատում այդպես էլ չկարգավորվեց: Հանրապետությունը Ալեքսանդրապոլի պայմանագրով կորցրեց ոչ միայն Սևրի պայմանագրով Հայաստանին տրված տարածքները, այլն իր փաստական վերահսկողության տակ գտնվող տարածքների կեսը:

Խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին համալսարանը վերաբացվեց Երևանում: Որքան էլ սուր էր խորհրդային նորաստեղծ իշխանությունների բացասական վերաբերմունքը Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարության նկատմամբ, այնուամենայնիվ, կարևորելով համալսարանի գոյության պատմական փաստը, որոշեց ոչ թե փակել, այլ ուղղակի վերակազմել այն՝ հարմարեցնելով իր շահերին ու խնդիրներին: Միաժամանակ, ելնելով այդ կարևոր գիտակրթական օջախը միայն խորհրդային իրավակարգի ծնունդ տեսնելու ցանկությունից, տասնամյակներ շարունակ անտեսվել են Հայաստանի առաջին հանրապետության տարիներին արված ձեռնարկումները և գոյություն ունեցող փաստաթղթերը[11]: ՀԽՍՀ առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի 1920 թ. դեկտեմբերի 17-ին ստորագրած առաջին իսկ հրամանագրում՝ «Երևանի համալսարանը վերակազմելու մասին» նշվում է. «Երևանի համալսարանը վերակոչվում է Երևանի ժողովրդական համալսարան, նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում են, և հիմնվում է երկու բաժանմունք՝ (բնագիտական և հասարակագիտական), իսկ նախկին համալսարանի բոլոր պրո-

[10] Տե՛ս Ղարիբջանյան Լ., նշվ. աշխ., էջ 12:
[11] Տե՛ս, ԵՊՀ կենսագրական հանրագիտարան, էջ 6:

ֆեսորները, դոցենտները, պրիվատ-դոցենտները, դասատուները և ասիստենտները համարվում էին արձակված»[12]: Դեռևս 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին ձևավորվել էին և գրեթե լիովին հայտնի էին պատմալեզվաբանական ֆակուլտետ ընդունված 90 դիմորդների անունները[13]: 1921 թ. հունվարի 23-ին նախապատրաստական աշխատանքներից հետո Երևանում տեղի ունեցավ համալսարանի հանդիսավոր բացումը, իսկ հունվարի 24-ին վերսկսվեցին պարապմունքները:

1921 թ. հունվարին ժողովրդական համալսարանի ռեկտոր է նշանակվում պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, պատմաբան Հակոբ Մանանդյանը: Նա եղավ համալսարանի երկրորդ ռեկտորը: Հ. Մանանդյանը բազմակողմանի և խոր գիտելիքների տեր հայագետ էր: Անցել էր հիանալի դպրոց: Ուսանել Ենայի, Լայպցիգի, Ստրասբուրգի, Ս. Պետերբուրգի և Դորպատի համալսարաններում: Հետագա տարիներին նա լույս է ընծայել հայերեն, ռուսերեն և գերմաներեն ավելի քան 150 աշխատություններ՝ նվիրված հայոց հին և միջնադարյան պատմությանն ու բանասիրությանը, պատմական աշխարհագրությանն ու մշակույթին: ԵՊՀ-ում 1921-1923 թթ. նա առաջինն էր, որ դասավանդել է հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմություն: Ռեկտորի պարտականություններից ազատվելուց հետո Հ. Մանանդյանը ղեկավարել է արևելագիտական և պատմագրության ֆակուլտետները, 1921-1925 թթ. եղել է հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1925 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1939 թ. ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ, իսկ 1943 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1925-1931 թթ. եղել է հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր:

Վերակառուցված համալսարանն այդ օրերին ուներ 2 ֆակուլտետ: Պատմագրության բաժինը հասարակագիտականի կազմում էր: Պատմագրական առարկաների ուսումնասիրության կազմակերպումն ու ղեկավարությունը իրականացվում էր պատմության առարկայական հանձնաժողովի կողմից, որը գլխավորում էր Հակոբ Մանանդյանը: Ուսումնասիրվում էին Հայաստանի պատմություն, ընդհանուր պատմություն և հեղափոխական շարժումների պատմություն, լեզվաբանական և գրականագիտական առարկաներ: Պարապմունքները ընթանում էին միանգամայն կազմակերպված ձևով: Շատ որոշակի էին զգացվում երիտասարդության ուսման ծարավը, դասախոսների ոգևորությունը, դժվարությունները հաղթահարելու նրանց պատրաստակամությունն ու կամքը: Սակայն ընդամենը 18-20 օր հետո՝ 1921թ. փետրվարի կեսերին, սկսված քաղաքացիական կռիվների հետևանքով պարապմունքները Երևանի ժողովրդական համալսարանում դադարում են: Չնայած ապրիլին քաղաքացիական կռիվներն ավարտվում են, բայց համալսարանի և նրա անդրանիկ ֆակուլտետի պարապմունքներն անմիջապես վերսկսել հնարավոր չի լինում: Լուսժողկոմատը և համալսարանի ղեկավարությունը նախապատրաստական լուրջ աշխատանքներ են տանում համալսարանի գործունեությունը նորմալ հունի մեջ դնելու համար: Հանրապետության պահանջներից ելնելով՝ որոշվում է համալսարանի կառուցվածքը, ճշտվում է պատրաստվող կադրերի մասնագիտացումը, լուծվում են պրոֆեսորադասախոսական կազմի համալրման, ինչպես նաև ուսումնանյութական բազա ստեղծելու հետ կապված խնդիրները:



Համալսարանը տեղավորվել էր Աստաֆյան (այժմ՝ Աբովյան) փողոցում գտնվող նախկին ուսուցչական սեմինարիայի (ներկայիս պատմության ֆակուլտետի շենքը) սև, տուֆաշեն, երկհարկանի շենքի 1-ին հարկում, քանի որ երկրորդ հարկը դեռևս զինվորական հիվանդանոց էր: Շենքը կառուցվել էր 1902-1903 թթ. Ստեփան Ավետիքյանին պատկանող այգու տեղում՝ ինժեներ Ն. Կիտկինի նախագծով: 1933-1935 թթ. կառուցվեց երրորդ հարկը, իսկ 1939 թ.՝ աջ թևը՝ համալսարանի դասախոս Ն. Բունիաթյանի նախագծով: 1921 թ. հոկտեմբերի 10-ին վերսկսվում են պարապմունքները, և նույն տարում պատմագիտական մասնագիտացումների հիմքի վրա ստեղծվեց արևելագիտության ֆակուլտետը, որը 1922-1923 ուստարում ստացավ պատմագրական անվանումը: Վերջինս գործեց մինչև 1924-1925 ուստարին: Թե՛ արևելագիտական և թե՛ պատմագրական անվանված ֆակուլտետների հիմնական խնդիրը մանկավարժական կադրերի պատրաստումն էր: Արևելագիտության և

[12] Տե՛ս, Երևանի համալսարան, վավերագրերի ժողովածու, էջ 270:
[13] Տե՛ս, նույն տեղում, էջ 328-329:

այնուհետև պատմագրական ֆակուլտետները սկզբում ղեկավարում էր 1921 թ. հոկտեմբերից ռեկտորի պարտականություններից ազատված Հ. Մանանդյանը (1921-1923 թթ.), իսկ շատ չանցած՝ ճանաչված հայագետ Մ. Աբեղյանը (1924-1925 թթ.): Այդ ուսարում հայագիտական բոլոր մասնագիտությունները կրկին ներառվեցին հասարակագիտական ֆակուլտետի մեջ՝ կազմելով վերջինիս պատմագրական բաժինը: Ելնելով հանրապետության և ԽՍՀՄ հայաբնակ վայրերի համար մայրենի լեզվով բարձրագույն կրթությամբ մանկավարժների օրավուր աճող պահանջարկից՝ 1926 թ. ստեղծվեց մանկավարժական ֆակուլտետը, որի կազմի մեջ մտավ պատմագրական բաժինը՝ պատմություն, գրականություն և լեզու մասնագիտություններով: Այդ կառուցվածքը պահպանվեց մինչև 1930 թ.: Այդ տարիներին (1923-1924 թթ.) պատմագրական բաժնում աշխատանքի հրավիրվեցին ճանաչված լեզվաբան, խոր գիտելիքների տեր, մանկավարժական մեծ հմտություն ունեցող Հրաչյա Աճառյանը, պատմաբան ու հրապարակախոս Լեոն (Առաքել Բաբախանյանը): Նույն թվականին ընդհանուր պատմություն կարդալու համար հրավիրվում է Ստեփան Ներսիսյանը, որի դասախոսություններն իրենց գիտական հագեցվածությամբ, տրամաբանական կառուցվածքով և պատմական փաստերի խոր վերլուծությամբ արժանանում էին ուսանողների հիացմունքին և բարձր գնահատանքին: Հրավիրվում են նաև եվրոպական կրթություն ստացած, տաղանդավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը, աշխարհագետ-մանկավարժ Ստեփան Լիսիցյանը և գրականագետ Սիմոն Հակոբյանը, ճանաչված պատմաբան Վահան Ռշտունին և հայոց պատմության մասնագետ Հակոբ Զորյանը:

1920-ական թվականներին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, բանակապես ու որակապես աճելով, դառնում է հզոր կոլեկտիվ: 1920-1930-ական թթ. դասավանդվող առարկաների ցանկը և դասախոսների անունները ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ աշխատանք է կատարել հայ պատմաբան և բանասեր գիտնականների ավագ սերունդը ֆակուլտետի ստեղծման, կայացման ու հետագա ամրապնդման գործում: 1920 թ.-ից սկսած՝ ֆակուլտետում դասավանդվել են հայոց պատմություն (Հակոբ Մանանդյան), հայ հին գրականություն (Մանուկ Աբեղյան), հայոց նոր գրականություն (Արսեն Տերտերյան), մանկավարժություն և հոգեբանություն (Գուրգեն Էդիլյան), հայոց լեզվի պատմություն (Հրաչյա Աճառյան), փիլիսոփայություն (Հայկ Գյուլի-Քեխյան), հայոց նորագույն պատմություն (Առաքել Բաբախանյան), Ռուսաստանի պատմություն (Ստեփան Ներսիսյան), լենինիզմի պատմություն (Աշոտ Հովհաննիսյան), ՍՍՀՄ պատմություն (Վահան Ռշտունի) և այլն:

1929-1930 ուստարում համալսարանի դասախոսական կազմի պրոֆեսորներից շատերը անվանի գիտնականներ էին, բազմաթիվ աշխատությունների հեղինակներ ու փորձառու մանկավարժներ: Նրանք ոչ միայն հմտորեն իրականացրին պատմաբան-բանասեր կադրերի ուսուցման գործը, այլև պատրաստեցին իրենց փոխարինողներ: Նրանցից յուրաքանչյուրը ֆակուլտետում նոր ամբիոն հիմնադրեց և նոր առարկաների դասավանդման սկիզբ դրեց: Եթե 1919-1920 թթ. համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետում դասավանդող պատմաբանների ու բանասերների թիվը 10 էր, ապա 1925-1926 թթ. հասավ 14-ի, իսկ 1929-1930 ուստարում՝ 20-ի: Համալսարանի հասարակագիտական ֆակուլտետի պատմագրական բաժինը 1925-1930 թթ. ավարտել է 181 ուսանող: Այդ բաժնի 1920-ական թթ. շրջանավարտներից են Գրիգոր Միքայելյանը (հետագայում դոկտոր, պրոֆեսոր), Աբգար Հովհաննիսյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս), լեզվաբաններ Արարատ Ղարիբյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս), Գուրգեն Սևակը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս), գրականագետ Մկրտիչ Մկրյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիայի թղթակից անդամ): Երիտասարդ դասախոսներ պատրաստելու գործը կազմակերպված բնույթ է ստանում միայն ասպիրանտուրայի հիմնադրումից հետո՝ 1928 թ. սեպտեմբերից: Առաջին տարում տրվել է ասպիրանտի 8 տեղ, որից 5-ը՝ պատմագրական բաժնին (պատմական մատերիալիզմի, լեզվի պատմության, հայոց պատմության և ընդհանուր պատմության գծով): Առաջին ասպիրանտներ են հաստատվում պատմագրական բաժնի շրջանավարտներ Աբգար Հովհաննիսյանը՝ ընդհանուր պատմության գծով, Հայկ Գյուլի-Քեխյանի և Հայկ Ազատյանի ղեկավարությամբ, նույն բաժնի 1926-27 թթ. ուս. տարվա շրջ-

ջանավարտ Արարատ Ղարիբյանը՝ լեզվի պատմության գծով (ղեկավար՝ պրոֆ. Հ. Աճառյան), Հենրի Գաբրիելյանը՝ պատմական մատերիալիզմի գծով, իսկ Նորայր Դաբաղյանը՝ ընդհանուր գրականության գծով: 1930-ական թվականների սկզբներին ֆակուլտետում ստեղծվում են նոր ամբիոններ, կարդացվում են ընդհանուր և հատուկ դասընթացներ: 1930-1931 թթ. ուսումնական գործընթացը ներդաշնակ կազմակերպելու համար ստեղծվեցին հետևյալ ամբիոնները՝ ԽՍՀՄ պատմության (վարիչ՝ Վահան Ռշտունի), ընդհանուր պատմության (վարիչ՝ Կարո Ղազարյան), հայ ժողովրդի պատմության (վարիչ՝ Հակոբ Զորյան), հնագիտության (վարիչ՝ Աշխարհիբեկ Քալանթար), հայոց լեզվի ամբիոն (վարիչ՝ Հ. Աճառյան), ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոն (վարիչ՝ Գ. Ղափանցյան), ժողովրդական բանահյուսության ամբիոն (վարիչ՝ Մ. Աբեղյան), հայ հին և նոր գրականության ամբիոն (վարիչ՝ Ա. Տերտերյան), մանկավարժության ամբիոն (վարիչ՝ Գ. Էդիլյան):

1933 թ. հիմնադրվեց մանկավարժական ինստիտուտը, որի հետևանքով պատմության, գրականության և լեզվի մասնագիտությունների հիմքի վրա համալսարանում ձևավորվեց պատմալեզվագրական ֆակուլտետը՝ 3 բաժիններով: Դեկան նշանակվեց հանրապետությունում գիտական մեծ ճանաչում ունեցող մտավորական ու մեծ հեղինակություն վայելող, բոլորի կողմից սիրված ու հարգված Վահան Ռշտունին (1933-1936): Մեկ տարի անց ֆակուլտետը ստացավ պատմագրական անունը (ուսումնառության շրջանը 5 տարի էր): 1936-1937 ուստարում պատմագրական ֆակուլտետի հիմքի վրա ստեղծվեցին պատմության և բանասիրության ինքնուրույն ֆակուլտետները:

Հետագայում բանասիրականից են առանձնացել և ինքնուրույն ֆակուլտետներ դարձել արևելագիտության, ռուս բանասիրության, ռոմանագերմանական բանասիրության, ժուռնալիստիկայի ֆակուլտետները:

Բանասիրականի անցած ուղին արժևորվում է հայագիտության բնագավառում ձեռք բերած ակնառու նվաճումներով, բանասերի, հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում ստացած տասնյակ հազարավոր շրջանավարտների հայրենանվեր աշխատանքով:

Բանասիրականի հիմնադիր դասախոսներից շատերը

բարձրագույն կրթություն էին ստացել արտասահմանյան նշանավոր համալսարաններում, որոնցում ձեռք բերած հիմնարար գիտելիքները հաջողությամբ շաղախել են հայրենի գիտության և մշակույթի հազարամյա ավանդների հետ: Բանասիրականի առաջին դասախոսներն են եղել մեր գիտության մեծ երախտավորներ Հակոբ Մանանդյանն ու Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանն ու Գրիգոր Ղափանցյանը, Սիմոն Հակոբյանն ու Արսեն Տերտերյանը: Բանասիրական ֆակուլտետի առաջին երախտավորների ավանդները ստեղծագործաբար շարունակեցին շատ դասախոսներ ու գիտնականներ՝ Մ. Մկրյանը, Գ. Սևակը, Հ. Մամիկոնյանը, Ս. Սողոմոնյանը, Էդ. Աղայանը, Հր. Թամրազյանը, Էդ. Ջրբաշյանը, Գ. Ջահուկյանը, Վ. Նալբանդյանը, Հ. Բարսեղյանը, Է. Աբաջյանը, Գ. Անանյանը, Ս. Ղազարյանը, Ս. Բազյանը, Ա. Սուքիասյանը, Մ. Ասատրյանը, Ռ. Իշխանյանը, Ս. Գյուլբուդաղյանը, Ա. Շարուրյանը, Ա. Մարգարյանը, Հ. Պետրոսյանը, Է. Ավետյանը, Գ. Գարեգինյանը, Պ. Պողոսյանը, Հ. Մախչանյանը, Հ. Հարությունյանը, Պ. Խաչատրյանը, Ս. Աբաբեկյանը, Ռ. Ղազարյանը, Գ. Մանուկյանը և ուրիշներ: Ֆակուլտետի գիտամանկավարժական զարգացման գործում մեծ ավանդ ունեն պրոֆեսորներ Հ. Բարսեղյանը, Ս. Գալստյանը, Ա. Պապոյանը, Խ. Բաղիկյանը և այլք:



Ֆակուլտետի գիտական և կրթական գործընթացը մեր օրերում հաջողությամբ են իրականացնում դոկտոր պրոֆեսորներ Ա. Ավագյանը (ֆակուլտետի դեկան), Վ. Գաբրիելյանը, Լ. Եզեկյանը, Լ. Հովսեփյանը, Ժ. Քալանթարյանը, Ս. Մուրադյանը, Ռ. Սաքապետոյանը, Յու. Ավետիսյանը, Ն. Հարությունյանը, Լ. Մնացականյանը, Մ. Ջանփոլադյանը, Կ. Աղաբեկյանը, Վ. Սաֆարյանը, Ա. Մակարյանը, Ա. Աբաջյանը, Զ. Ավետիսյանը, Ս. Մխիթարյանը, ինչպես նաև տասնյակ ու տասնյակ դոցենտներ, ասիստենտներ, դասախոսներ:

Հայ բանասիրության ֆակուլտետը տասնամյակներ շարունակ գտնվում է ուսումնական և կրթական ակտիվ գործու-

նեության կյանքի մի շարք բնագավառներում: Նշանակալից է, որ 1988-ի մեր ազգային շարժման ակունքներից մեկը սկզբնավորվեց հենց բանասիրական ֆակուլտետում: Մենք նկատի ունենք այն հանգամանքը, որ 1988-ի փետրվարի 22-ին Լեռանային Ղարաբաղի ազգային գործիչ ու վաստակավոր դերասանուհի Ժաննա Գասպարյանի հետ ունեցած հանդիպումից հետո ֆակուլտետի ուսանողությունն ուղևորվեց Օպերա և սկիզբ դրվեց ամիսներ տևած նստացույցերին: Ֆակուլտետի դասախոսական և ուսանողական ուժերի օգնությամբ կազմակերպվել են ծառատունկեր Արցախում, պոեզիայի փառատոներ, Շուշիում, դասախոսությունների շարքեր հանրապետության դպրոցներում և զինվորական զորամասերում, ամառային դպրոցներ սփյուռքահայերի համար, դասական ու արդի գրողների գրքերի քննարկումներ: Վերջին տարիներին ֆակուլտետ են հրավիրվում նշանավոր գրողներ, արտասահմանից ժամանած մշակութային գործիչներ, ովքեր բաց դասեր են վարում տարբեր թեմաներով:

Ֆակուլտետի առաջատար դասախոսները հեղինակներ են բուհական ու դպրոցական մի շարք դասագրքերի: Ֆակուլտետում տարիներ շարունակ մշակվել և իրականացվել են գիտական տասնյակ թեմաներ: Մի շարք դասախոսներ գիտական զեկուցումներով հանդես են եկել արտասահմանյան երկրներում: Հայ բանասիրության ֆակուլտետին կից գործում է հայ գրականություն և ժուռնալիստիկա մասնագիտությունների մասնագիտական աստիճան շնորհող խորհուրդը (նախագահ՝ բ.գ.դ., պրոֆ. Ժ. Քալանթարյան), ֆակուլտետ համագործակցում է Հայաստանի գրողների միության, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Մ. Աբեղյանի գիտական ինստիտուտի, Մ. Մաշտոցի անվան մատենադարանի, Խ. Աբովյանի, Հովհ. Թումանյանի, Եղ. Չարենցի, Գրականության և արվեստի թանգարանների հետ, մշակում գիտական գործունեության ծրագրեր: Ֆակուլտետի բարի ավանդութներից մեկն է շրջանավարտների դիպլոմների հանձնումը Հայաստանի պատմական և մշակութային նշանավոր վայրերում:

Ֆակուլտետի դասախոսների հեղինակած դասագրքերն ու ձեռնարկները, նրանց կազմած ու մշակած ուսումնական ծրագրերը, լեզվի ու գրականության դասավանդման մեթոդիկաները լայնորեն հայտնի են հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս և օգտագործվում են տարբեր բուհերում, կրթական օջախներում և դպրոցներում:

Հայ բանասիրության ֆակուլտետն ունի յոթ ամբիոն: Ֆակուլտետի բակալավրատում գործում է երկու բաժին՝ «հայոց լեզու և գրականություն» և «սոցիալական մանկավարժություն»: Մագիստրատուրայում գործում են «հայոց լեզու և գրականություն» և «կրթության կազմակերպում» մասնագիտական ծրագրերը: Ուսումնական գործընթացի կազմակերպմանը զուգահեռ ֆակուլտետում կատարվել են գիտական ուսումնասիրություններ, որոնք լուրջ ներդրումներ են հայագիտության գրեթե բոլոր ուղղություններում, կազմակերպվել են միջազգային հանրապետական գիտական նստաշրջաններ և կոնֆերանսներ: Բանասիրականի շրջանավարտները հաջողությամբ աշխատում են Հայաստանի և Սփյուռքի կրթական ու մշակութային կենտրոններում, նպաստում գիտական կյանքի վերելքին ու հետագա զարգացմանը: Ֆակուլտետը տվել է մայրենի լեզվի ու գրականության տասնյակ հազարավոր մասնագետներ, գիտնականներ, ուսուցիչներ, նշանավոր գրողներ՝ Հովհաննես Շիրազ, Պարույր Սևակ, Վահագն Դավթյան, Սիլվա Կապուտիկյան, Գուրգեն Մահարի, Նաիրի Զարյան, Խաչիկ Դաշտենց և այլք:

Բանասիրական ֆակուլտետն են ավարտել աշխարհահռչակ բռնցքամարտիկ Դավիթ Թորոսյանը, արցախյան ազատամարտի նահատակ Սամվել Գևորգյանը և շատ այլ ճանաչված դեմքեր:

Բանասիրական ֆակուլտետի տարբեր տարիների շրջանավարտներից շատերը մշակույթի, գիտության, հասարակական, քաղաքական բնագավառների հայտնի գործիչներ են՝ Գալուստ Սահակյան, Լևոն Անանյան, Պիոն Հակոբյան, Արշալույս Ղազինյան, Սերգեյ Սարինյան, Ալբերտ Մուշեղյան, Պերճ Ստեփանյան, Լևոն Սարգսյան, Ալբերտ Կոստանյան, Ալբերտ Խառատյան, Սարգիս Հարությունյան, Ռոլանդ Շառոյան, Արտեմ Սարգսյան, Վանիկ Սանթրյան, Լիլիթ Գալստյան, Աղվան Վարդանյան, Գայանե Սողոմոնյան, Լիլիթ Արզումանյան,

Նիկոլայ Գրիգորյան, Էդվարդ Միլիտոնյան, Հովիկ Հովեյան, Սերգո Երիցյան, Գուրգեն Մելիքյան, Կարո Կարապետյան, Հրաչյա Հովհաննիսյան, Բաղիշ Հովսեփյան, Մարո Մարգարյան, Անահիտ Սահինյան, Հովհաննես Մելքոնյան, Լևոն Միրիջանյան, Լևոն Մկրտչյան, Վարդգես Պետրոսյան, Քրիստափոր Թափալցյան, Շահեն Թաքիկյան, Վիգեն Խեչումյան, Ռաֆայել Արամյան, Վալտեր Արամյան, Վիկտոր Բալայան, Թաքուլ Բոլատչյան, Վահագն Մուղնեցյան, Զարգանդ Դարյան, Անահիտ Պարսամյան, Արտաշես Քալանթարյան, Վահագն Մկրտչյան, Դավիթ Մուրադյան, Հենրիկ Բախչինյան, Ավիկ Իսահակյան, Նորայր Ադալյան, Հենրիկ Էդոյան, Հովհաննես Գրիգորյան, Դավիթ Հովհաննես, Նաիրա Զահրաբյան, Ալվարդ Պետրոսյան, Ռուբեն Հակոբյան, Մարգարիտ Եսայան, Լարվենտի Հովհաննիսյան, Վազգեն Համբարձումյան, Վիկտոր Կատվալյան, Ռուբեն Մաթևոսյան, Մերուժան Տեր-Գուլանյան, Յուրի Սահակյան, Արնշատ Ավագյան, Արտեմ Հարությունյան, Հրաչյա Թամրազյան, Կարինե Խոդիկյան, Հրաչյա Մաթևոսյան, Հակոբ Ավետիքյան, Ղուկաս Սիրունյան, Համլետ Կարճիկյան, Վահագն Գրիգորյան, Էդվարդ Խաչիկյան, Պետրոս Դեմիրճյան, Արմեն Հովհաննիսյան, Նաղաշ Մարտիրոսյան, Հրաչ Բարթիկյան, Լենդրուշ Ալոյան, Մուշեղ Հովսեփյան, Դավիթ Պետրոսյան, Գագիկ Հովհաննիսյան, Արա Առաքելյան, Երվանդ Տեր-Խաչատրյան և այլք:

Տարբեր տարիներ բանասիրական ֆակուլտետը ղեկավարել են Վ. Ռշտունին, Մ. Սանթրոսյանը, Ս. Հակոբյանը, Հովհ. Մամիկոնյանը, Էդ. Աղայանը, Ս. Բազյանը, Մ. Մկրյանը, Հ. Բարսեղյանը, Գ. Անանյանը, Վ. Գաբրիելյանը: Այժմ ֆակուլտետի դեկանն է պրոֆ. Արծրուն Ավագյանը:

Պատմության և բանասիրության ֆակուլտետների առանձնացումից հետո պատմության ֆակուլտետի առաջինի դեկան դարձավ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ Հակոբ Զորյանը (1936-1937): Ֆակուլտետը Հ. Զորյանից հետո գլխավորել է 1931 թ. շրջանավարտ Սերոբ Պողոսյանը՝ 1937 թ. մինչև 1938 թ. հուլիսը և 1939 թ. հոկտեմբերից մինչև 1941 թ. հոկտեմբերը, ապա երկու անգամ ևս՝ 1955-1960 թթ. և 1964-1968 թթ.-ին, ընտրվել է դեկանի պաշտոնում: Նա այդ պաշտոնում ամենաշատ ընտրված դեկանն է եղել:

1938 թ. հուլիսից մինչև 1939 թ. հոկտեմբեր ֆակուլտետի դեկան է եղել երիտասարդ պատմաբան Ներսես Պողոսյանը, որը 1941 թ. զոհվեց Հայրենական մեծ պատերազմում: 1941-1943 թթ. ֆակուլտետը ղեկավարել է 1935 թ. շրջանավարտ, տաղանդավոր պատմաբան, դոցենտ Հայկազ Ժամկոչյանը, որը 1945-1955 թթ. կրկին ղեկավարել է պատմության ֆակուլտետը: 1943-1944 թթ. այդ պաշտոնը զբաղեցրել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, ապա 1944-1945 թթ.՝ դոցենտ Բենիամին Հարությունյանը, այնուհետև՝ դոցենտ Ռաֆիկ Մովսիսյանը (1960-1964) և (1974-1980), պրոֆեսոր Գարսևան Շառոյանը (1968-1970), դոցենտ Հայրապետ Պետրոսյանը (1970-1974), պրոֆեսոր Հայկ Ղազարյանը (1980-1983), դոցենտ Մառլեն Հովհաննիսյանը (1983-1993), պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանը (1993-2003), պրոֆեսոր Հայկ Ավետիսյանը (2004-2009) և պրոֆեսոր Էդիկ Մինասյանը (2009 թ.-ից):

1936-1938 թթ. երկրում տիրող անօրինություններն իրենց ազդեցությունն ունեցան նաև պատմության ֆակուլտետի վրա: Անհիմն մեղադրանքով ձերբակալվեց և աքսորվեց ֆակուլտետի դեկան, հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հակոբ Զորյանը, որը վախճանվեց 1942 թ. աքսորավայրում, ապա արդարացվեց հետմահու:

Պատմության ֆակուլտետն ունի յոթ ամբիոն: Հնագույն և կարևորներից է հայոց պատմության ամբիոնը, որն ավելի քան մեկուկես տասնամյակ առաջ կրում էր հայ ժողովրդի պատմության ամբիոն անվանումը: Այն գլխավորել է նշանավոր պատմաբան, ակադեմիկոս Հ. Մանանդյանը (1921-1925): Այնուհետև ղեկավարվել է պրոֆեսոր Հակոբ Զորյանի (1925-1937), պրոֆեսոր Սերոբ Պողոսյանի (1937-1941), դոցենտ Հայկազ Ժամկոչյանի (1941-1943), պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանի (1944-1949), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի (1949-1954), պրոֆեսոր Վարդան Պարսամյանի (1954-1977), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Լենդրուշ Խուրշուդյանի (1977-1999), Հրաչիկ Սիմոնյանի (1999-2003), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանի (2003 -2013) և 2013 թ.-ից պ.գ.թ., պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի կողմից:

Ֆակուլտետի մյուս ամբիոնները կազմավորվել են ավելի ուշ: 1930-1931 ուստարում ստեղծվել է ընդհանուր պատմության ամբիոնը, որը գլխավորում էր Մոսկվայի համալսարանի շրջանավարտ Կարո Ղազարյանը (1931-1937): Այնուհետև նրա աշխատանքները ղեկավարել են նույն բուհի տաղանդավոր շրջանավարտ Ստեփան Ներսիսյանը (1938-1952)՝ հին աշխարհի պատմության ամբիոն, ՀԽՍՀ ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանը (1938-1952)՝ նոր և նորագույն պատմության ամբիոն, իսկ (1952-1957)՝ ընդհանուր պատմության ամբիոն, ապա՝ պրոֆեսորներ Խաչիկ Բաղալյանը (1957-1979), Վալտեր Դիլոյանը (1979-1998), որոնց հաջորդել է պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանը:

1992 թ. ընդհանուր պատմության և ԽՍՀՄ պատմության ամբիոնների հիմքի վրա ձևավորվեցին հին և միջին դարերի պատմության (վարիչ՝ պրոֆեսոր Վալտեր Դիլոյան) և նոր և նորագույն պատմության (վարիչ՝ պրոֆեսոր Հովիկ Մելիքսեթյան) ամբիոնները, որոնցից էլ առանձնացել է ընդհանուր պատմության ամբիոնը (1997թ.՝ վարիչ, պրոֆ. Վ. Դիլոյան), որը 2005թ.-ից վերանվանվեց համաշխարհային պատմության ամբիոն, և Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնը (վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյան (1997-2000), որին հաջորդեց պրոֆեսոր Հենրիկ Աբրահամյանը (2000-2007), իսկ վերջինիս՝ պրոֆեսոր Հայրապետ Մարգարյանը 2007 թ.-ից:

ԽՍՀՄ պատմության ամբիոնը, որը նույնպես ստեղծվել է 1930-1931 ուստարում, 40 տարի անընդմեջ ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Վահան Ռշտունին, որը, լինելով համալսարանի հիմնադիր դասախոսներից, մեծ ծառայություններ ունի ոչ միայն ամբիոնի, այլև պատմության ֆակուլտետի ստեղծման, նրա ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործում: Նա հանրապետությունում ՍՍՀՄ պատմության դասընթացի առաջին ստեղծողն էր: Հանրապետության պատմաբան կադրերի մեծ մասը, համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոսները (հին և միջին սերնդի) նրա սաներն են: Նա ոչ միայն ճանաչված գիտնական էր, այլև տաղանդավոր մանկավարժ: Նրան հաջորդել են պրոֆեսորներ Գարսևան Շառոյանը (1970-1976), Հայկ Ղազարյանը (1976-1988) և Հովիկ Մելիքսեթյանը (1988-1992): Այնուհետև ամբիոնը վերանվանվեց նոր և նորագույն պատմության ամբիոն, իսկ 1997 թ.-ից նրա հիմքի վրա ձևավորվեց Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնը: Վերջինիս հիմքերից էր նաև ԽՄԿԿ պատմության (արդի դարաշրջանի քաղաքական պատմության) ամբիոնը: Այն սկզբից կոչվում էր մարքսիզմ-լենինիզմի ամբիոն, որը (1938-1946) ղեկավարում էր պրոֆեսոր Ղազար Վարդապետյանը: Նրան փոխարինեց համալսարանի ռեկտոր Հովհաննես Պողոսյանը (1946-1948), այնուհետև՝ դոցենտներ Օգսեն Հովհաննիսյանը (1948-1953), Ռաֆիկ Մովսիսյանը (1953-1957), պրոֆեսորներ Հայկարամ Ութմազյանը (1957-1960 և 1964-1970), Աբել Սիմոնյանը (1960-1964), Փայլակ Ենգոյանը (1970-1978), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ծատուր Աղայանը (1978-1982) և պրոֆեսոր Սերգեյ Ամիրյանը (1982-1997): Ամբիոնը 1992 թ.-ից կոչվեց արդի քաղաքական պատմության ամբիոն, որը իբրև առանձին բաժին 1997 թ.-ից մտավ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի կազմի մեջ:

Հնագիտության ամբիոնը ձևավորվել է դեռևս 1924-1925 թթ., վերջնականապես համալրվել է 1930-1931 թթ.: Նրա առաջին վարիչն է եղել Աշխարհբեկ Քալանթարը (1924-1937)՝ ֆակուլտետի հիմնադիր դասախոսներից, հնագիտության և հին արևելքի պատմության լավագույն մասնագետներից մեկը: Այդ պաշտոնում նրան փոխարինել է ճանաչված մանկավարժ, հնագետ Սմբատ Տեր-Ավետիսյանը (1937-1942):

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ուսանողության ընդհանուր թվի կրճատման հետևանքով ամբիոնը փակվեց: Այն վերականգնվեց 1968 թ., սակայն արդեն որպես հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության ամբիոն, որի աշխատանքները մինչև 1976 թ. գլխավորել է պրոֆ. Աշոտ Աբրահամյանը: Այնուհետև ամբիոնի վարիչներ են եղել պրոֆեսորներ՝ Տելեմակ Խաչատրյանը (1976-1983), Ստեփան Եսայանը (1983-2001), Իգիթ Ղարիբյանը (2001-2009) և Հայկ Ավետիսյանը (2009 թ.-ից):

1989 թ. ձևավորվեց ազգագրության ամբիոնը, որի առաջին վարիչը դարձավ դոցենտ Յուրի Մկրտումյանը (1989-1994): Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպան նշանակվելու կապակցությամբ ամբիոնի վարիչի պաշտոնում նրան փոխարինեց դոցենտ Հրանուշ Խառատյանը (1994-2000), որին 2000 թ.-ից նորից փոխարինեց Յուրի Մկրտումյանը (մինչև 2004 թ.), որից հետո ամբիոնը միացվեց հնագիտության ամբիոնին և անվանվեց հնագիտության և ազգագրության ամբիոն:

Ֆակուլտետի երիտասարդ ամբիոններից է հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնը, որը ծնունդ առավ 1996 թ.-ին: Այն մինչև օրս գլխավորում է արվեստագիտության դոկտոր Լևոն Չուգասզյանը:

Ֆակուլտետի մյուս երիտասարդ ամբիոնը մշակութաբանության ամբիոնն է, որը գործում է 2007 թ.-ից, վարիչն է հնագետ, դոկտոր, պրոֆ. Համլետ Պետրոսյանը: Այն ձևավորվել է ֆակուլտետի կազմում 2002 թ.-ից գործող մշակութաբանության բաժնի հիմքի վրա:

Ֆակուլտետի ամենաերիտասարդ ամբիոնը սփյուռքագիտության ամբիոնն է, որը հիմնադրվել է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում 2008 թ.-ին: Նրա հիմնադիր վարիչն է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Ավետիսյանը: Ամբիոնը 2013 թ. տեղափոխվեց պատմության ֆակուլտետ: Այժմ նրա վարիչն է պատմական գիտությունների դոկտոր Արման Եղիազարյանը:

Պատմության ֆակուլտետը ներկայումս կազմված է մասնագիտական 4 բաժիններից՝ պատմություն, արվեստի պատմություն, մշակութաբանություն և կովկասագիտություն: Սակայն իր գոյության ընթացքում նա ունեցել է նաև փիլիսոփայության (1964 թ.-ից) և միջազգային հարաբերությունների պատմության և տեսության (1993 թ.-ից) բաժիններ, որոնք այնուհետև վերածվեցին առանձին ֆակուլտետների. փիլիսոփայությունը՝ 1983 թ.-ից, իսկ միջազգային հարաբերությունները՝ 1998 թ.-ից: 1970 թ. պատմության ֆուլտետի կազմում ստեղծվել է փիլիսոփայության պատմության ամբիոնը, որը մինչև 1977 թ. գլխավորել է պրոֆ. Հենրի Գաբրիելյանը: 1977-1978 թթ. ամբիոնի վարիչն է եղել պրոֆ. Գևորգ Խոլոպյանը: Նրան հաջորդել են պրոֆեսորներ Գուրգեն Մխիթարյանը (1979-1989), Հրաչիկ Միրզոյանը (1989-2000) և Սեյրան Զաքարյանը (2000 թ.-ից): Փիլիսոփայության ֆակուլտետի ստեղծումից հետո ամբիոնը նրա կազմում է:

1993 թ. ստեղծվել է միջազգային հարաբերությունների տեսության և պատմության ամբիոնը (վարիչ՝ պրոֆ. է. Զոհրաբյան), որը 1998 թ. միջազգային հարաբերությունների ֆակուլտետի կազմում է: 2013 թվականից ամբիոնի վարիչն է պատմության ֆակուլտետի շրջանավարտ դոցենտ Մարութ Վարդազարյանը:

Երևանի պետական համալսարանը իր առաջին պատմաբան-բանասեր շրջանավարտներին կյանքի ուղեգիր տվեց 1925 -ին: Նրանք ընդամենը 29-ն էին, և բոլորն էլ անցան ուսուցչական աշխատանքի[14]: Մինչև 1930 թ. համալսարանի պատմաբան-բանասերների թիվը հասավ 181-ի: Դրանից հետո համալսարանը պատրաստել է միայն բանասերներ ու պատմաբաններ: Մինչև 1940 թ. ֆակուլտետը պատրաստել է 220 պատմաբան[15]: Հայրենական մեծ պատերազմի շրջանում հասկանալի պատճառներով պատմության ֆակուլտետի ուսանողների թիվը կտրուկ նվազեց: Այսպես, եթե 1941 թ. ֆակուլտետը տվեց 33, ապա 1942 թ.՝ 13, 1943 թ.՝ 12, 1944 թ.՝ 18 շրջանավարտ: Շատ դասախոսներ, ասպիրանտներ և ուսանողներ մեկնեցին ռազմաճակատ և պատվով կատարեցին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ: Ռազմի դաշտում հերոսի մահով ընկան ֆակուլտետի դեկան Ներսես Պողոսյանը, դասախոսներ Միսակ Արմենյանը, Արամայիս Աբգարյանը, Գրիգոր Կուլօղլյանը, ասպիրանտներ Ռուբեն Փորսուղյանը, Ասքանազ Պողոսյանը և շուրջ 30 ուսանողներ[16]: Պատերազմից հետո ֆակուլտետի ուսանողների և ասպիրանտների թիվը կտրուկ աճեց. 1941-1950 թթ. 207 էր, 1955-1960 թթ. հասավ 388-ի, 1961-1970 թթ.՝ 361 -ի, իսկ 1971-1981 թթ.՝ 636-ի: Հիմնադրման օրից մինչև 1981 թ. ֆակուլտետը երկրին տվել է 2000-ից ավելի պատմաբան ու փիլիսոփա կադրեր: Ներկայումս Երևանի պետական հա-

[14] Տե՛ս Երևանի պետական համալսարան, Երևան, 1981 թ., էջ 136:
[15] Տես նույն տեղում:
[16] Տե՛ս Ենգոյան Փ., Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, Երևան, 1975 թ., էջ 38-40:

մալսարանի պատմության ֆակուլտետում սովորում են 1600-ից ավելի ուսանողներ (առկա և հեռակա ուսուցմամբ), որոնցից միայն առաջին կուրսեցիները շուրջ 300 են: 2002 թ. դրությամբ ֆակուլտետը երկրին տվել էր 4000-ից ավելի մասնագետներ:

Հետպատերազմյան տարիներին պատմության ֆակուլտետում բացվում է հեռակա բաժին (մինչև 1961 թ.), իսկ 1960 թթ. վերջերից՝ երեկոյան բաժին: 1950-ական թվականներից մինչև 1980 թ. ֆակուլտետը 300-ից ավելի շրջանավարտներ է տվել նաև երեկոյան ուսուցման գծով: Այսպիսով՝ համալսարանական կրթության ընդհանուր աճի հետ ավելացավ պատմության ֆակուլտետի, պատմաբան մասնագետների թիվը: 1964-1965 ուստարում պատմության ֆակուլտետում բացված փիլիսոփայության բաժինը գիտամանկավարժական կադրեր էր պատրաստում փիլիսոփայության, սոցիոլոգիայի, աթեիզմի պատմության և տեսության գծով: Բաժինը շրջանավարտներ է տվել նաև հոգեբանության գծով: Ստեղծման օրվանից մինչև 1983 թ. բաժինը ավարտել են շուրջ 500 փիլիսոփա մասնագետներ: 1993 թ.-ից միջազգային հարաբերությունների մասնագիտությամբ բաժինը տվել է 300-ից ավելի շրջանավարտ: Դեռևս 1963-1964 թթ.-ից ֆակուլտետի ընդունելության մեջ կատարված փոփոխություններով ուսումնառությունը սահմանվեց 4 ուստարի. 1963 և 1964 թթ. ընդունվածները ավարտեցին միասին՝ առաջինները 5 տարով, երկրորդները՝ 4: Այդ պատճառով 1969 թ. ֆակուլտետը, բացի փիլիսոփայության բաժնից, պատմաբան շրջանավարտներ չունեցավ:

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի շրջանավարտները մեծ դեր են կատարել հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի, ժողովրդական կրթության ու գիտության զարգացման բոլոր ոլորտներում: Շրջանավարտների ճնշող մասը աշխատել է ժողովրդական կրթության ասպարեզում, հանրապետության և Անդրկովկասի հայաբնակ վայրերի դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում: Նրանցից շատերը վաստակավոր ուսուցիչներ են: Անգնահատելի է պատմության ֆակուլտետի շրջանավարտների ծառայությունը հանրապետության պատմության, փիլիսոփայության, միջազգային հարաբերությունների, հնագիտության, ազգագրության, արվեստաբանության, մշակութաբանության, կովկասագիտության և սփյուռքագիտության ոլորտների գիտության զարգացման, ինչպես նաև դասախոսական, կուսակցական և պետական աշխատանքի բնագավառներում: Հանրապետության գիտնականների, ՀՀ ԳԱԱ-ի պատմության, փիլիսոփայության, արևելագիտության, հնագիտության և ազգագրության, արտաքին գործերի նախարարության, Մատենադարանի, արխիվների, թանգարանների գիտական աշխատողների, համալսարանի և մյուս բուհերի պատմության, փիլիսոփայության, միջազգային հարաբերությունների, արվեստի, մշակույթի դասախոսների զգալի մասը ԵՊՀ պատմության ֆակուլտետի սաներ են: Ֆակուլտետի շրջանավարտների 500 հոգուց ավելին ստացել են գիտական աստիճաններ և կոչումներ, շուրջ 80-ը՝ պատմական գիտությունների դոկտորներ են, պրոֆեսորներ, 400-ից ավելին՝ գիտությունների թեկնածուներ: Հանրապետությունում 1980-ական թ. սկզբին փիլիսոփայության 28 դոկտորներից 19-ը, 226 գիտության թեկնածուներից 174-ը նույնպես պատմության ֆակուլտետի սաներ են: Գիտակազմակերպչական ակնառու ծառայություններ ունեն ֆակուլտետի շրջանավարտներ, ակադեմիկոսներ Աբգար Հովհաննիսյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Լևոն Խաչիկյանը, Սուրեն Երեմյանը, Բաբկեն Առաքելյանը, Ծատուր Աղայանը, Գևորգ Ղարիբջանյանը, Հրաչիկ Սիմոնյանը, Լենդրուշ Խուրշուդյանը, Հրաչ Բարթիկյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամներ Վազգեն Չալոյանը, Մորուս Հասրաթյանը, Վահան Ռշտունին, Բաբկեն Հարությունյանը, Արամ Սիմոնյանը, Աշոտ Մելքոնյանը և բազմաթիվ պրոֆեսորներ ու դոցենտներ:

Հայ պատմագրությունը և փիլիսոփայական միտքը հարստացել են պրոֆեսորներ Ա. Աբրահամյանի, Կ. Ղաֆադարյանի, Վ. Դիլոյանի, Հ. Նաջարյանի, Գ. Մխիթարյանի, Գ. Խոլոպյանի, Հ. Միրզոյանի, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Բ. Առաքելյանի, Ծ. Աղայանի, Գ. Ղարիբջանյանի, Հ. Ավետիսյանի, Հ. Սիմոնյանի, Լ. Խուրշուդյանի, դոցենտներ

Ռ. Մովսիսյանի, Ե. Միրզախանյանի, Մ. Հովհաննիսյանի հիմնարար աշխատություններով:

Ֆակուլտետում երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում անուրանալի ավանդ են ունեցել ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանը, Աբգար Հովհաննիսյանը, Մկրտիչ Ներսիսյանը, ՀԽԱՀ ԳԱ թղթակից անդամ Վահան Ռշտունին, պրոֆեսորներ Կ. Ղաֆադարյանը, Հ. Ութմազյանը և ուրիշներ: Վերջին տարիներին հայ պատմագրության զանազան հարցերի շուրջ մնայուն աշխատություններ ստեղծեցին գիտության նվիրյալներ, ակադեմիկոսներ՝ Հ. Սիմոնյանը, Վ. Բարխուդարյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ՝ Բ. Հարությունյանը, Ա. Սիմոնյանը, Ա. Մելքոնյանը, Լ. Աբրահամյանը, Մ. Հասրաթյանը, պրոֆեսորներ՝ Ի. Ղարիբյանը, Պ. Հովհաննիսյանը, Հ. Միրզոյանը, Մ. Մուրադյանը, Է. Զոհրաբյանը, Հ. Մարգարյանը, Հ. Աբրահամյանը, Լ. Չուգասզյանը, Ա. Ատեփանյանը, Է. Մինասյանը, Հ. Ավետիսյանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Պետրոսյանը, Ռ. Նահապետյանը, դոցենտներ՝ Ա. Մովսիսյանը, Ա. Պետրոսյանը, Յու. Հովսեփյանը, Հ. Հակոբյանը, Է. Դանիելյանը, Հ. Գրիգորյանը և ուրիշներ: Ներկայումս ֆակուլտետում աշխատում է գիտնական պատմաբանների, հնագետների, արվեստաբանների, մշակութաբանների նոր սերունդ, որոնց գիտական աշխատանքներին մեծապես աջակցում է Հայագիտական կենտրոնը (տնօրեն՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Սիմոնյան): Այդ սերնդի գիտնականներից են՝ Ա. Եղիազարյանը, Մ. Գաբրիելյանը, Ա. Մովսիսյանը, Ժ. Մանուկյանը, Ա. Ղարիբյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Գնունին, Ա. Բոբոխյանը, Ա. Թադևոսյանը, Ս. Վարդանյանը, Զ. Հակոբյանը, Հ. Մելքումյանը և ուրիշներ:

Պատմության ֆակուլտետի շրջանավարտներից շատերը դարձել են հանրապետությունում և նախկին Միության այլ վայրերում կուսակցական, պետական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպության ղեկավար գործիչներ, արտադրության, կրթության, մշակույթի տարբեր բնագավառի կազմակերպիչներ: Նրանցից կարելի է առանձնացնել Վիգեն Սարգսյանին, Իշխան Զաքարյանին, Սպարտակ Բաղդասարյանին, Վլադիմիր Դարբինյանին, Արմո Հարենցին, Անատոլի Մկրտչյանին, Լյուդվիգ Ղարիբջանյանին, Լևոն Մկրտչյանին, Սպարտակ Սեյրանյանին, Ռազմիկ Մարտիրոսյանին, Արսեն Համբարձումյանին, Ֆելիքս Ցոլակյանին, Արամ Սիմոնյանին, Ռուբեն Միրզախանյանին, Աշոտ Մելքոնյանին, Պավել Ավետիսյանին, Արսեն Քարամյանին, Սամվել Առաքելյանին, Հայկ Չոբանյանին, Համբարձում Գալստյանին, Կտրիճ Սարդարյանին, Արա Սահակյանին, Ալեքսան Հակոբյանին, Հայկ Դեմոյանին, Գեղամ Հարությունյանին, Ֆիրդուս Զաքարյանին, Աշոտ Գալոյանին, Սամվել Մկրտչյանին, Վիկտոր Դալլաքյանին, Համլետ Հարությունյանին, Բագրատ Սարգսյանին, Արամ Սաֆարյանին, Սամվել Ֆարմանյանին, Շիրակ Թորոսյանին, Արմինե Սարգսյանին, Ռուբեն Ազիզբեկյանին, Գուրգեն Հովհաննիսյանին, Կառլեն Ավետիսյանին, Գեղամ Պետրոսյանին, Ալեքսան Բաղդասարյանին, Լավրենտի Բարսեղյանին, Հենզել Մանուչարյանին, Գարիկ Քեռյանին, Աշոտ Ենգոյանին, Սամսոն Քառյանին, Վահան Մելիքյանին, Էդուարդ Հարությունյանին, Սեյրան Զաքարյանին և այլոց:

Ներկայումս ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպմանը ուղղություն է տալիս ֆակուլտետի գիտական խորհուրդը, որի կազմում ներգրավված են բոլոր ամբիոնների վարիչները, հասարակական կազմակերպությունների ղեկավարները, գիտամանկավարժական փորձ ունեցող պրոֆեսորներն ու դոցենտները: Ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպման զուգահեռ կատարվել են գիտական ուսումնասիրություններ, որոնք լուրջ ներդրում են հայագիտության՝ մասնավորապես պատագիտության և մշակութաբանության գրեթե բոլոր ոլորտներում: Կազմակերպվել են միջազգային և հանրա-պետական գիտական նստաշրջաններ, կոնֆերանսներ: Ֆակուլտետի դասախոսների և ուսանողների ուժերով պար-բերաբար կազմակերպվում են ծառատունկեր Արցախում, դասախոսությունների շարքեր ոչ միայն Արցախում, այլև հանրապետության դպրոցներում և զինվորական զորամասերում, ամառային դպրոցներ սփյուռքահայության համար: Վերջին տարիներին ֆակուլտետ են հրավիրվում արտասահմանյան նշանավոր մասնագետներ,

մշակութային գործիչներ, ովքեր բաց դասեր են վարում տարբեր թեմաներով: Ֆակուլտետի առաջավոր դասախոսները հեղինակներ են բուհական և դպրոցական բազմաթիվ դասագրքերի: Ֆակուլտետում տա-րիներ շարունակ պետական ֆինանսավորմամբ մշակվել և իրականացվել են գիտական տասնյակ թեմաներ, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ-ում: Մի շարք դասախոսներ գիտական զեկուցումներով հանդես են եկել արտասահմանյան երկրներում: Ֆակուլտետն ակտիվորեն համագործակցում է ՀՀ ԳԱԱ պատմության, հնագիտության և ազգագրության, արվեստի և արևելագիտության ինստիտուտների, Մ. Մաշտոցի անվան մատենադարանի և Երևան քաղաքի ու պատմության պետական թանգարանների հետ: Համատեղ մշակվում և իրագործվում են բազմաթիվ գիտագործնական ծրագրեր:

Պատմության ֆակուլտետի ուսանողությունը և շատ շրջանավարտներ դասախոսների հետ անմիջապես արձագանքեցին Արցախյան շարժմանը: Ֆակուլտետը առաջիններից էր, որ կուսակցական ժողովում (կուս. կազմակերպության քարտուղար Ա. Դարբինյան) դեռևս 1987 թ. հունիսին հարց բարձրացրեց Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանի երկրամասը ՀԽՍՀ-ին վերադարձնելու մասին: Առաջնորդվելով գորբաչովյան վերակառուցման և ազգային խնդիրների լուծման կարգախոսով՝ ժողովը դիմեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարին՝ հարցին տալու դրական լուծում: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Կենտկոմը հրաժարվեց ժողովրդավարական սկզբունքներից և ազգային հարցի լուծման արդարացի պահանջից, որը առաջացրեց նոր դժգոհություններ: Հենվելով 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂ-ի մարզխորհրդի որոշման վրա՝ պահանջվեց Լեռնային Ղարաբաղը միացնել Մայր հայրենիքին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացման գործում նշանակալից դեր կատարեց ֆակուլտետի շրջանավարտ, ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը, որը զոհվեց 1992 թ. ապրիլին: Իրենց անօրինակ հերոսությամբ փայլեցին ֆակուլտետի ուսանողներ Թաթուլ Կըրպեյանը (ՀՀ ազգային հերոս), Վարդան Բախշյանը, Վարդան Դալլաքյանը, Զաքար Ավանեսյանը, Ռոման Մկրտչյանը, որոնք հերոսի մահով ընկան Լեռնային Ղարաբաղի տարբեր ճակատներում: Նրանք իրենց անսահման ու անձնազոհ հայրենասիրությամբ ցույց տվեցին, որ հայ ժողովուրդը կենսունակ և ապագա ունեցող ժողովուրդ է, քանզի ունի այդպիսի զավակներ: Արցախյան շարժմանն իրենց ակտիվ մասնակցությունը բերեցին հանգուցյալ ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, դոցենտ Յու. Մկրտումյանը և մի շարք այլ դասախոսներ:

Ֆակուլտետը շատ սպասելիքներ ունի երիտասարդ պատմաբան, արվեստագետ, մշակութաբան, կովկասագետ և սփյուռքագետ գիտնականներից: Ավելորդ չէ նշել, որ պրոֆեսորադասախոսական կոլեկտիվի գրեթե բոլոր անդամները ֆակուլտետի սաներն են: Այսօր էլ շարունակում է բարձր մնալ ֆակուլտետի կադրերի պահանջարկը: Միաժամանակ, նոր պահանջներ են ներկայացվում ֆակուլտետի մասնագիտությունների կրթական համակարգին: Սկսած 2009 թ. (2013 թ. նաև հայ բանասիրության ֆակուլտետի հետ)՝ պատմության ֆակուլտետում գեղեցիկ ավանդույթ է դարձել շրջանավարտների դիպլոմների հանձնումը Արևմտյան Հայաստանում՝ Անիի Մայր տաճարում, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում, հեռակա ուսուցման շրջանավարտներին՝ ԼՂՀ-ում՝ Գանձասարում, Ամարասում, Դաղիվանքում և այլուր:

Պատմության և հայ բանասիրության ֆակուլտետները այսօր էլ շարունակում են ԵՊՀ հիմնադիր պատմալեզվաբանական ֆակուլտետի լավագույն ավանդույթները, պահպանում են իրենց առաջատար դերը՝ մնալով հանրապետությունում պատմաբան, արվեստաբան, մշակութաբան, կովկասագետ, սփյուռքագետ և բանասեր՝ լեզվաբան, գրականագետ ու մանկավարժ կադրերի պատրաստման գլխավոր օջախներից մեկը: Ժամանակի թելադրանքն է արդի միջազգային չափանիշներին համապատասխանող մասնագետների պատրաստումը: Այս ծրագրային խնդիրների լուծմանն են նպատակաուղղված ֆակուլտետներում սկիզբ առած արմատական բարեփոխումները:

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Էդիկ Մինասյան
Բանաս. գիտ. դոկտոր, պրոֆ. Արծրուն Ավագյան

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Հայոց պատմության ամբիոնը մայր բուհի հասակակիցն է. մինչև 1930 թիվն այն պարզապես կոչվել է պատմության ամբիոն, որի աշխատակիցները դասավանդել են ոչ միայն հայոց պատմություն, այլև պատմագիտական այլ առարկաներ: 1930-1931 ուսումնական տարում նրա հիմքի վրա ձևավորվել են հայ ժողովրդի պատմության, ԽՍՀՄ ժողովուրդների պատմության, հին աշխարհի պատմության և ընդհանուր պատմության ամբիոնները: Հայոց պատմության ամբիոնի առաջին վարիչն էր անվանի հայագետ, հետագայում ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Հ. Մանանդյանը, որը մինչ այդ զբաղեցնում էր համալսարանի ռեկտորի պաշտոնը: Նրա վարիչության շրջանում (1921-1925) հունի մեջ են դրվել ուսումնական աշխատանքները, կազմվել են առաջին ուսումնական ծրագրերն ու պլանները: Հ. Մանանդյանին հաջորդել են Հ. Զորյանը (1925-1937), Ս. Պողոսյանը (1937-1941), Հ. Ժամկոչյանը (1941-1943), Ա. Աբրահամյանը (1944-1949), Մ. Ներսիսյանը (1949-1954), Վ. Պարսամյանը (1954-1977), Լ. Խուրշուդյանը (1977-1999), Հր. Սիմոնյանը (1999-2003), Բ. Հարությունյանը (2003-2013): 2013 թվականից ամբիոնի վարիչն է պ. գ. թ., պրոֆեսոր Պ. Հ. Հովհաննիսյանը:

Իր գոյության 95 տարիների ընթացքում ամբիոնում գիտամանկավարժական լայն գործունեություն են ծավալել ճանաչված հայագետներ Հ. Մանանդյանը, Լեոն, Հ. Զորյանը, Խ. Սամվելյանը, Թ. Ավդալբեգյանը, Ս. Պողոսյանը, Ա. Աբրահամյանը, Հ. Ժամկոչյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Պարսամյանը, Լ. Խուրշուդյանը, Հր. Սիմոնյանը, Ստ. Մելիք-Բախշյանը, Գ. Ղարիբջանյանը, Կ. Խուդավերդյանը և ուրիշներ:

Վերջին տարիներին ամբիոնի դասախոսական կազմում կատարվել են էական փոփոխություններ: Այն համալրվել է նոր կադրերով, որոնք հիմնականում ֆակուլտետի նախկին սաներ են: Ներկայումս ամբիոնում որպես հիմնական դասախոսներ աշխատում են պ. գ. թ., պրոֆ. Պ. Հ. Հովհաննիսյանը (ամբիոնի վարիչ), պ.գ.դ., պրոֆեսորներ Ա. Ն. Հայրունին, Հ. Ժ. Հովհաննիսյանը, Ա. Ա. Ներսիսյանը, պ.գ.թ., դոցենտներ Հ. Բ. Գրիգորյանը, Է. Գ. Դանիելյանը, Կ. Ա. Եղիազարյանը, Գ. Լ. Կիրակոսյանը, Ֆ. Կ. Ղազարյանը, Լ. Հ. Մկրտչյանը, Ա. Ե. Մովսիսյանը, պ.գ.թ., ասիստենտներ Վ. Ա. Հակոբյանը, Մ. Ս. Հովհաննիսյանը, պ.գ.թ., դասախոսներ Մ. Գ. Գևորգյանը, Տ. Կ. Գևորգյանը, ասիստենտ Գ. Մ. Բաղալյանը, դասախոսներ Ք. Ժ. Յախշյանը, Լ. Լ. Ուլուբաբյանը: Համատեղության կարգով ամբիոնում դասախոսական աշխատանք են կատարում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ, պ.գ.դ., պրոֆեսորներ Ա. Հր. Սիմոնյանը և Ա. Ա. Մելքոնյանը, պ.գ.դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, պ.գ.դ. Ա. Ս. Վիրաբյանը, պ.գ.թ., դոցենտներ Ս. Հ. Ամիրյանը, Բ. Մ. Թևոսյանը, Ա. Ա. Ղարիբյանը, Ա. Ի. Շահնազարյանը, պ.գ.թ., ասիստենտներ Կ. Պ. Հայրապետյանը, Լ. Ա. Մկրտումյանը, պ.գ.թ., դասախոսներ Գ. Գ. Մելքոնյանը, Ս. Հ. Սաֆարյանը:

Հետխորհրդային շրջանում՝ համալսարանական կրթական համակարգում կատարված արմատական վերափոխումներից հետո, ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը իրականացվում է երեք հիմնական ուղղություններով.

ա. Հայոց պատմության հիմնահարցեր առարկայի դասավանդում համալսարանի բոլոր ֆակուլտետներում և պատմության ֆակուլտետի արվեստագիտության ու մշակութաբանության բաժիններում:

բ. Ֆակուլտետի բակալավրիատում հայոց պատմություն, Հայաստանի պատմական աշխարհագրություն, հայոց պատմության աղբյուրագիտություն, հայոց պատմության պատմագրություն, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հայ քաղաքական կուսակցությունների պատմություն, արխիվագիտություն, դրամագիտություն և վիմագրություն առարկաների դասավանդումը:

գ. Հայոց պատմություն մասնագիտացմամբ մագիստրատուրայի (առանձին՝ հին և միջին դարեր ու նոր և նորագույն շրջան) ուսումնառություն: Հին և միջին դարերի պատմության մասնագիտացմամբ դասավանդվում են հետևյալ առարկաները՝ մասնագիտության արդիական հիմնախնդիրները, հայոց պետականության զարգացման փուլերն ու առանձնահատկությունները, հին Հայաստանի մշակույթը, ընդհանուր լեզվաբանության ներածություն, հայոց տոմարի պատմություն, Հայաստանի պատմական մարդաբանություն, հայոց հնագույն և հին պատմության հիմնախնդիրներ, «Աշխարհացույց»-ը և Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգը, հայկական ինքնությունը,

Հայաստանի պատմական ժողովրդագրություն, Արցախյան հիմնախնդիրը և նրա զարգացումները, հայ-վրացական զինակցությունը 12-13-րդ դարերում, Կիլիկիայի հայկական պետությունը և Մերձավորարևելյան տարածաշրջանը, հայագիտության ներածություն, հայերենը հնդեվրոպական լեզուների համակարգում, հայկական դրամագիտություն և հերալդիկա, հայ հնագրություն և վիմագրություն, նախամաշտոցյան գիր և գրականություն, հայոց դիվանագիտությունը հին և միջին դարերում, Հայաստանը Բագրատունյաց ժամանակաշրջանում, Հայաստանը Զաքարյանների օրոք, Հայաստանը և Կովկասյան աշխարհը: Նոր և նորագույն պատմության մասնագիտացման գծով դասավանդվում են մասնագիտության արդիական հիմնախնդիրները, Հայկական ինքնությունը, հայագիտության ներածություն, հայոց ազգային գաղափարախոսությունը, Հայաստանի պատմական ժողովրդագրություն, հայ-ռուսական հարաբերությունները և Ռուսաստանի հայ գաղթօջախները, հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, հայ-թուրքական հարաբերությունները 1878 թ. մինչև մեր օրերը, Հայկական հարցը և միջազգային իրավունքը, արևմտահայերի հասարակական-քաղաքական կյանքը 1908-1914 թթ., Հայոց ցեղասպանությունը և հրեական հոլոքոստը, Գերմանիայի արևելյան քաղաքականությունը և հայկական հարցը, Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականությունը 1918-1920 թթ., քաղաքացիական կռիվների հիմնախնդիրը հայոց պատմության մեջ, Հայկական հարցը 1918-1923 թթ., ռազմական կոմունիզմի և նէպ-ի քաղաքականությունը Հայաստանում, Խորհրդային Հայաստանի տեղն ու դերը հայոց նորագույն պատմության մեջ, Հայ սփյուռքի պատմության հիմնախնդիրը, Արցախյան հիմնախնդիրը և նրա զարգացումները, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն (1991-2014), ՀՀ-ն ԱՊՀ երկրների համագործակցության համակարգում, արխիվագիտություն, հայագիտության արդի մարտահրավերները համացանցում դասընթացները:

Հայոց պատմության ամբիոնը հայագետ-պատմաբանների պատրաստման հիմնական կենտրոններից է: Ուսումնառության մեջ առավել աչքի ընկած և գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտություն ցուցաբերած շրջանավարտներն ուսումը շարունակում են ասպիրանտուրայում: Ներկայումս ամբիոնն ունի առկա և հեռակա ուսուցման մեկ տասնյակից ավելի ասպիրանտներ և մեծ թվով հայցորդներ:

Ամբիոնի գիտահետազոտական գործունեությունը սերտորեն առնչվում է ուսումնամեթոդական աշխատանքների հետ: Ամբիոնն իր առաջնահերթ խնդիրն է համարել և համարում դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, քարտեզների ու ծրագրերի պատրաստումն ու հրատարակումը: Այդ ուղղությամբ առաջին քայլերը կատարվել են դեռևս 1920-1930-ական թվականներին: 1950-ական թթ. վերջերին ամբիոնը ձեռնամուխ է եղել 12 պրակից բաղկացած «Հայ ժողովրդի պատմություն» բուհական ձեռնարկի ստեղծմանը, 1963-1970 թթ. լույս է տեսել «Հայ ժողովրդի պատմություն» քառահատոր բուհական դասագիրքը, որը վերամշակվելուց ու բարելավվելուց հետո վերահրատարակվեց 1975-1980 թթ.՝ երկու հատորով: Ամբիոնի դասախոսներ Պ. Հովհաննիսյանի, Մ. Կատվալյանի, Լ. Մկրտչյանի, Հ. Մարգարյանի, Հ. Գրիգորյանի, Էդ. Դանիելյանի, Յու. Հովսեփյանի, Է. Մինասյանի հեղինակությամբ 2000 թ. լույս է տեսել «Հայոց պատմություն. հիմնահարցեր» ուսումնական ձեռնարկը ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար (խմբ.՝ ակադ. Հր. Ռ. Սիմոնյանի): 2012 թ. լույս է տեսել սույն դասագրքի երկրորդ, վերամշակված և անհամեմատ ծավալուն հրատարակությունը: Թարգմանվել և հրատարակման է պատրաստվում նույն դասագրքի ռուսերեն տարբերակը:

Ամբիոնը մեծ աշխատանք է կատարել «Հայ ժողովրդի պատմություն» դասընթացի ծրագրի պատրաստման ուղղությամբ: 1950-1980-ական թվականներին եղել են ծրագրի մի քանի հրատարակություններ: Դասընթացի վերջին ամբողջական ու նորացված ծրագիրը հրատարակվել է 2000 թվականին՝ պրոֆ. Հր. Սիմոնյանի խմբագրությամբ: Վերջինիս դրույթների և առաջադրած սկզբունքների հիման վրա աշխատանքներ են տարվում պատմության ֆակուլտետների համար երկհատորանոց բուհական դասագրքի ստեղծման ուղղությամբ:

Հայկական հնագրության, հայկական գաղթավայրերի պատմության և հայոց պատմության աղբյուրագիտության ուսումնական ձեռնարկների և դասագրքերի ստեղծման ուղղությամբ լուրջ աշխատանք են կատարել պրոֆեսորներ Ա. Աբրա-

համյանը և Ստ. Մելիք-Բախշյանը:

Նշանակալից աշխատանք է կատարվել «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» քառահատոր ուսումնական օժանդակ ձեռնարկ ստեղծելու ուղղությամբ: Դեռևս 1981 թ. լույս տեսավ նրա առաջին հատորը (կազմողներ Ա. Աբրահամյան, Պ. Հովհաննիսյան): Վերջին տարիներին՝ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության առաջարկով այդ ձեռնարկը շարունակվեց: Պ. Հովհաննիսյանի և Ա. Մովսիսյանի աշխատակցությամբ 2007 թ. լույս տեսավ քրեստոմատիայի բարեփոխված 1-ին, իսկ 2011 թ.՝ 2-րդ հատորը: Նախապատրաստվում է մյուս հատորների հրատարակությունը:

Ամբիոնը կարևոր գործ է կատարել հայ ժողովրդի պատմության ուսումնական և մասնագիտական քարտեզների հրատարակման ուղղությամբ: Հատկապես նշանակալից է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Բ. Հարությունյանի ներդրումն այդ գործում: Նա մի քանի հարյուր քարտեզների հեղինակ է: 2004 թ. նա հրատարակել է «Հայաստանի պատմության ատլաս»-ի Ա մասը, իսկ 2008 թ.՝ Բ մասը: 2008 թ. Բ. Հարությունյանի խմբագրությամբ լույս է տեսել «Ազգային ատլաս»-ի Բ հատորը, որին աշխատակցել են նաև ամբիոնի դասախոսներ Գ. Բաղալյանը, Է. Մինասյանը: Նրանք մասնակցել են նաև «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս»-ի ստեղծմանը: 2010-2014 թթ. 45 մասնագիտական և շուրջ 30 ուսումնական քարտեզներ է հեղինակել ասիստենտ Գ. Բաղալյանը:

Ամբիոնի անդամների ջանքերով 1943-2014 թվականներին լույս են տեսել նաև հայ ժողովրդի պատմության դպրոցական տասնյակ ձեռնարկներ ու դասագրքեր, վերջին տարիներին՝ դրանց զուգահեռ նաև պետական ավարտական և միասնական քննության ուղեցույցներ, տիպային առաջադրանքների բազմաթիվ ժողովածուներ: Ամբիոնի մի խումբ անդամներ (Բ. Հարությունյան, Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Հ. Մարգարյան, Յու. Հովսեփյան, Է. Մինասյան) հանրակրթական դպրոցի 6-9-րդ դասարանների ներկայումս գործող դասագրքերի, իսկ Ա. Մովսիսյանը, Պ. Հովհաննիսյանը, Ա. Սիմոնյանը, Յու. Հովսեփյանը և Է. Մինասյանը՝ ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների դասագրքերի (2009-2011) համահեղինակներ են: Պ. Հովհաննիսյանի խմբագրությամբ և աշխատակցությամբ են լույս տեսել միջնակարգ դպրոցի 4-10-րդ դասարանների «Հայոց եկեղեցու պատմություն» դասագրքերը (2003-2008):

Ամբիոնն իրավամբ հանդիսանում է հանրապետության հայագիտական կարևոր կենտրոններից մեկը: Անցած տասնամյակների ընթացքում ամբիոնի աշխատակիցների կողմից լույս են ընծայվել շուրջ 1000 մենագրություններ, այլևայլ ուսումնասիրություններ, մեծ թվով գիտական հոդվածներ:

1920-1930-ական թվականներին, երբ նոր էր ձևավորվում խորհրդահայ պատմագրությունը, նրա ակունքներում կանգնած էին նաև ամբիոնի անդամներ Հ. Մանանդյանը, Լեոն, Հ. Զորյանը: Իրենց գիտահետազոտական աշխատանքներում նրանք շեշտը դնում էին հայ ժողովրդի ներքին կյանքի, արհեստների, առևտրի, քաղաքների, ներազգային պայքարի և ժողովրդազատագրական պատերազմների պատմության հարցերի հետազոտության վրա: 1930-ական թթ. կեսերից ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկվում են խորհրդահայ պատմագրության երկրորդ սերնդի ներկայացուցիչները, որոնցից նշանավոր էին պրոֆեսորներ Ս. Պողոսյանը, Ա. Աբրահամյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Պարսամյանը, Ստ. Մելիք-Բախշյանը, դոցենտ Հ. Ժամկոչյանը և ուրիշներ: Նրանց աշխատությունները նվիրված էին ինչպես միջնադարյան Հայաստանի պատմության տարաբնույթ հիմնահարցերի լուսաբանմանը, այնպես էլ հայ-ռուսական հարաբերություններին և նոր շրջանի հայ ազատագրական պայքարի խնդիրներին:

1970-ական թվականներից առայսօր ամբիոնի աշխատակիցները գիտահետազոտական աշխատանքներ են կատարում հայոց պատմության հին ու միջին դարերի և նոր ու նորագույն ժամանակաշրջանների մի շարք առանցքային հիմնահարցերի ուսումնասիրության ուղղությամբ: Նշանակալից տեղ են հատկացվել հնագույն պետական կազմավորումների պատմությանը, աղբյուրագիտությանն ու պատմագրությանը: Մեծ ծավալի աշխատանք է կատարվել հայկական հարցի, հայոց ազատամարտի, հայոց ցեղասպանության, ազգային գաղափարախոսության և Արցախյան հիմնահարցի ուսումնասիրության բնագավառում: Մասնավորապես հետխորհրդային շրջանում ամբիոնի աշխատակիցների կողմից ստեղծվել են մի քանի տասնյակ պատմագիտական մնայուն գործեր:

Ակադեմիկոս Լ. Խուրշուդյանի հեղինակությամբ լույս են տեսել «Հայկական հարցը» (1995), «Հայոց ազգային գաղափարախոսությունը» (1999), «Հայաստանի բաժանումը 1920 թվականին» (2002) մենագրությունները:

Ակադեմիկոս Հր. Սիմոնյանի գիտական պրպտումների արդյունքում հրապարակ իջավ «Ազատագրական պայքարի ուղիներում» հինգ գրքերից բաղկացած ստվարածավալ ուսումնասիրությունը (2003-2013) և «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» մենագրությունը (2009):

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Հր. Սիմոնյանը գիտական հանրությանը ներկայացրեց «Անդրկովկասի բանվոր դասակարգը համառուսական վարձու աշխատանքի շուկայում XIX դարի վերջին և XX դարի սկզբներին (պատմա-վիճակագրական անալիզ)» ռուսերեն մենագրությունը (1995) և «Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.» արժեքավոր ուսումնասիրությունը (2000, 2009):

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Հարությունյանի հեղինակությամբ լույս են տեսել «Աշխարհացույց»-ը և չորս Հայքերի խնդիրը» (1997), «Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի շարք խնդիրների շուրջ (Ք. ա. VII-VI դդ.)» և «Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի (2001) մենագրությունները:

Պրոֆ. Է. Մինասյանը հրատարակել է «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում. 1990-2003 թթ.» (2003), «Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն» (2014) մենագրությունները և հեղինակակից է «Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դարեր)» ուսումնասիրության (2005):

Ամբիոնի ներկայիս վարիչ պրոֆ. Պ. Հովհաննիսյանի աշխատասիրությամբ լույս են տեսել Նիկողայոս Ադոնցի երկերի վեցհատորյակը (2006-2012) և Ա. Գ. Հովհաննիսյանի պատմագիտական ուսումնասիրությունների հատորյակը (2007): Նա համահեղինակ է «Հայկական հարց. Հայերի ցեղասպանությունը (ռուսերեն գրականության մատենագիտություն)» (1998), «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» պատկերագրքի (2001), «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարանի (2008), «Նշանավոր ճեմարանականներ» երկհատոր ժողովածուի (2005, 2009):

Պրոֆ. Հ. Ժ. Հովհաննիսյանը հրատարակել է «Հայոց պատմության հիմնահարցերը XIX դարի ռուսական մամուլի հրապարակումներում» (1998) և «Հայագիտությունը Ռուսաստանում XIX դարում» (2004) մենագրությունները: Պրոֆ. Ա. Հայրունին գիտական հանրությանն է ներկայացրել «Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին» ուսումնասիրությունը (2013): Պրոֆ. Ա. Ներսիսյանը ընթերցողի սեղանին է դրել «Զորավար Սեպուհ» (2014) աշխատությունը:

Դոցենտ Էդ. Դանիելյանը հեղինակ է անգլերենով լույս տեսած «Հայոց ցեղասպանությունը 1894-1922 թվականներին և թուրքական պետականության պատասխանատվությունը» (2005), իսկ դոցենտ Հ. Գրիգորյանը՝ «Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թվականներին» (2002) և «Հայոց ազատամարտի զինման ու ֆինանսավորման խնդիրը. 1890-1908 թթ.» (2004) մենագրությունների: Դոցենտ Լ. Հ. Մկրտչյանը հրատարակել է «Զեյթունի ապստամբությունը 1895-1896 թթ.» (1995) ուսումնասիրությունը: Դոցենտ Ա. Ղարիբյանը կազմել և ռուսերեն հրատարակել է «Արցախ-Ղարաբաղ. 1988-2010 թթ. նյութերի մատենագիտությունը» (2011), հեղինակել «Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը 1918-1920 թթ. և Մեծ Բրիտանիան» մենագրությունը (2013), թարգմանել, ծանոթագրել ու հրատարակել «Դեպի Հայաստան ամերիկյան զինվորական առաքելության զեկույցը» (2014):

Հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, ռուսերեն և թուրքերեն հրատարակված 27 մենագրությունների հեղինակ է դոցենտ Ա. Մովսիսյանը: Դրանցից հիշատակելի են՝ «Սրբազան լեռնաշխարհ. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում» (2000, 2004, 2006), «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը» (2003, 2006, 2007), «Հայկական մեհենագրություն» (2003), «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր սկզբնաղբյուրների)» (2005), «10 հայ ականավոր արքաները» (2009, 2011), «Տիգրան Մեծ. թագավորներից մեծագույնը» (2010), «Հայոց պետականությունը. 5000-ամյա... և քսանամյա»

(2011), «10 ականավոր հայ թագուհիներ» (2014): Ա. Մովսիսյանը նաև վեց գիտահանրամատչելի ֆիլմերի հեղինակ է:

Գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքներով հանդես են եկել նաև դոցենտ Կ. Եղիազարյանը, պ.գ.թ., ասիստենտ Մ. Հովհաննիսյանը, ասիստենտ Գ. Բաղալյանը, դասախոս Ք. Յախչյանը:

Ամբիոնի անդամները մշտապես մասնակցում են համալսարանական, հանրապետական ու միջազգային գիտաժողովներին՝ հանդես գալով հայոց պատմության այլևայլ հիմնահարցերին նվիրված զեկուցումներով: Ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվում են նաև գիտական բանավեճեր հայագիտական տարբեր հարցերի շուրջ:

Ամբիոնի դասախոսներն ակտիվորեն մասնակցում են ԵՊՀ հասարակական կյանքին, հեռուստատեսային և ռադիոելույթներով հանդես գալիս մասնագիտական և հասարակական հնչեղություն ունեցող տարբեր հարցերի վերաբերյալ: Նրանցից շատերը (Է. Մինասյան, Գ. Բաղալյան, Ֆ. Ղազարյան, Ա. Հայրունի, Լ. Ուլուբաբյան, Կ. Հայրապետյան և այլք) դասախոսություններով պարբերաբար հանդես են գալիս ՀՀ ազգային բանակի զորամասերում:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Երևանի պետական համալսարանի համաշխարհային պատմության ամբիոնը կազմավորվել է հին աշխարհի և նոր պատմության ամբիոնների հիմքի վրա: 1952 թվականին երկու ամբիոններից կազմավորվել է ընդհանուր պատմության ամբիոնը՝ ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի ղեկավարությամբ: 1998 թվականից ամբիոնի վարիչն է պրոֆ. Ալբերտ Ստեփանյանը: 2005 թվականին այն վերանվանվել է համաշխարհային պատմության ամբիոն:

Վերջին տարիներին ամբիոնի կազմում կատարվել են արմատական տեղաշարժեր: Տեղի է ունեցել սերնդափոխություն, հին դասախոսներին փոխարինելու են եկել նորերը՝ հիմնականում ամբիոնի նախկին սաներ: Այժմ ամբիոնում աշխատում է 12 դասախոս՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Ստեփանյանը (ամբիոնի վարիչ), պատմ. գիտ. թեկնածու, դոցենտներ Գ. Ս. Քիլիմջյանը, Գ. Ս. Հարությունյանը, Հ. Ժ. Հարությունյանը, Դ. Ֆ. Թինոյանը, Ա. Ս. Գասպարյանը, Ս. Խ. Հովհաննիսյանը, Լ. Ռ. Մինասյանը, Ա. Ս. Ղազարյանը, պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ Լ. Ս. Մկրտչյանը, դասախոս Կ. Յու. Գասպարյանը, դոցենտ Ա. Թելունցը:

Ուսումնամեթոդական ընդգրկմամբ ամբիոնը ներկայացնում է համաշխարհային պատմությունը՝ սկսած հին արևելյան քաղաքակրթությունից մինչև մեր օրերը: 1997 թվականից սկսած՝ ուսուցման եռաստիճան համակարգի անցնելու կապակցությամբ ամբիոնի անդամների ուժերով բակալավրիատի համար մշակվել են համաշխարհային պատմության տարբեր դարաշրջանների վերաբերյալ մասնագիտական դասընթացների նոր ուսումնական ծրագրեր: Կազմվել և հրատարակվել է պրոֆ. Ա. Ստեփանյանի և դոց. Հ. Հարությունյանի հեղինակած «Հին աշխարհի պատմություն» ծրագիր-ուղեցույցը (2005): Ամբիոնը պարբերաբար հրատարակում է ուսումնաօժանդակ ձեռնարկներ ու դասախոսությունների նյութեր: Վերջին տարիներին հրատարակված նման գործերից արժանահիշատակ են՝ Ս. Հովհաննիսյանի «Փյունիկյան ծովային քաղաքակրթությունը» (2012), Ա. Գասպարյանի «Ֆրանսիան Նապոլեոն Բոնապարտի կառավարման տարիներին (1799-1814) (կառավարման

համակարգի արդիականացման մոդելը), դասախոսության նյութեր» (2013), Լ. Մինասյանի «Իրադրությունը Հռոմում Ք. ա. II դարում և Գրակքուսների բարենորոգումները, դասախոսության նյութեր» (2013), Լ. Մկրտչյանի «Եվրոպական միություն. Կառույցը, գործառույթները, դերակատարությունը, դասախոսությունների նյութեր» (2013):

Ինչ վերաբերում է մագիստրատուրային, ապա ամբիոնը 1997 թվականից ԵՊՀ-ում առաջիններից մեկն է անցել այդ կրթակարգին՝ «Համաշխարհային պատմություն» մասնագիտացմամբ: Ըստ այդմ մշակվել են երկամյա խորացված ուսուցման ծրագրեր Հին աշխարհի, Միջնադարի և Նոր ու նորագույն պատմության ամենատարբեր հիմնահարցերի վերաբերյալ: Ներդրվել են արդի պատմագիտության մակարդակին հարիր դասընթացներ՝ «Պատմության տեսություն», «Համաշխարհային պատմության հիմնահարցեր», «Քաղաքակրթությունների տեսություն և պատմություն», «Դեմոկրատիայի պատմություն», «Աշխարհաքաղաքականություն և արդի հասարակական պրակտիկա», «Պառլամենտարիզմի պատմություն», «Տնտեսական համակարգերը համաշխարհային պատմության համատեքստում», «Միջազգային հարաբերությունների տեսություն և պատմություն» և այլն: Կազմվել են դրանց ուսումնական պլանները և ծրագրերը:

Համաշխարհային պատմության ամբիոնի մագիստրատուրայի բովով անցել է շուրջ 100 մագիստրանտ: Նրանցից 10-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, ըստ որում՝ երեքը գիտական աստիճան են ստացել եվրոպական համալսարաններում (Լոնդոն, Վարշավա, Բուդապեշտ):

Բացի պլանային դասընթացներից՝ ամբիոնի մագիստրանտների և բակալավրի համակարգի ուսանողների համար դասախոսություններ են կարդացել արտասահմանյան մի շարք գիտնականներ, որոնց թվում՝ Քեմբրիջի համալսարանի Queen's College-ի դեկան, պրոֆ. Թ. Բրաունը, Հարվարդի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ պրոֆ. Ջ. Ռասսելը, Միչիգանի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ժ. Լիպարիտյանը, Վենետիկի Կաֆոսկարի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Պ.-Լ. Ջեքիյանը, Բեռլինի համալսարանի պրոֆ. Թ. Հոֆֆմանը, Լեչեի (Իտալիա) համալսարանի պրոֆ. Ջուստո Տրաինան, Դ. Կոլոձեցկին (Կրակով), Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր՝ Սերջիո Լա Պորտան, Euroclio-ի (Պատմություն դասավանդողների եվրոպական ասոցիացիա) համակարգող Սթիվեն Սթիջերը և այլք: Ս. թ. հոկտեմբեր ամսին ամբիոնի ասպիրանտների և մագիստրանտների համար դասախոսություններով հանդես կգա Միչիգանի համալսարանի պրոֆեսոր Արա Սանջյանը:

Ամբիոնն ունի իր մշտական գիտատեսական սեմինարը, որի հիմնաթեման է «Անհատը և հասարակական ինովացիոն գործընթացները պատմության մեջ»: Սեմինարին ելույթներով հանդես են գալիս դասախոսներ, ասպիրանտներ, մագիստրանտներ, բակալավրիատի ուսանողներ, դպրոցի ուսուցիչներ և այլք:

1994-2002 թթ. ամբիոնում կատարվել է պետական պայմանագրային թեմա՝ «Հայկական քրիստոնեական հասարակությունը և հայ եկեղեցին (ծագումնաբանությունը, հաստատումը և զարգացումը). Պատմաքննական և սոցիալ-մշակութային վերլուծություն», որում ընդգրկված են եղել պրոֆ. Ա. Ստեփանյանը և պրոֆ. Վ. Դիլոյանը: Թեման նվիրված է հայ եկեղեցու ծագումնաբանությանը և հայկական հասարակության մեջ նրա խաղացած դերին: Նրա արդյունքները հրատարակվել են հեղինակների մի շարք հոդվածներում:

2008-2010 թթ. ամբիոնն աշխատել է պետական պայմանագրային նոր գիտաթեմայի վրա՝ «Համաշխարհայնացման գործընթացները հայոց պատմության հոլովույթում. հելլենիզմ, քրիստոնեություն, խաչակրաց արշավանքներ»՝ մասնակցությամբ պրոֆ. Ա. Ստեփանյանի, դոցենտներ Գ. Հարությունյանի, Հ. Պիկիչյանի և ասիստենտ Լ. Մկրտչյանի: Արդի պատմագիտության նվաճումների դիտանկյունից լուսաբանվել են գիտաթեմայի քաղաքակրթական արգորիթմները, որոնց ծիրում համաբերվել են տարբեր դարաշրջանների արժեքային համալիրները:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են մի շարք դրամաշնորհային ծրագրերի: Բալթիմորի համալսարանի դրամաշնորհի շրջանակներում պրոֆ. Ա. Ստեփանյանը 1999-2001 թթ. մասնակցել է "National Identity Alternatives in Multicultural Societies" գիտաթեմային՝ "Dimensions of National Identity (Preliminary observations)": Ժենևի համալսարանի "Research Program in Social

Studies" ծրագրի սահմաններում պրոֆ. Ա. Ստեփանյանը 2001 - 2004 թթ. մասնակցել է "David the Invincible" թեմայի կատարմանը: Նրա մասնաթեման էր "Neo-Platonic Approach to the Armenian Historiography": Դոցենտ Լ. Մինասյանը հետազոտական աշխատանք է կատարել Շվեյցարիայում՝ Fondation Hardt Pour L'Etude L'Antiquite Classique կազմակերպությունում:

Ասիստենտ Լ. Մկրտչյանը 2013 օգոստոսի 12-27-ը մասնակցել է "European Forum Alpbach 2013"-ի աշխատանքներին, վերապատրաստվել է "Values in Science» և "Roots of European Values" թեմաներով: Նա 2013 թ. հոկտեմբերի 24-31-ը մասնակցել է Բեռլինի համալսարանի "Historical Narratives in the Ethnic Confflicts" խորագրով աշխատաժողովին:

Ամբիոնի անդամները վերջին հինգ տարվա ընթացքում հրատարակել են 5 մենագրություն և ավելի քան 130 հոդված: Դրանցից պետք է առանձնացնել պրոֆ. Ա. Ստեփանյանի «Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում. Արտաշիսյան դարաշրջան, Գիրք Ա» (2013), դոցենտ Դ. Թինոյանի «Կիլիկիո Հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ.» (2011), դոցենտ Ս. Հովհաննիսյանի «Պատմություն և հիշողությունը» (2014) մենագրությունները:

Տարիներ շարունակ պրոֆ. Ա. Ստեփանյանի ղեկավարությամբ հեղինակների մի համախումբ ՀՀ ԿԳՆ պատվերով ստեղծել է հանրակրթական դպրոցի 6-9-րդ դասարանների համաշխարհային պատմության դասագրքեր: 2014 թ. հրատարկվել են դպրոցական երկու դասագրքեր՝ «Համաշխարհային պատմություն. Հին աշխարհ» (խմբագիր և հիմնական հեղինակ Ա. Ստեփանյան) և «Համաշխարհային պատմություն. Միջին դարեր» (հիմնական հեղինակ՝ Գ. Հարությունյան):

2005 թվականից ամբիոնը հրատարակում է «Պատմություն և կրթություն», «Ինքնության հարցեր» և «Պատմության հարցեր» հանդեսները՝ պրոֆ Ա. Ստեփանյանի խմբագրությամբ:

Ամբիոնը հանձնառել է կազմակերպելու Երևանի, Գյումրու, Վանաձորի և Արցախի համալսարանների և մանկավարժական ինստիտուտների համանման ամբիոնների ուսանողների տարեկան գիտաժողովները: 2010 թ. կայացավ այս շարքի առաջին գիտաժողովը, իսկ 2013 թ. դեկտեմբերի 14-15-ը Ծաղկաձորում տեղի է ունեցել «Համաշխարհային պատմության հիմնահարցեր. ընկերային կառույց, գաղափարախոսություն, քաղաքական համակարգ» խորագրով երիտասարդ պատմաբանների միջբուհական 2-րդ գիտաժողովը, որին մասնակցել են հանրապետության տարբեր բուհերի 46 ուսանողներ և գիտաշխատողներ: Լավագույն 28 զեկուցումներ ամփոփվել են գիտաժողովի նյութերի ժողովածոի մեջ (գլխավոր խմբ.՝ Ա. Ստեփանյան):

Ամբիոնի դասախոսների կողմից ուսանողների համար կազմակերպվում են նաև հատուկ դպրոցներ: Պրոֆ. Ա. Ստեփանյանի ղեկավարությամբ 2012 թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը 37 հոգի (10 դասախոսներ և ՀՀ տարբեր բուհերի 27 ուսանողներ) մեկնել են Ծաղկաձոր՝ մասնակցելու ձմեռային դպրոցի աշխատանքներին: «Մեդիացիան (միջնորդություն) որպես միջպետական կոնֆլիկտների լուծման այլընտրանքային տեխնոլոգիա» խորագրով թեման երիտասարդ գիտնականների դպրոցի շրջանակներում հետազոտության մի փորձ է եղել, որը նպատակ է ունեցել թեմատիկ ու ժամանակագրական առումով ընդգրկելու համաշխարհային պրակտիկայում մեդիացիոն երկխոսությունների ծրագրերը, ինչպես նաև դրանց ներգործությունը քաղաքակրթական-տարածաշրջանային երկխոսային հարացույցների մշակման և իրականացման գործընթացում: 2013 թ. նոյեմբերի 24-25-ը պրոֆ. Ա. Ստեփանյանի և ամբիոնի մի խումբ աշխատակիցների ջանքերով կազմակերպվել է՝ «Մեդիացիան որպես միջպետական կոնֆլիկտների լուծման այլընտրանքային տեխնոլոգիա-2» խորագրով աշնանային դպրոցը, որին մասնակցել են 8 դասախոսներ և ՀՀ տարբեր բուհերի 25 ուսանողներ: Դրպրոցն իրականացվել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, Երիտասարդ պատմագետների ասոցիացիայի աջակցությամբ և «Imagine» կոնֆլիկտների հաղթահարման կենտրոնի ֆինասավորմամբ:

2014 թ. հունիսի 28-ին դոցենտներ Լ. Մինասյանի ու Դ. Թինոյանի և ասպիրանտ Ջ. Կճանյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Անհատը պատմության հոլովույթում» խորագրով երիտասարդ հետազոտողների միջբուհական գիտաժողովը, որին մասնակցել են հանրապետության տարբեր բուհերի 30 ուսանողներ և գիտաշխատողներ: Լավագույն զեկուցումները նախատեսվում է հրատարակել ժողովածոի տեսքով:

Ամբիոնի դասախոսները զեկուցումներով հանդես են եկել

Երևանում, Մոսկվայում, Ս.Պետերբուրգում, Փարիզում, Վարշավայում, Հռոմում, Քեմբրիջում, Օքսֆորդում, Բոստոնում, Նեապոլում, Աթենքում, Թեսալոնիկում, Վիեննայում, Անն Արբորում, Բեռլինում, Բրաունշվիգում, Կալինինգրադում, Ստամբուլում, Թբիլիսիում տեղի ունեցած հանրապետական և միջազգային տարբեր գիտաժողովներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի ծնունդն արդյունք է այն մեծ վերափոխությունների, որոնք սկիզբ են առել հետխորհրդային ժամանակաշրջանում և կապված են նորանկախ Հայաստանի Հանրապետության ձևավորման շրջանում մեր երկրի առջև ծառացած նոր խնդիրների հետ: Ամբիոնը երկու տասնամյակից էլ քիչ պատմություն ունի, բայց նրա ակունքներն ավելի խորն են և հասնում են մինչև Երևանի պետական համալսարանի հիմնադրման ժամանակները: Ամբիոնն իր գոյության ընթացքում ունեցել է մի շարք անվանումներ՝ ԽՍՀՄ պատմության, նոր և նորագույն պատմության և, ի վերջո, Հայաստանի հարակից երկրների պատմության: Այս առումով ամբիոնը ԵՊՀ-ի հետ միասին երկար ու բեղմնավոր ճանապարհ է անցել:

Ամբիոնում աշխատել են անվանի գիտնականներ, ճանաչված դասախոսներ, որոնք որոշակի ներդրում ունեն հանրապետության բուհական կյանքում, գիտական մտքի զարգացման, երկրի կյանքի տարբեր ոլորտներում որակյալ կադրերի պատրաստման գործում:

Նրանց շարքում առանձնանում է ճանաչված մտավորական, մեծ ճանապարհ անցած գիտնական, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վահան Ռշտունին, ով 1931 թվականին հիմնադրել և մինչև կյանքի վերջը ղեկավարել է ամբիոնը, դաստիարակել սերունդներ: Նա թողել է նաև գիտական մեծ ժառանգություն: Նրա ուսումնասիրությունները նվիրված են հայ գյուղացիության պատմությանը, հայ հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառներին: Դրանք այսօր էլ արդիական են 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին կեսի մեր պատմության հիմնահարցերի ուսումնասիրման տեսանկյունից:

Արժեքավոր գիտական ժառանգություն է թողել նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գարսևան Շառոյանը, որը ագրարային պատմության ճանաչված մասնագետ էր՝ օրինակելի իր բարեխղճությամբ և գործին նվիրվածու-

թյամբ: Նրա գործունեության մեջ առանձնանում են ԽՍՀՄ պատմության ամբիոնի գլխավորման տարիները: Ամբիոնը ղեկավարել է նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ղազարյանը: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել 19-րդ դ. երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության խնդիրները, որոնց լուսաբանությանն են նվիրված նրա մի շարք աշխատությունները:

Ամբիոնի պատմության մեջ հիշատակության արժանի հետք են թողել ճանաչված դասախոսներ, դոցենտներ Մարջիկ Շիմշիրյանը, Անդրանիկ Ներսիսյանը, Ռիտա Մելիք-Սարգսյանը և ուրիշներ: Ամբիոնի կյանքում ուրույն դեր է խաղացել նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովիկ Մելիքսեթյանը, որի վարիչության տարիներին էլ ամբիոնը վերակառուցվել է նոր և նորագույն պատմության ամբիոնի:

ԽՍՀՄ-ի փլուզումը և Հայաստանի անկախացումը նոր խնդիրներ ու պահանջներ դրեցին բուհական համակարգի առջև: Տեղի ունեցան արմատական փոփոխություններ, որոնք վերաբերում էին ինչպես դասավանդման, այնպես էլ կազմակերպչական, կառուցվածքային շատ հարցերի: Պատմության ֆակուլտետում այդ փոփոխություններից մեկը 1998 թվականին Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի ստեղծումն էր, որի առաջ խնդիր էր դրված ուսանողներին դասավանդել հատկապես այն երկրների պատմությունը, որոնք սերտ առնչություն են ունեցել մեր ժողովրդի, նրա պատմության հետ: Այդ երկրների շարքում առանձնանում են հատկապես Ռուսաստանը, Իրանը, Թուրքիան, Վրաստանը, Ադրբեջանը, Մերձավոր Արևելքի երկրները և այլն:

1998-2000 թվականներին ամբիոնը ղեկավարում էր պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանը: Դրանք տարիներ էին, երբ անհրաժեշտ էր մշակել նոր դասընթացներ, մանավանդ որ ԵՊՀ-ն հանրապետությունում առաջիններից մեկն էր անցում կատարում ուսուցման եռաստիճան համակարգի: 2000-2007 թթ. ամբիոնի աշխատանքները ղեկավարել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Աբրահամյանը, 2007 թվականից մինչև այժմ ամբիոնի վարիչը պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայրապետ Մարգարյանն է:

Հայաստանի հարակից երկրների պատմության նոր ձևավորված ամբիոնում աշխատել են ճանաչված մասնագետներ՝ պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսորներ Սերգեյ Ամիրյանը, Միքայել Մուրադյանը, Երվանդ Գասպարյանը, դոցենտներ Արամ Հայթյանը, Ալբերտ Մկրտչյանը, Վալերի Ծատինյանը: Այսօր ամբիոնի կազմում արդյունավետ գործունեություն են ծավալում պ.գ.թ., դոցենտներ Արտավազդ Դարբինյանը, Անդրանիկ Վարդանյանը, Էդուարդ Զոհրաբյանը, Հովհաննես Ալեքսանյանը, դասախոս Սուսաննա Սերոբյանը և ուրիշներ: Նրանք որոշակի վաստակ և ներդրում ունեն բուհական կյանքի զարգացման, ուսումնական գործի կազմակերպման և մատաղ սերնդի դաստիարակության գործում:

Ամբիոնի դասախոսները, ձեռնամուխ լինելով նոր խնդիրների լուծմանը, մշակել են այսօրվա պահանջներին համապատասխան հատուկ դասընթացներ: Դրանց շարքում հիշատակության են արժանի «Հայոց պատմության հիմնահարցերը ռուսական պատմագրության գնահատմամբ» (պրոֆ. Մ. Մուրադյան), «Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները», «Մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերը Հարավային Կովկասում հետխորհրդային շրջանում» (պրոֆ. Հ. Աբրահամյան), «Ազգային հարցը և Լեռնային Ղարաբաղը», «Ստալինյան բռնաճնշումները և դրանց հետևանքները» (դոցենտ Ա. Դարբինյան), «Ամբողջատիրական համակարգը և ԽՍՀՄ-ի փլուզումը ու դրա հետևանքները», «Քեմալական շարժումը Թուրքիայում» (պրոֆ. Ս. Ամիրյան), «Մաթեմատիկական մեթոդների և ԷՀՄ-ի կիրառումը պատմական հետազոտություններում» (դոցենտ Ա. Վարդանյան), «Վրաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», «Վրաստանի և Ադրբեջանի պատմություն» (դոցենտ Է. Զոհրաբյան) դասընթացները:

Ամբիոնը, հավատարիմ մնալով իր ավանդույթներին, շարունակում է զգալի աշխատանք կատարել ուսումնամեթոդական աշխատանքների կատարելագործման, ուսումնական պլանների, դասընթացների նորացման, պատմագիտության բնագավառում նոր ձեռքբերումներին համընթաց նոր ծրագրերի մշակման և դասավանդումը ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու գործում: Հատկապես կարևոր տեղ են հատկացվում հետխորհրդային ժամանակաշրջանում առաջացած նոր գործըն-

թացների, աշխարհաքաղաքական նոր տեղաշարժերի, նորանկախ ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության, նախկին միութենական հանրապետությունների, այդ թվում՝ ԱՊՀ երկրների միջև ձևավորված նոր հարաբերությունների նորովի մեկնաբանմանը, պատմական Արցախի անցյալի և ներկա պատմության հիմնահարցերի լուսաբանմանը:

Վերջին տասնամյակների ընթացքում հանրապետության կյանքում կատարված արմատական փոփոխությունները և արտաքին աշխարհում դիտվող նոր երևույթները թելադրում են արագորեն արձագանքել առաջադրված մարտահրավերներին: Այդ խնդիրը դրված է նաև ամբիոնի դասախոսների առջև: Անհրաժեշտություն է զգացվում վերագնահատել և նորովի արժևորել Հայաստանի հարակից երկրների հետ մեր փոխհարաբերությունների պատմությունը, իրատեսական պատկերացում ունենալ հարևան պետությունների վերաբերյալ: Մասնավորապես՝ հանրապետության համար առաջնահերթ կարևորություն են ներկայացնում Կովկասի երկրները, որոնց հետ փոխհարաբերությունները անցյալում միջնորդավորված են եղել: Արդիական է դառնում տարածաշրջանի պետությունների հետ համակողմանի կապեր հաստատելու հայեցակարգի մշակումը:

Բակալավրիատի և մագիստրատուրայի նոր դասընթացներ մշակելիս մտցվում են այնպիսի նոր դասընթացներ, որոնք նպատակ ունեն լրացնելու խորհրդային ժամանակաշրջանի համար բնական բացը և հաշվի առնելու ՀՀ շահերն ու հետաքրքրությունները: Դեռևս 2009 թվականին ամբիոնում մշակվեց «կովկասագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսական ծրագիր, որի իրականացմանն իրենց նպաստը բերեցին ինչպես ամբիոնի, այնպես էլ ՀՀ ԳԱԱ լավագույն մասնագետները: Կովկասագիտության գծով կատարվող աշխատանքները նոր աստիճանի բարձրացվեցին 2011 թվականին, երբ ֆակուլտետի կազմում բացվեց Կովկասագիտության առանձին բաժին, որի ուսումնական ծրագրի մշակման ու սպասարկման աշխատանքները իրականացնում են ամբիոնի դասախոսները: Նորաբաց բաժինը մասնագիտական կրթություն է տալիս բակալավրիատի ուսանողներին: Մասնավորապես՝ ուսանողները հնարավորություն ունեն ուսումնասիրելու Կովկասի երկրների պատմությունը, հնագիտությունը և ազգագրությունը, ինչպես նաև յուրացնելու վրացերեն ու ադրբեջաներեն:

Ամբիոնը կարևորություն է ընծայում նաև գիտահետազոտական աշխատանքներին: Ամբիոնի գրեթե բոլոր դասախոսները ներգրավված են տարբեր գիտահետազոտական թեմաներում: Այս ուղղությամբ նրանց կատարած ուսումնասիրությունների արդյունքները հրատարակվում են հանրապետության ու արտերկրի գիտական հանդեսներում, իսկ առանձին դասախոսներ մասնակցում են միջազգային տարբեր գիտաժողովների և հանդես գալիս արժեքավոր զեկուցումներով:

Ամբիոնի անդամները վերջին տարիներին հրատարակել են մի քանի մենագրություններ, ուսումնաօժանդակ ձեռնարկներ, դասագրքեր և ավելի քան 150 գիտական հոդվածներ: Դրանցից պետք է առանձնացնել պրոֆեսոր Մ. Մուրադյանի «Հայոց պատմության հիմնահարցերը ռուսական պատմագրության գնահատմամբ» (1995), «Հայոց ողբերգությունը ռուսական հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ» (1997), «Հայկական հարցը և ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական միտքը» (1998) մենագրությունները և «Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.)» ուսումնական ձեռնարկը Է. Մինասյանի համահեղինակությամբ (2005) ու «Ռուսաստանի պատմության հիմնահարցեր (XIX դ.)» (2011) բուհական դասագիրքը: Պրոֆեսոր Հ. Աբրահամյանը հրատարակել է «Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները» (2009) ուսումնական ձեռնարկն ու «Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011թթ.» (2011) մենագրությունը: Պրոֆեսոր Հ. Մարգարյանը երկու մենագրությունների, դպրոցական և բուհական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների համահեղինակ է, իսկ դոցենտներ Ա. Դարբինյանը, Է. Զոհրաբյանը և դասախոս Ս. Սերոբյանը ուսումնական ուղեցույցների և շտեմարանների համահեղինակներ են:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Իր գոյությամբ 90 տարիների ընթացքում ամբիոնում գիտամանկավարժական լայն գործունեություն են ծավալել ճանաչված հայագետներ, հնագետներ և ազգագրագետներ Ա. Քալանթարը, Ս. Ավետիսյանը, Բ. Առաքելյանը, Ա. Աբրահամյանը, Թ. Խաչատրյանը, Ս. Եսայանը, Ա. Քալանթարյանը, Յու. Մկրտումյանը, Դ. Վարդումյանը և ուրիշներ: Վերջին տարիներին ամբիոնի դասախոսական կազմում կատարվել են էական փոփոխություններ: Այն համալրվել է նոր կադրերով, որոնք հիմնականում ֆակուլտետի նախկին սաներ են: Ներկայումս ամբիոնում որպես հիմնական դասախոսներ աշխատում են պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Գ. Ավետիսյանը (ամբիոնի վարիչ), պ.գ.դ., պրոֆեսորներ Ի. Գ. Ղարիբյանը, Ռ. Ա. Նահապետյանը, պ.գ.թ., դոցենտներ Հ. Պ. Հակոբյանը, Ա. Ս. Պետրոսյանը, Մ. Ռ. Գաբրիելյանը, դասախոս Հ. Թ. Հարությունյանը: Համատեղության կարգով ամբիոնում դասախոսական աշխատանք են կատարում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ, պրոֆեսորներ Մ. Մ. Հասրաթյանը, Լ. Հ. Աբրահամյանը, ասիստենտներ, պ.գ.թ. Ա.Ա. Բոբոխյանը և Ա. Վ. Գնունին:

Վերջին տարիների ընթացքում հնագիտության և ազգագրության ամբիոնի գործունեությունը ենթարկվել է լուրջ փոփոխությունների:

Կրթական գործընթացի կազմակերպմանը վերաբերող հիմնական փոփոխությունը Բոլոնիայի գործընթացի ներդրումն է և դրանով պայմանավորված՝ կրթական ծրագրերի ու կրթության բովանդակության համապատասխանեցումը Բոլոնիայի գործընթացի պահանջներին ոչ միայն տեխնիկական, այլև բովանդակային տեսանկյունից: Այս նպատակով անցած տարիների ընթացում ամբիոնում վերանայվել, թարմացվել ու նոր կրթական պահանջներին են համապատասխանեցվել գրեթե բոլոր դասընթացների ծրագրերը ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրոսական ծրագրերի մակարդակում: Մշակվել են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մասնագիտական նոր դասընթացներ հնագիտության և ազգագրության արդի զարգացումների, տեսական, մեթոդաբանական մոտեցումների հաշվառմամբ:

Կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով ամբիոնը շարունակել է մի կողմից կադրերի երիտասարդացման և մյուս կողմից ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ ակտիվ համագործակցության գործընթացը:

Վերջին տարիներին ամբիոնն ունեցել է ասպիրանտներ և՛ հնագիտության, և՛ ազգագրության գծով: Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ համագործակցության արդյունքում մագիստրոսական ծրագրերի շուրջ մեկ տասնյակ շրջանավարտներ աշխատանքի են անցել ինստիտուտի տարբեր բաժիններում: Հայաստանի տարածքում ակտիվ հնագիտական պեղումների իրականացումը բերել է նաև նրան, որ այսօր մագիստրոսական ծրագրի ունկնդիրները արդեն ուսումնառության ընթացքում մասնակցում են հնագիտական պեղումների, ձեռք բերում փորձառություն և իրենց իսկ պեղած նյութերի հիման վրա շարադրում մագիստրոսական թեզերը:

Ազգագրագետների հնարավորություններն այս առումով փոքր-ինչ սահմանափակ են, սակայն վերջին տարիներին ազգագրագետ-ուսանողները մասնակցում են տարբեր միջազգային հետազոտական ծրագրերի՝ այսպիսով ձեռք բերելով նաև մասնագիտական բավարար փորձառություն ու հմտություններ: Բակալավրական ծրագրի գործարկմամբ կլուծվեն կադրերի պատրաստման խնդիրները, որն առաջին տարիների համար կընձեռի արդեն նեղ մասնագիտացում ունեցող որակյալ կադրերի պատրաստման հնարավորություն:

Հնագիտության և ազգագրության ամբիոնի ուսումնագիտական աշխատանքները ընթացել են հետևյալ ուղղություններով.

Ա. Ուսումնակրթական. բացվել է մեկ նոր ծրագիր՝ «Հնագիտություն և ազգագրություն»: Կենսաբանության ֆակուլտետի հետ մշակվել է կրթական մագիստրական նոր ծրագիր: Վերանայվել, փոփոխվել և նոր գրականությամբ հարստացել են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մասնագիտական դասընթացները: Համալրվել է նաև ամբիոնի գրադարանային ֆոնդը. ստացվել է մեծ քանակությամբ անգլերենով ժամանակակից գրականություն՝ հնագիտության, ֆիզիկական մարդաբանության արդի հիմնախնդիրներին վերաբերյալ, ձեռք են բերվել ուսումնական ֆիլմեր, սարքավորումներ:

Բ. Դաշտային աշխատանքներ և հետազոտություններ. շա-

րունակվել են հնագիտական պեղումները Արամուսում, Հողմիկում, Բջնիում, Լոռի բերդում, Օշականում, Սյունիքում, որոնց մասնակցել են ամբիոնի դասախոսներն ու մագիստրատուրայի ուսանողները: Կազմակերպվել է հնագիտության արդի հիմնախնդիրների նվիրված սեմինարներ ամբիոնի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: Ամբիոնը իրականացնում է ՀՀ ԿԳ նախարարության գիտության կոմիտեի դրամաշնորհի շրջանակներում գիտական հետազոտություններ «Պատմական Սյունիքը բրոնզի և երկաթի դարերում, ըստ հնագիտական պեղումների նորագույն հնագիտական տվյալների» թեմայով (ղեկավար՝ պրոֆ. Հ. Ավետիսյան):

Ազգագրության գծով իրականացվել են հետազոտական ծրագրեր: Դաշտային ազգագրական նյութեր են գրառվել ՀՀ Վայոց ձորի, Արագածոտնի, Տավուշի մարզերում: Շարունակվել է «Հայաստան և Ռուսաստան. անցյալի դասերը և ներկա հեռանկարները» հետազոտական ծրագիրը՝ ՀՀ Գիտության պետական կոմիտեի և ՌԴ Հումանիտար գիտական հիմնադրամի համատեղ միջազգային դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Գ. Վերջին տարիներին ամբիոնի դասախոսները մասնակցել են հանրապետական և միջազգային գիտական կոնֆերանսների Երևանում, Գերմանիայում, Վրաստանում:

Հնագետները վերջին տարիների ընթացքում շարունակել են պեղել տասնյակ հուշարձաններ ՀՀ տարբեր մարզերում (Շիրակ, Արագածոտն, Կոտայք, Գեղարքունիք, Սյունիք և այլ մարզեր): Ամբիոնի անդամ հնագետների կողմից (Ի. Ղարիբյան, Հ. Ավետիսյան, Հ. Հակոբյան, Ա. Բոբոխյան. Ա. Գնունի և ուրիշներ) իրականացվող պեղումները լուրջ առաջընթաց են հայոց պատմության կարևոր շրջափուլերը նորովի դիտարկելու ու վերլուծելու տեսանկյունից: Ամենևին պատահական չէ, որ հնագիտական պեղումների մի մասն ունի միջազգային ուղղվածություն և իրականացվում է եվրոպական տարբեր երկրների ու ԱՄՆ-ի հնագետների հետ սերտ համագործակցության շրջանակներում:

Համագործակցությունը արտասահմանյան գործընկերների հետ հնարավորություն է տվել կազմակերպելու նաև գիտակրթական ուղղվածություն ունեցող այցեր տարբեր եվրոպական համալսարաններ ու հետազոտական կենտրոններ:

Պրոֆ. Հ.Ավետիսյանը ղեկավարել է Ինսբուրգի, Մյունխենի, Միլանի համալսարանների միջազգային արշավախմբերի պեղումները Արամուսում և Օշականում: Արտասահմանցի հնագետների հետ պեղումներ է կատարել Մասիս բլուր նոր քարեդարյան բնակավայրում: Հայաստանի հնագիտության վերաբերյալ դասախոսություններ է կարդացվել արտասահմանցի ուսանողների համար: Հ. Ավետիսյանը մասնակցել է Երևանում, արտերկրների մի շարք ուսումնական և գիտական կենտրոններում կայացած միջազգային գիտաժողովների աշխատանքներին: Նա մի քանի մենագրությունների և բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է:

Վերջին տարիներին պրոֆեսոր Հ. Ավետիսյանի հեղինակությամբ հրատարակվել է «Արագած» (ուրարտական ամրոցի պեղումներ) (2001) և «Արամուս» (հնագիտական հետազոտություններ) (Հալեպ, 2012) մենագրությունները: Նա համահեղինակ է «Հայոց պատմություն» առարկայի դպրոցական 6-րդ դասարանի դասագրքի և «Ուրարտոի հնագիտությունը» բուհական ուսումնական ձեռնարկի:

Պրոֆ. Ի. Ղարիբյանը մասնակցել է Լոռե բերդաքաղաքի պեղման և վերականգնման աշխատանքներին: Մշակույթի նախարարության առաջարկով ղեկավարել է Բջնի ամրոցի պեղումները: Պրոֆեսոր Ի. Ղարիբյանը մի քանի մենագրությունների, 8 տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Վերջին տարիներին նա հրատարակել է «Սուրբ Գեղարդ» (2003), «Արծափ-Մեղրաձոր» (2006), «Լոռե բերդաքաղաքը» (2009) մենագրությունները: Նա թարգմանել է բուհական երեք դասագիրք, այդ թվում Վ. Ալեքսեևի և Ս. Պերշիցի հեղինակած «Նախնադարյան հասարակության պատմությունը» (2012): Ի. Ղարիբյանը նաև դպրոցական 6 և 7-րդ դասարանների «Հայոց պատմություն» առարկայի դասագրքերի համահեղինակներից է:

Պ. գ. թ., դոցենտ Հայկ Հակոբյանը ղեկավարել է Հողմիկի հեթանոսական տաճարական համալիրի պեղումները: Համացանցում ներկայացրել է դասախոսություն «Ավարայրի ճակատամարտի քննական վերլուծության մասին» http://bon. Am/ vardanmamikonyan-hayk-hakobyan/: Հրատարակել է երկու մենագրու-

թյուն՝ «Տիգրան Մեծ» (2005), «Հայոց բանակը Երվանդունիների օրոք» (2013), 8 մենագրություններ համահեղինակությամբ, խմբագրել է «Հայկազունիների գիտական ժողովածուն»: Հ. Հակոբյանը մասնակցել է Վան քաղաքին նվիրված գիտաժողովին, 150-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է:

Պ. գ. թ., դոցենտ Ա. Բոբոխյանը պեղումներ է կատարել Սողքի և Մարգահովտի հնավայրերում, Արագածի լանջերին: Ուղեգծային արշավներ է իրականացրել Եղեգնաձորի, Գորիսի տարածաշրջաններում, Սելիմի լեռնանցքում: Ամփոփել և հրապարակման է նախապատրաստել Սոքքի, Մարգահովտի հուշարձանների, վիշապաքարերի, Եղեգնաձոր կատարած արշավի նյութերը: Տիպաբանել է Եղեգնաձորի, Աթթաշի և Սելիմի նորահայտ վիշապաքարերը: Տիպաբանվել և նորովի է թվագրվել Եղեգնաձորի և Գորիսի թանգարանների նյութերը: Էջմիածնի թանգարանում ուսումնասիրվել է Ռ. Թորոսյանի ֆոտոարխիվը՝ նվիրված Սևանա լճի ավազանի 1969 թ. և Շամիրամի 1973 թ. արշավախմբերի արդյունքներին: Նա «Հաղորդակցությունը և փոխանակությունը Կովկասի և Տավրոսի միջև մ.թ.ա. 2500-1500 թթ.» (Քեմբրիջ, 2008) գերմաներեն մենագրության հեղինակ է և «Ուրարտոի հնագիտությունը» բուհական ձեռնարկի համահեղինակ:

Ա. Բոբոխյանը մասնակցել է արտասահմանյան մի շարք գիտաժողովների և կարդացել դասախոսություններ Հայաստանի հնագիտության վերաբերյալ: Նա 7 տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ է:

Ազգագրագետները (Լ. Աբրահամյան, Ռ. Նահապետյան, Ա. Պետրոսյան, Ա. Թադևոսյան, Մ. Գաբրիելյան, Հ. Հարությունոյան և ուրիշներ) աշխատել են տարբեր ուղղություններով:

Պրոֆ. Ռ. Ա. Նահապետյանը հրատարակել է 4 ծավալուն մենագրություններ, 3 ուսումնամեթոդական ձեռնարկներ, 10 ուսումնամեթոդական ծրագիր, 80 գիտական հոդվածներ: Նա իր մենագրությունների մեծ մասը նվիրել է Հայաստանի պատմաազգագրական մարզերից ամենասակավ ուսումնասիրված պատմական Աղձնիքին (Արևմտյան Հայաստանի, ներկայիս Թուրքիայի տարածքում): Դրանք են՝ «Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը պատմաազգագրական ուսումնասիրություն» (2004), «Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը. պատմաազգագրական ուսումնասիրություն» (2007), «Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը. պատմաազգագրական ուսումնասիրություն» (2011) և «Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ). պատմաազգագրական ուսումնասիրություն» (2012):

Իբրև գիտական թեմա՝ աշխատում է «Հայ ազգագրության պատմություն» (հնագույն և վաղ միջնադարի շրջան), «Հայ ազգագրություն» բուհական դասագրքի վրա:

Պ. գ. թ., դոցենտ Ա. Ս. Պետրոսյանը հրատարակել է գիտության պատմությանն ու ազգագրական հիմնախնդիրներով զբաղված նվիրյալներին վերաբերող 6 տասնյակից ավելի գիտական հոդվածներ և երկու մենագրություններ, առանձին հոդվածներով անդրադարձել է նաև հայոց մշակույթի առանձին հիմնախնդիրներին:

Ա. Ս. Պետրոսյանը շարունակում է աշխատել գեղարվեստական գրականությունը ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուր հիմնախնդրի վրա: Վերջին տարիներին նրա հրատարակած մենագրություններից է «Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր» (2012) աշխատությունը:

Լ. Աբրահամյանը շարունակում է զբաղվել գիտության պատմության, տեսության, մեթոդաբանության կարևոր հիմնահարցերով՝ իր հետազոտությունների արդյունքները ներկայացնելով ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Պ. գ. թ., դոցենտ Մ. Ռ. Գաբրիելյանը շարունակել է ընդհանուր և մասնագիտական դասընթացներ վարել «պատմություն» և «կովկասագիտություն» բակալավրական և «հնագիտություն և ազգագրություն» ու «կովկասագիտություն» մագիստրոսական ծրագրերում: Մշակել է մասնագիտական ծրագրի նոր դասընթաց, մի քանի մենագրությունների հեղինակ է: Նա մասնակցել է «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» միջազգային համաժողովին, որտեղ հանդես է եկել «Առօրյա ազգայնականության և էթնիկության խորհրդային պատմությունը» թեմայով զեկուցմամբ, ինչպես նաև ԵՊՀ և Թբիլիսիի պետական համալսարանի կազմակերպած գիտաժո-

ղովին: Հանդես է եկել հարավկովկասյան հանրապետություններում հողի սեփականաշնորհման գործընթացին վերաբերող զեկուցմամբ ԵՊՀ ու Արիզոնային պետական համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովին: Մասնակցել է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող ծրագրի, ինչպես նաև վերջինիս և ՌԴ ՌՊՀՀ-ի համատեղ հետազոտական ծրագրին: Անհատական հետազոտական դրամաշնորհային ծրագրեր է իրականացրել «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» հիմնադրամի և ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի տրամադրած հետազոտական դրամաշնորհի շրջանակներում: Euroclio միջազգային կազմակերպության և Եվրամիության կողմից իրականացվող «Կիսելով պատմությունը. Մշակութային երկխոսություններ» ծրագրի շրջանակներում որպես հայաստանյան կողմի համակարգողներից մեկը սեմինար-քննարկումների է մասնակցել Հայաստանում և Վրաստանում: Մ. Գաբրիելյանը շարունակել է անցումային հասարակություններին, պատերազմի և էթնիկ կոնֆլիկտների մարդաբանությանը և առօրեականության մարդաբանությանը վերաբերող ուսումնասիրությունները՝ հոդվածներ հրատարակելով ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Նա հեղինակ և համահեղինակ է ավելի քան 10 մենագրությունների և շուրջ 70 գիտական հոդվածների: Նրա մենագրություններից է «Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը» (2001) աշխատությունը:

Ա. Թադևոսյանը Ֆուլբրայթի հետազոտական դրամաշնորհի շրջանակներում շուրջ մեկ տարի աշխատել է ԱՄՆ լավագույն բուհերից Բերքլիի համալսարանում՝ դիտարկելով սոցիալ-մշակութային փոխակերպումների տեսական, մեթոդաբանական ու կիրառական հիմքերը Հայաստանի և այլ անցումային հասարակությունների օրինակով:

Դասախոս Հ. Հարությունյանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արշավախմբի կազմում դաշտային ազգագրական հետազոտություններ է անցկացրել ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում: Պաշտպանության է ներկայացրել «Հովհաննես Թումանյանը և հայ ազգագրությունը» թեմայով թեկնածուական ատենախոսություն:

Պ. գ. թ., Ա. Գնունին պեղումներ է կատարել Կերենի դամբանադաշտում: Ուղեգծային արշավներ է կատարել Եղեգնաձորի, Գորիսի, Կապանի, ԼՂՀ Քաշաթաղի շրջանի տարածքներում: Ամփոփվել և հրատարակման է նախապատրաստվել Կերենի պեղումների նյութերը, աքեմենյան շրջանի կարասային թաղումների համատեքստում տիպաբանվել են դամբարանային կառույցները: Հրատարակվել են Քաշաթաղի շրջանի ուղեգծային արշավների արդյունքները: Ուսումնասիրվել են Բերձորի, Ստեփանակերտի, Կապանի և Եղեգնաձորի թանգարաններում պահպանվող ծորակավոր անոթները: Մշակել և հրատարակման է նախապատրաստել Կապանի պեղումների նյութերը: Էջմիածնի պատմաազգագրական թանգարանում մշակվում է Ռ. Թորոսյանի ձեռագիր ժառանգությունը:

Ամբիոնը ունի հնագետ-ազգագրագետներ, որոնք, ավարտելով ասպիրանտուրան, հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Ամբիոնը հրատարակել է շուրջ 200 գիտական հոդվածներ, մենագրություններ, դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ:

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԱՄԲԻՈՆ

Երևանի պետական համալսարանի հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնը ստեղծվել է 1996 թ. ապրիլին: Ամբիոնի հիմնադիր վարիչն է արվեստագիտության դոկտոր Լևոն Չուգասզյանը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանից, Հայաստանի ազգային պատկերասրահից, Երևանի պետական գեղարվեստի ակադեմիայից, Ռուս արվեստի թանգարանից պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնում դասավանդելու համար հրավիրվել են մասնագետներ:

Ամբիոնում որպես հիմնական դասախոսներ աշխատում են պ. գ. դ. Լ. Բ. Չուգասզյանը (ամբիոնի վարիչ), դոցենտներ Ս. Ս. Մանուկյանը, Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսովը, ասիստենտներ, արվ. գիտ. թեկնածուներ Զ. Ա. Հակոբյանը, Ի. Ն. Թաջարյանը, Լ. Ս. Պիպոյանը, Ս. Վ. Վարդանյանը, դասախոսներ Ս. Լ. Չուգասզյանը, Լ. Ս. Դավթյանը, Շ. Գ. Զոհրաբյանը, Լ. Շ. Միքայելյանը, Լ. Բ. Չուգասզյանը, Լ. Վ. Սարգսյանը, Հ. Է. Վարդանյանը, Մ. Ռ. Վարդանյանը և ուրիշներ: Համատեղության կարգով ամբիոնում աշխատում են պ. գ. թ., դոցենտ Ս. Գ. Հմայակյանը, ասիստենտներ, արվ. գիտ. թեկնածուներ Ս. Գ. Հովհաննիսյանը, Ա. Ա. Տեր-Մինասյանը, Գ. Հ. Տեր-Վարդանյանը, դասախոսներ Ի. Ռ. Բաղդասարյանը, Ա. Ռ. Աթայանը, Վ. Ս. Կալչուրինան, Դ. Գ. Ղազարյանը և ուրիշներ:

2013-2014 թթ. բակալավրիատում ամբիոնի թե՛ հիմնական և թե՛ հրավիրված դասախոսների կողմից արդեն դասավանդվում է 35, իսկ մագիստրատուրայում 21 մասնագիտական առարկա: Բաժինն ունի 300 ուսանող: Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնը, ստեղծված լինելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի դրամաշնորհով, տարբերվում է համալսարանի մյուս ամբիոններից իր գործունեության միջազգային կարգավիճակով, որն արտահայտվում է և՛ կրթական, և՛ գիտահետազոտական բնագավառներում: Իր հիմնադրման օրից հայ արվեստի պատմության ամբիոնը կազմակերպում է արվեստաբանության բաժնի ուսանողների (հայ արվեստի պատմություն, ճարտարապետություն, կիրառական արվեստ, թանգարանագիտություն, երաժշտության, թատրոնի, կինոյի պատմություն և համաշխարհային արվեստի պատմություն) առարկաների դասավանդումը: Բացի հայերենից և ռուսերենից՝ արվեստաբանության բաժնի ուսանողները սովորում են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն և նոր հունարեն:

Ամբիոնի դասախոսներից Լ. Չուգասզյանը, Ֆ. Տեր-Մարտիրոսովը և Ս. Մանուկյանը ղեկավարում են 5 իրանցի ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունները, որոնց աշխատանքները ներկայացվել են պաշտպանության: Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնը արվեստաբանության բաժնում պարբերաբար կազմակերպում է գիտական սեմինարներ, որտեղ զեկուցումներով հանդես են գալիս ամբիոնի դասախոսները և այլ երկրների գիտնականները, ներկայացնում են ընթացիկ տարում կատարած իրենց ուսումնասիրությունները: Ամբիոնի անդամները կարևոր ջանքեր են գործադրում ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքների ուղղությամբ: Տարիներ շարունակ ամբիոնում ծավալվում է գիտահետազոտական լայն գործունեություն, որն ընդգրկում է հայ արվեստի պատմության տարբեր ժամանակամիջոցների հիմնահարցերը: Առավելապես ուշադրության կենտրոնում են նախաքրիստոնեական շրջանի և միջնադարյան, նաև նոր ժամանակների հայ արվեստի բարդ ու քիչ ուսումնասիրված խնդիրները: Վերջին 3 տարիների ընթացքում ամբիոնում պաշտպանվել է 5 թեկնածուական ատենախոսություն, հրատարակվել է 9 մենագրություն, 2 ուսումնամեթոդական ձեռնարկ, 80-ից ավելի գիտական հոդված, ինչպես նաև ամբիոնի դասախոսները և ասպիրանտները մասնակցել են հանրապետական և միջազգային, այդ թվում նաև արտասահմանում կազմակերպված բազմաթիվ գիտաժողովների, ինչպես նաև դասախոսություններ են կարդացել տարբեր երկրներում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի դասախոսները տարիներ շարունակ հարյուրավոր հոդվածներ են հրատարակել բոլոր ժամանակների ու ժողովուրդների նկարիչների, քանդակագործների, ճարտարապետների գերմանական Դե Գրույթեր հանրագիտարանում, նաև արտասահմանի զանազան երկրներում հրատարակվող հանդեսներում և ժողովածուներում: Երևանի պետական համալսարանի արվեստաբանության բաժնի ուսանողներին դասավանդելուց բացի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի դասախոսները

տարիներ շարունակ առանձին դասախոսություններ են կարդացել օտար երկրներից ժամանած ուսանողների համար կազմակերպված ամառային դպրոցներում: Ամբիոնի դոցենտ Ֆ. Տեր-Մարտիրոսովը տարիներ շարունակ ղեկավարում է հայոց հնագույն մայրաքաղաք Երվանդաշատի պեղումները: Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնը 2013 թ. ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ստացել է դրամաշնորհ «Հայոց ցեղասպանությունից (1915-1923թթ.) փրկված հայ արվեստի նմուշները Ռումինիայում» թեմայի կատարման համար:

Ամբիոնի դասախոսների ուժերով հրատարակվել են մի քանի մենագրություններ և բազմաթիվ գիտական հոդվածներ: Վերջին տարիներին հրատարակված մենագրություններից են Լ. Չուգասզյանի «Արշակ Ֆեթվաճեան. Հայ արվեստի վարպետներ և գանձեր 1» (2011), Շ. Զոհրաբյանի «Վարդգես Սուրենյանցի գրքային նկարազարդումները» (2013), Ս. Վարդանյանի «Հիսուս Քրիստոսի կերպարը 20-րդ դարի հայ կերպարվեստում (1900-1920-ական թվականներ)», (2013) աշխատությունները: Մի քանի մենագրությունների և 9 տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է նաև դոցենտ Ս. Մանուկյանը: 4 մենագրությունների և 100-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է դոցենտ Ֆ. Տեր-Մարտիրոսովը: Դոցենտ Ս. Հմայակյանը ևս հրատարակել է մի քանի մենագրություններ և 8 տասնյակից ավելի գիտական հոդվածներ:

Ամբիոնի վարիչ Լ. Չուգասզյանը կազմակերպել է հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներ թե՛ Երևանում և թե՛ արտասահմանում. այսպես՝ 2005 թ. Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում Հայագիտական հետազոտությունների եվրոպական ասոցիացիայի հետ համատեղ կազմակերպվել է հայ արվեստին ու ճարտարապետությանը նվիրված միջազգային գիտաժողով, որին մասնակցող հայաստանյան պատվիրակության մաս են կազմել ամբիոնի ներկայիս ու նախկին մի քանի դասախոսներ: 2010 թվականի նոյեմբերի 15-17-ին Մոսկվայում տեղի ունեցավ միջազգային սիմպոզիում «Հայաստան-Ռուսաստան: Երկխոսություն գեղարվեստական մշակույթի տարածքում» խորագրով: Սիմպոզիումի կազմակերպիչներն էին Ռուսաստանի ճարտարապետության և շինարարական գիտությունների ակադեմիային կից՝ Ճարտարապետության և քաղաքաշինության տեսության գիտահետազոտական ինստիտուտը, ՌԴ մշակույթի նախարարությանը կից Արվեստագիտության ինստիտուտը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնը: Ամբիոնի 9 անդամներ կարդացել են զեկուցումներ: Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի մշակույթի նախարարությունների միջև կայացած համագործակցության պայմանավորվածության շրջանակներում ամբիոնի վարիչ Լ. Չուգասզյանը ռումինական կողմից նշանակված համակարգող, պատմաբան Ֆիորել Ակիմի հետ կազմակերպել է հայ-ռումինական պատմական և մշակութային առնչություններին նվիրված միջազգային գիտաժողով, որը տեղի է ունեցել Բուխարեստում 2013 թ. հոկտեմբերի 29-ից 31-ը, որի ժամանակ ելույթներով հանդես են եկել Լ. Չուգասզյանը, Ս. Մանուկյանը, Մ. Վարդանյանը և Ն. Սմբատյանը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ և Մատենադարանի մի շարք աշխատակիցներ, ռումինացի, ինչպես նաև Ֆրանսիայից, Գերմանիայից, Ուկրաինայից, Մոլդովիայից ժամանած գիտնականներ:

Ամեն տարի արվեստաբանության բաժնի ուսանողների համար դասախոսություններով ելույթ են ունենում հայ և արտասահմանցի նշանավոր գիտնականներ և արվեստագետներ: Ամբիոնի անդամների ջանքերով հիմնադրման օրից մինչ այսօր կազմակերպվել են ցուցահանդեսներ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Համալրվում են ամբիոնի սլայդադարանը և գրադարանը:

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

2002-2003 ուսումնական տարում ԵՊՀ պատմության ֆակուլտում ստեղծվեց մշակութաբանության բաժին՝ բակալավրի, իսկ 2006-2007 ուստարվանից՝ նաև մագիստրոսական ուսուցմամբ: Բաժինը մասնագետներ է պատրաստում մշակութաբանություն, մշակույթի տեսություն և պատմություն, մշակութային քաղաքականություն և ժամանակակից մշակութային գործընթացներ, պատմության և մշակութաբանության դասավանդում մասնագիտությունների գծով:

2007 թ. հունվարին ԵՊՀ պատմության ֆակուլտետի կազմում բացվեց մշակութաբանության ամբիոնը, որը ֆակուլտետի մշակութաբանության բաժնի ուսումնական ծրագրերի կազմողն ու դասընթացների իրականացման պատասխանատուն է, ինչպես նաև համահամալսարանական «Մշակութաբանություն» առարկայի դասավանդումն իրականացողը: Ամբիոնում որպես հիմնական դասախոսներ աշխատում են պ. գ. դ., պրոֆեսոր Հ. Լ. Պետրոսյանը (ամբիոնի վարիչ), պ. գ. թ., դոցենտներ Հ. Վ. Պիկիչյանը, Ն. Մ. Մարգարյանը, ասիստենտներ, պ.գ.թ. Յու. Անտոնյանը, Ռ. Ա. Մկրտչյանը: Համատեղության կարգով ամբիոնում դասախոսում են պ. գ. թ., պրոֆեսոր Հ. Ս. Փիլիպոսյանը, պ. գ. թ., դոցենտ Մ. Վ. Գալստյանը, ճարտ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Վ. Կիրակոսյանը, պ. գ. թ., ասիստենտներ Ա. Լ. Զոհրաբյանը, Թ. Լ. Հայրապետյանը, Հ. Լ. Մելքումյանը, Վ. Հ. Տեր-Մաթևոսյանը, արվ. գիտ. թեկնածու Ս. Ա. Նալբանդյանը և ուրիշներ:

Ներկայումս մշակութաբանության բաժնում մասնագիտական ուսուցումը տարվում է հետևյալ երեք հիմնական համալիրներով.

Ա. Մշակութաբանության և մշակույթի տեսության համալիրը ներառում է մշակութաբանության ներածություն, մշակույթը հումանիտար գիտությունների համակարգում, մարդաբանություն, մշակութային մարդաբանություն, կրոնի մարդաբանություն, մշակույթի փիլիսոփայություն, մշակույթի սոցիոլոգիա, հնագիտություն, ազգագրություն, բանգարանագիտություն, էթնոսոցիոլոգիա, մշակութային փոխառնչություններ, մշակույթի մասին տեսությունների պատմություն, մասնագիտության արդի խնդիրներ դասընթացները և մշակույթը հետազոտող մի շարք այլ գիտական համակարգեր:

Բ. Մշակույթի պատմության համալիրը ներառում է երկու ոլորտ՝ համաշխարհային մշակույթի պատմություն և հայ մշակույթի պատմություն:

Գ. Մշակութային քաղաքականության և ժամանակակից մշակութային գործընթացների համալիրը ներառում է մշակութային քաղաքականություն և մշակութային ժառանգություն, քաղաքական մշակութաբանություն, մշակույթի կառավարում և շուկայավարում, գենդեր և մշակույթ, ժամանակակից քաղաքային մշակույթ և այլ համակարգեր:

2008 թ. սեպտեմբերին ԲՈՀ-ի կոլեգիայի նիստի որոշմամբ մշակութաբանությունը ներառվեց գիտական աստիճանների շնորհման անվանացանկում:

Այսօր Մշակութաբանության մասնագիտության գծով ամբիոնն ունի բազմաթիվ ասպիրանտներ, հայցորդներ, ինչպես նաև մշակութաբանության առաջին գիտության թեկնածուն:

Կարճ ժամանակում ամբիոնում ստեղծվել է փորձառու դասախոսական կազմ, որի ջանքերով իրականացվում է մշակույթի ոլորտին վերաբերող տեսական և գործնական հիմնական գիտակարգերի դասավանդումը: Ամբիոնը լուրջ գործունեություն է ծավալել գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Ամբոնի վարիչ Համլետ Պետրոսյանն արդեն տասներորդ տարին է՝ ղեկավարում է Արցախի Տիգրանակերտի հնագիտական հետազոտության աշխատանքները: Նա Արցախի Տիգրանակերտի պատմահնագիտական հետազոտության նվիրված թեմատիկ խմբի ղեկավարն է, թեմայի կազմում ընդգրկված են նաև ամբիոնի դոցենտ Լյուբա Կիրակոսյանը և ասպիրանտ Նժդեհ Երանյանը: Ամեն տարի բաժնի հինգից վեց ուսանող մասնակցում է քաղաքի հետազոտությանը: Նրանք ստեղծել են «Տիգրանակերտին աջակցողներ» ուսանողական ակումբը, որն ամեն տարի կազմակերպում է «Մենք Տիգրանակերտում» խորագրով միջոցառումը, որի շրջանակներում կազմակերպվում են ցուցահանդես, ուսանողների նկարած ֆիլմի ցուցադրություն և ներկայացվում են Տիգրանակերտի հետազոտության վերջին արդյունքները:

Ամբիոնի վարիչ Հ. Պետրոսյանի նախաձեռնությամբ՝ նա-

խապատրաստվել և ստորագրվել է երկկողմ պայմանագիր՝ Երևանի պետական և Ֆլորենցիայի համալսարանների միջև, ըստ որի՝ մշակութաբանության ամբիոնն ու Ֆլորենցիայի համալսարանի միջնադարյան հնագիտության ամբիոնը կիրականացնեն «Հայաստանը մետաքսի ճանապարհի համատեքստում» գիտակրթական նախագիծը, որը նախատեսում է համատեղ հետազոտություն ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում, համատեղ սեմինարների և դասընթացների կազմակերպում, դասախոսների և ուսանողների փոխանակում: Այս համագործակցության շրջանակներում արդեն երկրորդ տարին է, ինչ Տիգրանակերտի հետազոտությանը մասնակցում են նաև Ֆլորենցիայի համալսարանի մասնագետները:

Ամբիոնի դասախոսներն ակտիվ գիտահետազոտական գործունեություն են ծավալում մշակութաբանության, մշակութային մարդաբանության և մշակութային ժառանգության ուսումնասիրման բնագավառներում: Պրոֆեսոր Հ. Պետրոսյանը հեղինակ և համահեղինակ է 10-ից ավելի մենագրությունների, 130-ից ավելի գիտական հոդվածների: Վերջին տարիներին նրա հրատարակած մենագրություններից առավել հայտնի են «Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը» (2008), «Խաչքար» (2014) աշխատությունները, Petrosyan H. L. Tigranakert: Historical-Cultural Reserve, "Goverment Tourism Department of Republic of Montainous Karabakh" (2011) անգլերեն ուսումնասիրությունը: Հռիփսիմե Պիկիչյանի հիմնական հետազոտությունները ներառում են էթնոերաժշտագիտության և թանգարանագիտության արդի խնդիրները: Նա նաև «Թանգարան» գիտատեսական-մեթոդական ամենամյա հանդեսի գլխավոր խմբագիրն է և Թանգարանային աշխատողների ու բարեկամների ասոցիացիա ՀԿ-ի նախագահը: Նրա ջանքերի շնորհիվ՝ բաժնի ուսանողներից շատերն իբրև կամավորներ ներգրավվում են թանգարանային գործունեության մեջ, իսկ լավագույնները հետագայում աշխատանքի են անցնում ՀՀ տարբեր թանգարաններում: Դոցենտ Հ. Պիկիչյանը 3 մենագրությունների և շուրջ 6 տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է: Վերջին տարիներին նրա հրատարակած մենագրություններից է «Երաժշտությունը հայոց ավանդական, առտնին և տոնածիսական կյանքում» (2012) աշխատությունը:

Նիկոլ Մարգարյանն ակտիվ հետազոտություններ է իրականացնում անունների մարդաբանության և երիտասարդական շարժումների բնագավառներում, որին մասնակցում են նաև այդ խնդիրներով հետաքրքրվող ուսանողները: Դոցենտ Ն. Մարգարյանը մի քանի մենագրությունների, բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

Յուլյա Անտոնյանը հետազոտում է ժամանակակից կրոնական գործընթացները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող «Մշակութային քաղաքականության կոմպենդիում» ծրագրի Հայաստանի ներկայացուցիչն է (http://www.culturalpolicies.net/web/index.php): Կոմպենդիումի համալրման վերջին աշխատանքներում ներգրավվել է նաև ամբիոնի ասպիրանտ Հայկուհի Մուրադյանը:

Ռուզան Մկրտչյանի գիտական ուսումնասիրությունների ոլորտը մարդաբանությունն է: Նրա ղեկավարությամբ հնագիտական արշավախմբերի հայտնաբերած մարդաբանական նյութի զննման և կանոնակարգման գործընթացին պարբերաբար մասնակցում են նաև ապագա մշակութաբան-մարդաբանները: Պ. գ. թ., ասիստենտ Ռ. Մկրտչյանը 2 մենագրությունների և 6 տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ է:

Բաժնի բոլոր դասախոսների հետազոտությունների արդյունքները հրատարակվում են հանրապետության և արտերկրի գիտական պարբերականներում, ներկայացվում հանրապետական և միջազգային հետազոտական ծրագրերի, սեմինարների և կոնֆերանսների ընթացքում: Ամբիոնի դասախոսները նաև պարբերաբար խորհրդատվական ծառայություններ են մատուցում ՀՀ մշակույթի նախարարությանը և այլ պետական ու ոչ պետական կազմակերպություններին:

Մշակութաբանության ամբիոնը համագործակում է Արմավիրի մարզում գործող «Տիգրան Մեծ» ռազմաուսումնական վարժարանի հետ, կազմակերպում թեմատիկ դասախոսություններ և ցուցահանդեսներ:

2009 թ.-ից ամբիոնը կազմակերպում է «Մշակույթը, պատմությունը և արդիականությունը» խորագրով մշակութաբանական ուսանողական ամենամյա կոնֆերանս, որտեղ զեկուցումներով հանդես են գալիս մշակութաբանության բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները: Զեկուցումների

քննարկմանը ամբիոնի դասախոսների հետ միասին մասնակցում են նաև ակադեմիական ինստիտուտների անվանի գիտաշխատողները և արտասահմանյան փորձագետները: Մինչ այժմ կազմակերպվել է հինգ գիտաժողով: Նախապատրաստման փուլում է լավագույն զեկուցումների ժողովածոի հրատարակման աշխատանքները:

Արդեն վեցերորդ տարին է, ինչ անգլիական «Friends of Armenia» կազմակերպության աջակցությամբ մշակութաբանության բաժնի բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողներին հատկացվում է երեք տարվա անընդմեջ և մեկ երկամյա կրթաթոշակ:

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Սփյուռքագիտության ամբիոնը հիմնադրվել է 2008 թ. աշնանը: Ամբիոնի առաջին վարիչ է նշանակվել բ.գ.դ., պրոֆեսոր Յու. Ավետիսյանը:

2009 թ. կազմակերպվել է ընդունելություն ամբիոնի նորաստեղծ մագիստրատուրայում:

2008 - 2013 թթ. ամբիոնը գործել է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի կազմում: Այդ տարիներին «Սփյուռքագիտություն» ծրագրով մագիստրատուրայում ուսանել է շուրջ 50 ուսանող:

2013 թ. ամբիոնը տեղափոխվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի կազմ: Ամբիոնի վարիչ է նշանակվել ամբիոնի դասախոս, պ. գ. դ. Ա. Եղիազարյանը:

Պատմության ֆակուլտետի կազմում ամբիոնի գործունեությունը հիմնվում է «Սփյուռքագիտության զարգացման հայեցակարգ»-ի սկզբունքների վրա: Դրանց հիման վրա 2014 թ. մշակվել է «Սփյուռքագիտություն» մագիստրոսական ծրագրի նոր առարկայացանկը, որը միտված է սփյուռքագիտությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն:

Մագիստրատուրայում ուսանողներին մատուցվում են գիտելիքներ միջկրթանքային մոտեցմամբ՝ Սփյուռքը և նրա հետ կապված զարգացումները դիտարկելով պատմագիտության, քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների, միջազգային իրավունքի, բանասիրության, լեզվաբանության և այլ գիտակարգերի տեսանկյուններից:

2014 թ. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, սփյուռքագիտության ամբիոնի և Համազգային հայ կրթական և մշակութային միության ներկայացուցիչները մշակել են «Հայագիտություն» մագիստրոսական ծրագիրը և համապատասխան առարկայացանկը: Այդ ծրագիրը կգործի 2014 թվականից:

Բացի կրթական գործունեությունից՝ իր կարճատև գոյության ընթացքում ամբիոնը ծավալել է նաև գիտական զգալի աշխատանք: Ամբիոնի դասախոսներն իրենց մասնակցությունն են բերել ՀՀ սփյուռքի նախարարության դրամաշնորհով հրատարակվող «Սփյուքագագիտություն» տարեգրքի պատրաստման

աշխատանքներին: Տարեգրքի 2012 և 2013 թթ. հատորներում զետեղվել են Սփյուռքի տարբեր ոլորտներին առնչվող գիտական բազմաթիվ հոդվածներ և հաղորդումներ:

Գործունեության շուրջ 5 տարիների ընթացքում ամբիոնի աշխատակիցները հրատարակել են մեկ տասնյակից ավելի մենագրություններ և մի քանի տասնյակ գիտական հոդվածներ:

Ավանդական ուղղագրության և արևմտահայերենի դասավանդման համար կարևոր նշանակություն ունեն բ.գ.դ., պրոֆեսոր Յու. Ավետիսյանի «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն» (2011), «Արևմտահայերենի քերականության գործնական աշխատանքների ձեռնարկ» (2011), բ.գ.թ., դոցենտ Մ. Ֆելեքյանի «Ավանդական ուղղագրություն. սկզբունքներ, վարժություններ, թելադրական նյութեր» (2009) և բ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Սուքիասյանի «Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները» (2004) աշխատությունները:

Առանձին երկրների հայ համայնքներին անդրադարձել է պ.գ.թ., դոցենտ Հ. Ալեքսանյանը՝ «Հայկական համայնքները Խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ.» (2014) մենագրության մեջ:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցին և դրանում տարբեր պետությունների հայկական համայնքների խաղացած դերին են վերաբերում պ.գ.թ., դոցենտ Ա. Մարուքյանի «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները» (2014) մենագրությունը:

Սփյուռքագիտության տարբեր խնդիրներին և առանձին երկրների հայ համայնքներին նվիրված արժեքավոր հոդվածներով հանդես են եկել պ.գ.դ. Ա. Եղիազարյանը, դոցենտներ Հ. Ալեքսանյանը, Ա. Մարուքյանը, Է. Հովհաննիսյանը:

Ամբիոնի ներկայացուցիչները սփյուռքագիտությանն առնչվող զեկուցումներով հանդես են եկել մի շարք միջազգային և հանրապետական գիտաժողովներում: Պ.գ.դ. Ա. Եղիազարյանը 2011 թ. Երևանում տեղի ունեցած միջազգային գիտաժողովում հանդես է եկել «Հայաստանի առաջին հանրապետության նախկին ղեկավարության հաստատումը Սփյուռքում. «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծումը (հայեցակարգային որոշ դիտարկումներ)», իսկ Նիժնի Նովգորոդում կայացած միջազգային գիտաժողովում "Из истории развития Армянской Диаспоры: Духовная Армения" զեկուցումներով: Ամբիոնի դասախոս, պ.գ.թ., դոցենտ Ա. Մարուքյանը 2012 թ. տեղի ունեցած «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովում հանդես է եկել «Թուրքական ժխտողականությունը և Հայոց ցեղասպանության դատապարտման ու հատուցման նոր ռազմավարության անհրաժեշտությունը» վերտառությամբ զեկուցումով:

Ամբիոնի համար կարևոր նշանակություն ունի համագործակցությունը Բեյրութի Հայկազյան համալսարանի հետ, որի արդյունքում կազմակերպվել են երեք գիտաժողով: 2011 թ. սեպտեմբերի 2-9-ը Բեյրութում տեղի ունեցավ «Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները երեկ, այսօր, վաղը» խորագրով գիտաժողովը, որտեղ զեկուցումներով հանդես եկան ամբիոնի ներկայացուցիչներ բ.գ.դ., պրոֆեսոր Յու. Ավետիսյանը, պ.գ.դ. Էդ. Մելքոնյանը բ.գ.թ., դոցենտ Ս. Սրապիոնյանը և բ.գ.թ. Լ. Ավետիսյանը:

2013 թ. մարտի 13-14-ին կազմակերպվեց «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում» միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են բազմաթիվ գիտնականներ Հայաստանից և արտերկրից: Գիտաժողովին ամբիոնի դասախոսներից «Հայկական քաղաքակրթությունը և հայության պատմական հեռանկարները» թեմայով զեկուցմամբ հանդես է եկել պ.գ.դ. Ա. Եղիազարյանը:

2014 թ. մայիսի 14-16-ը Բեյրութում տեղի ունեցած «Լիբանանի հայերը» միջազգային գիտաժողովում «Լիբանանի հայ համայնքը և մոդելային Սփյուռքի խնդիրը հայ իրականության մեջ» խորագրով զեկուցմամբ հանդես եկավ պ.գ.դ. Ա. Եղիազարյանը:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՄԲԻՈՆ

Հայոց լեզվի ամբիոնը համալսարանի հիմնադրումից կարճ ժամանակ անց դարձավ համալսարանի այն ստորաբաժանումներից, որոնք էական դեր խաղացին ու խաղում են հայերենագիտության ուսումնասիրման ազգանվեր գործում: Ի սկզբանե հայերենի ուսուցումը դրվեց ամուր հիմքերի վրա. հայոց լեզու էին դասավանդում այնպիսի ականավոր մտավորականներ, ինչպիսիք են Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Ստ. Մալխասյանցը, Գ. Սևակը, Ա. Ղարիբյանը և ուրիշներ: Նրանք իրենց գիտական գործով և մանկավարժական գործունեությամբ մեծ նպաստ բերեցին հայագիտության զարգացմանը, աջակցեցին սերունդների հայեցի դաստիարակմանը: Հայոց լեզվի ամբիոնի մեծագույն ձեռքբերումներից է՝ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» (1926 - 1935 թթ.). ամփոփում է հեղինակի շուրջ 40 տարվա տքնաջան աշխատանքի արդյունքը, կոթողային աշխատություն է համաշխարհային լեզվաբանության մեջ և ուրույն տեղ ունի հենց իր՝ ականավոր լեզվաբանի մեծաթիվ աշխատությունների շարքում: Գիտական լուրջ ձեռքբերումներ էին Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսությունը» (1931թ.), որի դրույթներով շարունակում է զարգանալ հայ քերականագիտական միտքը, Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացը» գիրքը (1955): Այս և դրանց հաջորդած աշխատությունները մեծ դեր ունեցան հայ լեզվաբանության առաջընթացի, հետագա սերունդների գիտական դաստիարակության գործում: Հայոց լեզվի ամբիոնի գիտական-մանկավարժները մենագրություններին զուգընթաց ստեղծում են նաև բուհական և դպրոցական դասագրքեր՝ դրանցով ոչ միայն աճող սերնդին ուսուցանելով տեսական գիտելիքներ, այլև նրանց հոգիներում դաստիարակելով սեր դեպի մայրենի լեզուն:

Համալսարանի հիմնադիր երախտավորներին փոխարինեցին իրենց գործի նվիրյալներ՝ Էդ. Աղայան, Ա. Սուքիասյան, Ալ. Մարգարյան, Մ. Ասատրյան, Ս. Գյուլբուդաղյան, Ռ. Իշխանյան, Հ. Հարությունյան, Գ. Գարեգինյան, Ս. Գալստյան, Ա. Պապոյան, Խ. Բատիկյան և ուրիշներ:

Այսօր էլ գիտական բարձր մակարդակով և մտավորականի բարեխղճությամբ նախորդների բարի ավանդույթներն են շարունակում ամբիոնի վաստակաշատ դասախոսները: Փորձառու մանկավարժ-գիտնականների ձեռքով գրվել ու գրվում են գիտական ու մեթոդական բազմաբնույթ աշխատություններ, շարունակվում են գիտական ավանդները, և չի դադարում հայագիտության զարգացումը:

Վերջին տարիների ընթացքում հրատարակվել են գիտական բազմաթիվ աշխատություններ, դասագրքեր, մենագրություններ, ձեռնարկներ՝ «Հայոց լեզվի ոճագիտություն» (Լ. Եզեկյան, 2007), «Հրաչյա Աճառյան մարդը և գիտնականը» (Խ. Բաղիկյան, 2006), «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» (2008), «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն» (Յու. Ավետիսյան, 2007), «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», Գիրք Ա, (2014), «Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր» (Զ. Աղաջանյան, 2007), «Աստվածաշնչի հատկանվանագիտություն» (Փ. Մեյթիխանյան, 2008), «Հայերենի ուղղագրական նոր բառարան» (2013), «Շարահյուսական կառույցները և դրանց ոճական արժեքը Ակսել Բակունցի պատմվածքներում» (Ն. Ներսիսյան, 2008), «Թելադրության նյութերի ժողովածու» (համահեղինակներ՝ Ա. Տեր-Մինասյան և Ա. Սարգսյան, 2009), «Հայերենի եղանակաժամանակային ձևերը և վրացերենի բայաշարքերը» (Շ. Գևորգյանի, 2009), «Ռուս-հայերեն թեմատիկ համառոտագրությունների և հապավումների բառարան» (Գ. Ներսիսյան, համահեղինակ՝ Ա. Գ. Սարգսյան, 2010), «Ժամանակակից հայոց լեզվի գործնական պարապմունքների ձեռնարկ» (Ռ. Մարգարյան, 2010), «Հայոց լեզու» (Լ. Եզեկյան, համահեղինակներ՝ Սաքապետոյան Ռ., Սարգսյան Ա., 2010 - 2011), «Խորհրդահայ կատակերգությունը 60-80-ական թվականներին» (Ա. Տեր-Մինասյան, 2012), «Գրականությունը և ազգային լեզվամտածողությունը» (Ա. Սարգսյան, 2012), «Հայոց լեզվի դպրոցական դարձվածաբանական բառարան» (Ք. Սուքիասյան, 2013):

Մշակույթի, գրականության և արվեստի ասպարեզում ՀՀ պետական, կառավարական, գերատեսչական պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների են արժանացել ամբիոնի մի շարք դասախոսներ, պրոֆեսորներ Ս. Գալստյանը, Խ. Բաղիկյանը, Լ. Եզեկյանը, Յու. Ավետիսյանը, Ռ. Սաքապետոյանը, դոցենտներ Ա. Սարգսյանը, Ա. Տեր-Մինասյանը, Լ. Թելյա-

նը և այլք:

Ամբիոնի ասիստենտ Ա. Քամալյանը 2009-2010 ուստարում միջկառավարական պայմանագրի շրջանակներում գործուղվել է Բուլղարիայի Հանրապետության Սոֆիայի Սբ. Կլիմենտ Օխրիդսկու համալսարան: Հայոց լեզու և գրականություն է դասավանդել Սոֆիայի համալսարանի հայագիտության ամբիոնում:

Ամբիոնի աշխատակիցներն ակտիվորեն մասնակցում են համալսարանի գիտական և հասարակական կյանքին, զեկուցումներով հանդես են գալիս հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

2013 թ. հոկտեմբերի 17-ին և 18-ին «Հայագիտությունը և արդի մարտահրավերները» միջազգային հայագիտական համաժողովում զեկուցումներ են կարդացել դոց. դոց. Լեոնիդ Թելյանը, Փառանձեմ Մեյթիխանյանը, Կարինե Միքայելյանը: 2014 թ. մարտի 24-ին և 28-ին ԵՊՀ-ի և Թբիլիսիի պետական համալսարանի համատեղ միջազգային գիտաժողովին մասնակցել է դոց. Բագրատ Ներսիսյանը: 2014 թ. մայիսի 13-ին և 14-ին «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային երկրորդ գիտաժողովում զեկուցումներ են կարդացել պրոֆեսորներ Յուրի Ավետիսյանը, Աննա Աբաջյանը, դոցենտներ Բագրատ Ներսիսյանը, Անահիտ Ադիլխանյանը և ասիստենտ Շուշան Գևորգյանը:

Հայոց լեզվի ամբիոնը 2014 թվականից նախաձեռնում է գրական հայերենի կանոնարկման խնդիրների վերաբերյալ քննարկումների շարք՝ «Արդի գրական հայերենը. կանոն և զարգացում» խորագրով: 2014 թ. մարտի 17-ին տեղի ունեցավ այդ շարքի առաջին նախագծի («Հարադրավոր բաղադրյալ հատուկ անուններում և հապավումներում մեծատառերի գործածության մասին») քննարկումը, որին մասնակցեցին մասնագետներ ՀՀ ուսումնական տարբեր հաստատություններից, կազմակերպություններից: Կազմվեց նախագիծ ՀՀ լեզվի պետական տեսչություն ներկայացնելու համար:

Մեծ է հայոց լեզվի ամբիոնի դերը նաև երիտասարդ կադրերի պատրաստման գործում:

Լեզուն ազգային բացարձակ արժեք է. նրա գիտական և գործնական ուսումնասիրությունն ու զարգացումը ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի առաջնային խնդիրն է:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Հայոց լեզվի պատմության ամբիոնը հայոց լեզվի ամբիոնից առանձնացել է 1985 թվականից: Նոր ամբիոնի կազմավորումն անհրաժեշտություն էր. հայոց լեզվի պատմությունն արդեն ինքնուրույն գիտակարգ էր իր ճյուղավորումներով՝ գրաբարագիտություն, պատմական բարբառագիտություն, միջինհայերենագիտություն, բառարանագրություն, պատմական ոճաբանություն և այլն: Հայոց լեզվի պատմության ամբիոնում համախմբվել են հայոց լեզվի պատմության բոլոր շրջափուլերի քննության և դասավանդման մեջ խորամուխ գիտնական-մանկավարժներ: Ամբիոնի հիմնադիր վարիչը բ.գ.դ. պրոֆ. Հովհ. Բարսեղյանն էր, որին 1990-95 թթ. հաջորդեց բ.գ.դ. պրոֆ. Մանվել Ասատրյանը: Հովհաննես Բարսեղյանը խորամուխ եղավ հայոց լեզվի քերականության, ուղղագրության և ուղղախոսության, տերմինաբանության ոլորտներում, վերջին շրջանում՝ տեղանվանագիտության: Նա կազմել է «Հայերենի ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» (1973), համահեղինակն է հինգհատորյա «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» (1986-2001), գրել է բազմաթիվ հոդվածներ, մենագրություններ, դպրոցական դասագիրք:

Բ.գ.դ. պրոֆ. Մանվել Ասատրյանը (1926-2000) ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության լավագույն գիտակներից էր, վերլուծաբան բարբառագետ, գրել է եռահատոր «Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր» մենագրությունը, «Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն» բուհական դասագիրքը, «Ուրմիայի (Խոյի) բարբառը» (1962), «Լոռվա խոսվածքը» (1968) և այլ աշխատանքներ:

1995 թ. մինչ 2011 թ. ամբիոնի վարիչ եղել է բ.գ.դ. պրոֆ. Ռուբեն Ղազարյանը: Ամբիոնի գործունեության ակունքներում կանգնած են եղել վաստակաշատ հայագետներ, մեծանուն գիտնականներ՝ Ռաֆայել Իշխանյանը, Մանվել Ասատրյանը, Վազգեն Գևորգյանը, Պավել Շարաբխանյանը, Էմմա Մկրտչյանը, Բարմիկ Մեժունցը, Խորեն Պալյանը:

Այսօր ամբիոնն ունի 13 աշխատակից, որոնցից 1-ը՝ դոկտոր, բ.գ.թ. դոցենտ են 6-ը, ասիստենտ են 4-ը, դասախոս են 2-ը:

2009 թ. առ այսօր հայոց լեզվի պատմության ամբիոնը ղե-

կավարում է բ.գ.դ. պրոֆ. Ռ. Սաքապետոյանը: Ռուբեն Սաքապետոյանը հեղինակ է մենագրությունների, բուհական «Արևմտահայերենի դասագրքի», համահեղինակ է դպրոցական դասագրքերի, ինչպես նաև արևմտահայերեն-արևելահայերեն բառարանի, որի 2011 թ. հրատարակությունը («Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարանը») ընդգրկում է շուրջ 20000 բառ և դարձվածային միավոր:

Ամբիոնն իրականացնում է եռանդուն կրթական գործունեություն ԵՊՀ տարբեր ֆակուլտետների և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում: Ամբիոնի դասախոսները տարբեր դասընթացներ են վարում բակալավրիատում՝ գրաբար, բարբառագիտության հիմունքներ, գրաբարի և արդի հայերենի ընդհանրությունները և տարբերությունները, հայոց տեղանվանագիտություն, միջին հայերենի հոլովումը և խոնարհումը և այլն: 13 դասընթաց հաստատված է մագիստրատուրայում՝ հայ գրական լեզվի պատմություն, անվան քերականական կարգերի դրսևորումը, գրաբարի նախդիրները, կիլիկյան բարբառները, գրաբար բնագրերի աշխարհաբար թարգմանությունները, դասական գրաբարի առանձնահատկությունները, միջին հայերենի բառապաշարը, քերականությունը և այլն:

Ամբիոնի դասախոսներն ամեն տարի ղեկավարում են ՈՒԳԸ զեկուցումներ, կուրսային աշխատանքներ, դիպլոմային ավարտաճառեր բակալավրիատում և մագիստրատուրայում, թեկնածուական ատենախոսություններ: Ամբիոնն ունի 1 ասպիրանտ և 2 հայցորդ: Ամբիոնի առաջատար դասախոսները ղեկավարում են թեկնածուական թեզեր, պաշտոնական ընդդիմախոսներ դառնում, զբաղվում խմբագրական և գրախոսական աշխատանքով: Բ.գ.դ. պրոֆ. Ռ. Սաքապետոյանը ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի աստիճանաշնորհող խորհրդի անդամ է:

Վերջին տարիներին արտասահմանում նկատելիորեն մեծացել է հետաքրքրությունը գրաբարի և միջին հայերենի հանդեպ: Ամբիոնում պարբերաբար վերապատրաստվում են ստաժորներ Ռուսաստանից, Ուկրաինայից, Իրանից, Չեխիայից, Իտալիայից, Ֆրանսիայից:

Ամբիոնի աշխատակիցները մանկավարժական գործունեությունը մշտապես զուգակցել են գիտահետազոտական աշխատանքի հետ: Ամբիոնի գոյության 24 տարիների ընթացքում ստեղծվել են բուհական մեծարժեք դասագրքեր, ձեռնարկներ, մենագրություններ, բառարաններ, հոդվածներ:

Ռուբեն Ղազարյանը կազմել է «Գրաբարի բառարան» (երկհատոր), «Գրաբարի հոմանիշների բառարան», Հենրիկ Ավետիսյանի հետ՝ «Նորահայտ բառերը գրաբարում» արժեքավոր գործերը: Ավելի վաղ այս երկու գիտնականները կազմել և հրատարակել են «Միջին հայերենի բառարանը» (երկհատոր), գրաբարի և հայոց լեզվի պատմության գործնական ձեռնարկներ: Ռ. Ղազարյանը կազմել է նաև «Թուրքերեն-հայերեն» բառարան, ինչպես նաև կենդանիների, թռչունների, բույսերի անուններին վերաբերող բազմալեզվյան բառարաններ, գրել տեսական մենագրություններ, հոդվածներ հայ բառարանագրության պատմության, միջին հայերենի, գրաբարի, աշխարհաբարի վերաբերյալ:

Բ.գ.դ. Գուրգեն Մանուկյանը մի շարք մենագրություններ, հոդվածներ է հրապարակել գրաբարի նախդրագործածության վերաբերյալ տարբեր դարերում և՛ պատմագրության մեջ, և՛ պոեզիայում: Դոցենտ Գ. Հանանյանի ուշադրության կենտրոնում հայերենի բարբառներն են, նա հեղինակել է «Սվեդիայի բարբառը» աշխատությունը, բազմաթիվ հոդվածներ: Դոցենտ Ն. Դիլբարյանը հետազոտում է հայերենի հատուկ անունները, ի մասնավորի՝ տեղանունները, ինչպես նաև՝ հայերենի բառապաշարը պատմական կտրվածքով: Նա հեղինակն է «Անվան ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ», «Պատմաշխարհագրական և լեզվական գործոնները հայերենի տեղանուններում» աշխատությունների, տարբեր հոդվածների: Դոցենտ Ա. Խաչատրյանի հետ Ն. Դիլբարյանը գրել և տպագրել է «Հայերենի բնիկ և փոխառյալ բառերը» դասախոսությունների շարքը: Դոցենտ Ա. Խաչատրյանը մասնագիտանում է հայոց անձնանունների ուսումնասիրության մեջ, գրել է հոդվածներ, հրապարակել մենագրություն «Անձնական վերաբերմունքի վերջածանցների գործառության պատմական ընթացքը գրական հայերենում»: Դոցենտ Ա. Յուզբաշյանը հայերենում բայի պատմական զարգացման և փոփոխությունների հարցերով է զբաղվում, հեղինակն է «Գրաբարի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը և նրանց ձևագործառական հետագա զարգացումը» աշխատության և այլ հոդվածների: Դոցենտ Ս. Գրիգորյանը

խորամուխ է հայերենի գունանունների ուսումնասիրության մեջ մեր լեզվի տարբեր շրջափուլերում, տպագրել է երկու մենագրություն գունանունների բառակազմական, քերականական, ոճական առանձնահատկությունների վերաբերյալ՝ «Հայերենի գունանունները և նրանց լեզվաոճական արժեքը», «Հայերենի գունանունները բույսերի և կենդանիների անվանումներում» և այլն:

Դոցենտ Ն. Պողոսյանը զուգակցում է տեղանունների ուսումնասիրությունը և գրաբարագիտությունը, հայոց տեղանունների բառակազմությանը նվիրված աշխատության և ուսումնական ձեռնարկի հեղինակն է: Ասիստենտ Ն. Պարոնյանը գրել և հրատարակել է «Հովհ.Թումանյանը և հայ նոր գրական լեզվի հարցերը» մենագրությունը և գրաբարի քերականության հիմնախնդիրներին վերաբերող հոդվածներ:

Հայոց լեզվի պատմության ամբիոնի դասախոսները մշտապես մասնակցել և մասնակցում են հանրապետությունում և համալսարանում կազմակերպվող միջազգային գիտական նստաշրջաններին, գիտաժողովներին և զեկուցումներ կարդում, որոնց թեզիսները հրապարակված են: Ներգրավված են գիտական տարբեր ծրագրերում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ընդհանուր լեզվաբանության ամբիոնը Երևանի պետական համալսարանի հնագույններից է: Ամբիոնի առաջին վարիչ է նշանակվել Գ. Ղափանցյանը, որն ընդմիջումներով այն ղեկավարել է մինչև 1956 թվականը: Տարբեր տարիների ամբիոնի վարիչ է եղել նաև Հ. Աճառյանը: Այնուհետև ամբիոնը ղեկավարել են Է. Աղայանը (1956-1985), Հ. Պետրոսյանը (1985-1995), Է. Ավետյանը (1995 թ.՝ մի քանի ամիս), Յ. Գաբրիելյանը (1995-1997), Լ. Հովսեփյանը (1997-2013): 2013 թ. հունիսից ամբիոնի վարիչն է Վ. Պետրոսյանը:

Ամբիոնի հիմնադրման օրից նրա դասավանդման ծրագրի մեջ եղել են ինչպես ընդհանուր լեզվաբանական, այնպես էլ հայագիտական առարկաներ:

Տարիների ընթացքում ամբիոնի մասնագիտական ուղղվածությունը փոփոխվել է: Բուն հայագիտական առարկաները այժմ կենտրոնացված են ժամանակակից հայոց լեզվի և հայոց լեզվի պատմության ամբիոններում, իսկ ընդհանուր լեզվաբանության ամբիոնում դասավանդվում են լեզվաբանության տեսության և համեմատական լեզվաբանության բնագավառի մի շարք ընդհանուր, մասնագիտական և կամընտրական առարկաներ, որոնց ցանկը անցյալի համեմատությամբ զգալիորեն ընդլայնվել է՝ լեզվաբանության հիմունքներ, ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանական ուսմունքների պատմություն, լեզվաբանական տիպաբանություն, լեզվաբանական նշանագիտություն, լեզվափիլիսոփայություն, հայերենի համեմատական քերականություն, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն, լեզվաբանական հետազոտության մեթոդներ և այլն: Մագիստրատուրայում ավանդվում է մասնագիտության արդիական խնդիրներ առարկան: Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի մյուս հիմնական ուղղությունը (1995 թվականից) դասական լեզուների՝ հին հունարենի և լատիներենի գործնական ուսուցումն է: Հայ բանասիրության ֆակուլտետում 2001 թվականից ավելացել է վրացագիտություն, իսկ 2005 թ.-ից դասական լեզուներ (հին հունարեն) մասնագիտացումը, որոնց ուսումնամեթոդական աշխատանքները ևս մինչև 2014 թ. հունիս ամիսը համակարգվում էր ընդհանուր լեզվաբանության ամբիոնի շրջ-

ջանակներում:

Ամբիոնի դասախոսները սպասարկում են հումանիտար բնագավառի մի շարք ֆակուլտետների՝ հայ, ռուս, ռոմանագերմանական բանասիրությունների, արևելագիտության, պատմության, աստվածաբանության (ընդհանուր լեզվաբանական առարկաներ և դասական լեզուներ), ինչպես նաև բնագիտական բնագավառից՝ քիմիայի և կենսաբանության ֆակուլտետներին (լատիներեն):

Ամբիոնում երկար տարիներ դասավանդել են այնպիսի նշանավոր գիտնականներ, ինչպիսիք են Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Ղարիբյանը, Ս. Ղազարյանը, Գ. Սևակը, Գ. Ջահուկյանը, Է. Աղայանը, Է. Աբայանը, Է. Ավետյանը, Հ. Պետրոսյանը և ուրիշներ, որոնք ոչ միայն եղել են փորձված և հմուտ դասախոսներ, այլև իրենց գիտական աշխատություններով նշանակալից ավանդ են ներդրել Հայաստանում լեզվաբանության տեսության և համեմատական լեզվաբանության բնագավառում: Նրանցից շատերի աշխատությունները հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլև ստացել են միջազգային ճանաչում: Բավական է հիշատակել Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի», «Հայերեն արմատական բառարան», «Հայոց անձնանունների բառարան», «Հայոց լեզվի պատմություն», Գ. Ղափանցյանի «Հայասան հայերի բնօրրան», «Ընդհանուր լեզվաբանություն», «Հայոց լեզվի պատմություն. հին շրջան», Ս. Ղազարյանի «Միջին հայերեն», «Հայոց գրական լեզվի պատմություն», Է. Աղայանի «Լեզվաբանության հիմունքներ», «Հայ լեզվաբանության պատմություն», «Արդի հայերենի բացատրական բառարան», «Գրաբարի քերականություն. հնչյունաբանություն», Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն», «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները», «Հայոց լեզվի համեմատական քերականություն» (ռուս.), «Հայերեն ստուգաբանական բառարան», «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան», «Լեզվի համընդհանուր տեսություն» (ռուս.), Հ. Պետրոսյանի «Գոյականի թվի կարգը հայերենում», «Հայերենագիտական բառարան», Է. Աբայանի «Լեզվական ոլորտի կազմակերպման և գործառման հայեցակերպերը», «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը», Է. Ավետյանի «Իմաստ և նշանակություն» (ռուս.), «Նշանագիտություն և լեզվաբանություն» (ռուս.) հիմնարար աշխատությունները:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ամբիոնի աշխատակիցները հրատարակել են տասնյակ մենագրություններ ու հարյուրավոր հոդվածներ, որոնք ոչ միայն շարունակել են դասական հայագիտության ավանդները, այլև ժամանակակից հայ լեզվաբանությունը մեծապես հարստացրել են տեսական նոր գաղափարներով, լեզվաբանական հետազոտության նոր մեթոդներով, լեզվի ուսումնասիրության նոր բնագավառներով, ինչպիսիք են հոգելեզվաբանությունը, հանրալեզվաբանությունը, լեզվանշանագիտությունը, լեզվափիլիսոփայությունը, լեզվի կառուցվածքային նկարագրությունը, լեզվավիճակագրությունը և այլն: Ամբիոնը պատրաստել է երիտասարդ լեզվաբանների մի ամբողջ սերունդ, որոնք լեզվաբանական առարկաներ են դասավանդում հանրապետության տարբեր բուհերում:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն է՝ Վ. Պետրոսյան (ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոց.) Լ. Հովսեփյան, (բ.գ.դ., պրոֆ.), Ա. Աբրահամյան, Ա. Հայրապետյան, Ծ. Հարությունյան (բ.գ.թ., դոցենտներ), Օ. Վարդազարյան (փիլ.գ.թ., ասիստենտ), Ն. Մկրտչյան, Ս. Ավետյան (բ.գ.թ., դոցենտ) Կ. Գրիգորյան (դասախոս), Է. Ասատրյան (լաբորանտ): Ամբիոնն ունի 7 ասպիրանտ ու հայցորդ՝ ընդհանուր և կիրառական լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, համեմատական և տիպաբանական լեզվաբանություն, հոգելեզվաբանություն մասնագիտությունների գծով: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ամբիոնում պատրաստվել և հաջողությամբ պաշտպանվել են բազմաթիվ թեկնածուական ատենախոսություններ:

Իր ոչ մեծ անձնակազմով ամբիոնն աշխատում է պահպանել անցյալի լավագույն ավանդույթները ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Ներկայումս ամբիոնի գիտական հետաքրքրությունների շրջանակում են լեզվաբանության տեսության և պատմության, կառուցվածքային հնչույթաբանության, լեզվաբանական նշանագիտության, լեզվափիլիսոփայության, լեզուների տիպաբանական և զուգադրական քննության, համեմատական քերականության, համեմատական դիցաբանության, հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքի, դասական լեզուների և գրաբարի քե-

րականական կառուցվածքի, հին բնագրերի լեզվի ուսումնասիրության, բառագիտության և ստուգաբանության, ինչպես նաև միանգամայն նոր բնագավառների՝ համակարգչային լեզվաբանության, լեզվի ձևայնացված նկարագրության, մեքենական թարգմանության, տեղեկատվական տեխնոլոգիաների լեզվական ապահովման և մի շարք այլ կարևոր խնդիրներ: Ամբիոնում գրվում են գիտահետազոտական աշխատություններ, ստեղծվում են դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ դասավանդվող առարկաների, մասնավորապես՝ դասական լեզուների համար, կազմվում են բառարաններ: Վերջին տասնամյակի ընթացքում ամբիոնի դասախոսները հրատարակել են, մասնավորապես, հետևյալ աշխատանքները. Վարդան Պետրոսյան. «Մխիթար Սեբաստացու լեզվաբանական հայացքները» (մենագր.), նաև՝ հայոց լեզվի պատմության, համեմատական քերականության, ընդհանուր և հայ հնչույթաբանության տարբեր հիմնահարցերի քննությանը նվիրված բազմաթիվ հոդվածներ. Լիանա Հովսեփյան. հայոց լեզվի կառուցվածքի ձևայնացված նկարագրության հիմնահարցերին նվիրված հոդվածներ. Աշոտ Հայրապետյան. «Ոչ գծային բառաստեղծումը հայերենում» (մենագր.), «Օտար բառերի բառարան», «Լատիներեն ձեռնարկ» (համահեղինակ), «Անգլերեն-հայերեն թեմատիկ բառարան» (համահեղինակ). Աշոտ Աբրահամյան. ընդհանուր լեզվաբանական և լեզվանշանագիտական մի շարք հիմնահարցերի նվիրված հոդվածներ. Հրաչիկ Բայրամյան. «Էջեր հայվրացական գրական կապերի պատմությունից» (հոդ. ժող.), «Վրաց գրականությունը V-XIX դդ.», «Վրաց լեզու» (ուսումն. ձեռնարկներ). Սարգիս Ավետյան. «Վ/Ի/ՈՒ-ի հնչյունական արժեքը և հնչույթային կարգավիճակը դասական հայերենում» (մենագր.), «Լեզուների համեմատական ուսումնասիրության հիմնական սկզբունքները» (դասախոսութ.), նաև՝ հայոց լեզվի պատմության և համեմատական քերականության տարբեր հիմնահարցերի նվիրված հոդվածներ. Նելլի Մկրտչյան. «Ֆրանցիսկոս Ռիվոլայի «Հայերեն-լատիներեն» բառարանը» (մենագր.), «Ժամանակակից հունարենի դասագիրք», «Լատիներենի ձեռնարկ» (համահեղինակ): Ծովինար Հարությունյանը, Օլգա Վարդազարյանը և Կարինե Գրիգորյանը հրատարակել են համեմատական դիցաբանության, միջնադարի փիլիսոփա-

ների ձեռագիր աշխատությունների, հայերենի և ռուսերենի լեզվական առնչությունների տարբեր հիմնահարցերի քննությանը նվիրված հոդվածներ:

Ամբիոնի աշխատակիցները ակտիվորեն մասնակցում են համալսարանի գիտական և հասարակական կյանքին, զեկուցումներով հանդես են գալիս հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Աշխուժացել են կապերը արտասահմանյան գիտական կենտրոնների հետ, ամբիոնի դասախոսները գործուղվում են արտասահման՝ մասնագիտական կատարելագործման և համատեղ գիտական ծրագրեր կատարելու նպատակով (հատկապես մեքենայական թարգմանության, տիպաբանական լեզվաբանության, բառարանագրության պատմության գծով):

Ամբիոնի դասախոսական կազմը հետևողական ուշադրություն է դարձնում ուսանողների մասնագիտական պատրաստվածությանը, ոչ միայն խրախուսում է նրանց՝ ձեռք բերելու խոր և բազմակողմանի գիտելիքներ, այլև հետևում է գիտության ապարեզում նրանց առաջին քայլերին, ղեկավարում ավարտական աշխատանքները, պատրաստում նրանց՝ զեկուցումներով հանդես գալու ուսանողական գիտական նստաշրջաններում:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

95-ամյա Երևանի պետական համալսարանը այլ գիտությունների հետ միասին եղել է նաև հայ բանասիրության և գրականագիտության զարգացման կարևորագույն կենտրոններից մեկը:

Մանուկ Աբեղյանը, Արսեն Տերտերյանը, Գարեգին Հովսեփյանը, Սիմեոն Հակոբյանը, Կոստան Զարյանը, Ցոլակ Խանզադյանը, Զապել Եսայանը, Գեորգ Ասատուրը, Լեոն, Մելիքսեթբեկը, Գարեգին Լևոնյանը, Երվանդ Տեր-Մինասյանը և ուրիշները եղան հայ հին ու նոր գրականության, ժողովրդական բանահյուսության, անտիկ և հետագա դարաշրջանների՝ Արևմուտքի և Արևելքի գրականությունների և ռուս գրականության առաջին դասախոսները, մանկավարժական աշխատանքին զուգընթաց ծավալեցին նաև գիտահետազոտական բեղմնավոր գործունեություն:

Գրականագիտության զարգացման հիմնական օջախը՝ հայ գրականության մայր ամբիոնը, ձևավորվել է 1929 թ. Ա. Տերտերյանի գլխավորությամբ և համալսարանում հնագույններից է: Սկզբից ևեթ այստեղ հայագիտության բնագավառի հզոր անհատականություններն են մշակել ավանդվող առարկաների ծրագրերն ու հենց իրենք էլ դասավանդել: Տասնամյակների ընթացքում այստեղ ստեղծվել են մեծ ավանդույթներ, ամբիոնը դարձել է գործնական հայագիտության, հայրենիքի և սփյուռքի կրթական ու գիտական հաստատությունների համար գրականագետների, հայ գրականության ուսուցիչների սերունդներ պատրաստող գլխավոր դարբնոցներից մեկը:

Բնորոշ է, որ ամբիոնի աշխատանքները նրա գոյության ողջ ընթացքում տևականորեն ղեկավարել, ուսումնագիտական գործընթացը կազմակերպել և հիմնական ուղղությունները մշակել են հայ գրականագիտության նշանավոր ներկայացուցիչներ, ՀԽՍՀ ԳԱ ակադ. Արսեն Տերտերյանը՝ 24 տարի, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Մկրտիչ Մկրյանը՝ 27 տարի, ՀՀ ԳԱԱ ակադ. Հրանտ Թամրազյանը՝ 20 տարի, իսկ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Սամվել Մուրադյանը՝ արդեն 13 տարի:

Ամբիոնի աշխատակազմը, սկսած 1930-ական թթ., համալրվել է համալսարանականներով: 1939 թ. առաջինը Հայաստանում թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Ա. Տերտերյանի ասպիրանտ Մ. Մկրյանը: Հետագայում այստեղ են իրենց թեկնածուական ու դոկտորական աշխատանքները կատարել հին ու նոր գրեթե բոլոր աշխատակիցները:

Ամբիոնն իր գործունեությունը ծավալել է երկու հիմնական ուղղություններով՝ գիտական և մանկավարժական: Քանի դեռ մայր ամբիոնը ուսումնական գործընթացների անհրաժեշտության թելադրանքով տրոհված չէր, հին և միջնադարյան գրականության, հայ ժողովրդական բանահյուսության, հայ նոր գրականության (ներառյալ և արևմտահայ գրականությունը) պատմության հետ միասին այստեղ էր իրականացվում թե գրականության տեսության, թե արտասահմանյան ու ռուս գրականության, թե խորհրդային ժողովուրդների գրականության, թե նորագույն հայ գրականության, թե հայ քննադատական մտքի պատմության դասավանդումը: Ժամանակի ընթացքում վերջին առարկաների դասավանդումը տրվեց նորաստեղծ համապատասխան ամբիոններին: Իսկ այժմ մայր ամբիոնը, հայ գրականության պատմության հետ միասին, թե բակալավրիատում, թե մագիստրատուրայում (առկա և հեռակա) իրականացնում է նաև ավանդումը տարբեր մասնագիտական դասընթացների, ինչպիսիք են՝ «Հայ գրականության զարգացման շրջափուլերը», «Տեքստաբանություն», «Հայկական ժողովրդական «Սասնա ծռեր» էպոսը», «Գրական երկի վերլուծության ուղիները», «Գրական ուղղությունները և հոսանքները հայ գրականության մեջ», «Իսահակյանը և համաշխարհային գրականությունը», «Հովհաննես Թումանյանը և հայ գրականությունը», «Խաչատուր Աբովյան», «Միքայել Նալբանդյան», «Ազգային ճակատագիրը և հայ պոեզիան», «Հայ պոեմի արվեստը» և այլն:

Ամբիոնի աշխատակիցները բարեխղճորեն քննարկել ու գրախոսել են արտաքին կարծիքի ուղարկված թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունները, մասնակցել են գիտական ու գրական-մշակութային միջոցառումներին, ինչպես 2003 և 2013 թթ. հայագիտական միջազգային երկու գիտաժողովներին, որ կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ-ն և ԵՊՀ-ն, Թբիլիսիի և Երևանի պետական համալսարանների համատեղ գիտաժողովին՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին, ինչպես և քրիստոնեության 1700-ամյակին, Լևոն Շանթին, Սիամանթոյին, Համաստեղին, Վիլյամ Սարոյանին, Հակոբ Օշականին, Հրանտ Մաթևոսյանին նվիրված հոբելյանական գիտաժողով-

ներին:

Պատկառելի է ամբիոնի գիտական արտադրանքը. այստեղ են անվանի մտավորականների ջանքերով ստեղծվել մեր գրականագիտական մտքի ակնառու նվաճումները հանդիսացող հիմնարար աշխատություններից շատերը :

Նախ պետք է առանձնացնել մեծանուն հայագետին՝ համալսարանի հիմնադիր դասախոսներից Մանուկ Աբեղյանին, որը պատմագրական ֆակուլտետի առաջին դեկաններից էր: Սկզբնական շրջանում նա հայ գրականության դասավանդման ու գիտական ուսումնասիրման գլխավոր կազմակերպիչներից մեկն էր, սակայն հետագա գործունեությունը շարունակել է գիտությունների ակադեմիայի համակարգում: Մեծավաստակ այդ հայագետի գրչին են պատկանում իրենց գիտական արդիականությունը մշտապես պահպանող ու միշտ հանձնարարելի «Հայոց հին գրականության պատմություն» (1944, 1946) երկհատոր ուղենշային աշխատությունը, «Հայոց լեզվի տեսությունը» (1933), հայկական ժողովրդական էպոսին ու վիպական բանահյուսությանը, ժողովրդական գուսանական երգերին ու խաղիկներին, հայերենի տաղաչափությանը նվիրված կոթողային ուսումնասիրությունները: Նրա անունով է կոչվում ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտը:

Արսեն Տերտերյանը համալսարան է հրավիրվել 1921 թ. և հիմնադրել ու 1929 - 53 թթ. եղել է հայ գրականության ամբիոնի առաջին վարիչը: Նախկինում գրականագիտական-հոգեբանական, իսկ խորհրդային ժամանակներում՝ սոցիոլոգիական դրպրոցի այդ ինքնատիպ ներկայացուցիչը հենց համալսարանում աշխատելու ընթացքում էլ ստեղծեց իր դասախոսությունների և առաջադրույթների նշանավոր շարքը, մեր գրականության պատմության հիմնահարցերին և հայ դասական առանձին գրողներին նվիրված իր կոթողային աշխատությունները, որոնցով Հայաստանում հիմք դրվեց հայ նոր գրականության պատմության գիտական ուսումնասիրությանը: Իրենց թարմությունն ու արդիական հնչեղությունը այսօր էլ պահպանում են Աբովյանի, Նալբանդյանի, Ռաֆֆու, Պարոնյանի, Մուրացանի, Պռոշյանի, Շիրվանզադեի, Օտյանի և ուրիշ հեղինակների աշխարհայացքն ու գրական ուղղությունը, ստեղծագործության հիմնախնդիրները, բովանդակության և արվեստի հարցերը քննող նրա մենագրական աշխատությունները, բազմաթիվ հոդվածներն ու ուսումնասիրությունները: Վերջիններիս հանրագումարն էր 1944 թ. լույս տեսած «Հայ կլասիկներ» ստվարածավալ հատորը, որը կարևոր ուղենիշ եղավ գրականագիտական նոր սերունդների ճանապարհին:

Իր գիտամանկավարժական ծանրակշիռ վաստակով պիտի բնութագրվի նաև Ա. Տերտերյանի անմիջական հաջորդը՝ 1954-80 թթ. ամբիոնը ղեկավարած Մկրտիչ Մկրյանը՝ ներհուն գիտնականը, հմուտ ու սիրված դասախոսը, բանասիրական ֆակուլտետի երկարամյա դեկանը: Հայոց հին մատենագրությանը, մասնավորաբար՝ Մովսես Խորենացուն, միջնադարյան տաղերգությանը, նոր գրականության տարաբնույթ խնդիրներին, Աբովյանին, Ռաֆֆուն, Թումանյանին, Իսահակյանին նվիրված նրա աշխատություններով, նրա «Հայ հին և միջնադարյան գրականություն» երկհատոր բուհական և հանրակրթական դպրոցի՝ 12 հրատարակություն ունեցած «Հայ գրականություն» դասագրքերով տասնամյակներ շարունակ կրթվել են մի քանի սերունդներ, իսկ «Գրիգոր Նարեկացի» մենագրությունը մնում է հայկական Վերածնությունը սկզբնավորած միջնադարյան հանճարի գեղարվեստական ժառանգությունը՝ տաղերն ու «Մատյան ողբերգության» երկն արժեորող գրականագիտական լավագույն աշխատություններից մեկը:

Մեծ է և Հրանտ Թամրազյանի գիտամանկավարժական վաստակը: Արտակարգ աշխատասիրությամբ և գրականության, մանավանդ պոեզիայի բացառիկ զգացողությամբ օժտված այդ վառ անհատականությունը, զարգացնելով նախորդների ավանդները, համալսարանական դասախոսական աշխատանքին զուգահեռ ստեղծել է 40-ից ավելի մենագրություններ, հրատարակել հարյուրավոր գրականագիտական ու քննադատական հոդվածներ, դարձել մեր գրական միտքը ուղղորդող և մեր գիտական կյանքը կազմակերպող եզակի գրականագետներից մեկը: Նրան՝ որպես գիտնականի, բնորոշ էր հետաքրքրությունների գերլայն շրջանակը, իսկ նրա աշխատություններին՝ փաստական հագեցվածությունը, գրական ստեղծագործության մեջ արտացոլված կյանքի ճշմարտությունը արվեստի ճշմարտացիությամբ հիմնավորելու խոշոր առավելությունը:

Հր. Թամրազյանի գործունեությունը կապված է գրականության երկու ամբիոններին. 1968-80 թթ. նա ղեկավարել է իր իսկ հիմնադրած խորհրդահայ գրականության (այժմ՝ նորագույն

հայ գրականության) ամբիոնը, իսկ 1981-ից մինչև 2001 թ. հայ գրականության ամբիոնի վարիչն էր:

Հր. Թամրազյանի տևական ու նպատակասլաց աշխատանքի արդյունքն է մեր գրական մտքի զարգացման ընթացքը բնութագրող «Հայ քննադատություն» եռահատոր ուսումնասիրությունը: Ա. Շիրվանզադեին, Սիամանթոյին, Հ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Մ. Մեծարենցին, Դ. Վարուժանին, Վ. Տերյանին, Ե. Չարենցին, Ա. Բակունցին, Ս. Զորյանին, Հ. Շիրազին, Վ. Դավթյանին, սփյուռքահայ բանաստեղծներին նվիրված նրա մենագրություններն ու ուսումնասիրությունները, «Գրական դիմանկարներ, հոդվածներ», «Հայ քնարերգուներ» ժողովածուները, 1957 թվականից անընդմեջ լույս տեսնող և Հայաստանի Պետական մրցանակի արժանացած «Հայ գրականություն» դպրոցական դասագիրքը, ինչպես նաև «Սովետահայ գրականության պատմություն» բուհական դասագիրքը նրա գիտամանկավարժական պատկառելի վաստակի վկայությունն են:

Ակադ Հր. Թամրազյանը տասնյակ տարիներ ղեկավարել է ԲՈՀ-ի՝ ԵՊՀ-ում գործող բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան շնորհող խորհուրդը, եղել է բազմաթիվ թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս, նրա ղեկավարությամբ գիտական աստիճան են ստացել շուրջ 50 ասպիրանտ ու հայցորդ:

1950 թվականից Երևանի պետական համալսարանում իր գիտամանկավարժական արգասավոր գործունեությունն է սկսել ականավոր գրականագետ, ՀԽՍՀ ԳԱ ակադ. Էդվարդ Ջրբաշյանը: Թեև 1977 թվից նա ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենն էր, բայց ընդմիշտ մնաց համալսարանական գիտության ու մանկավարժության նվիրյալ՝ տարբեր ժամանակներում դասավանդելով գրականության տեսություն, հայ գրականության պատմություն և գեղագիտություն: Տեսության և գեղագիտության բացառիկ մասնագետ էր նա, և համալսարանում նա է հիմնադրել գրականության տեսության ու գեղագիտության ամբիոնը: «Թումանյանի պոեմները», «Միսաք Մեծարենց», «Աշխարհայացք և վարպետություն», «Պոետիկայի հարցեր», «Չորս գագաթ», «Գեղագիտություն և գրականություն» մենագրական ուսումնասիրություններն ու ժողովածուներն անմիջականորեն կապված են համալսարանում

նրա դասախոսական աշխատանքի հետ և լույս են տեսել հենց համալսարանի հրատարակությամբ: Մեծ է նրա ներդրումը ՀԽՍՀ ԳԱ հրատարակած «Հայ նոր գրականության պատմության» բազմահատորյակի ստեղծման մեջ, սակայն այս ամենին պետք է ավելացնել, որ ակադ. Էդ. Ջրբաշյանը համալսարանում էլ պատվով է կատարել գիտության կազմակերպչի իր դերը՝ 1967-1977 թթ. լինելով «Բանբեր Երևանի համալսարանի» հասարակագիտական հանդեսի հիմնադիր խմբագիրը:

Մայր ամբիոնում անցյալում աշխատել և հիմա էլ աշխատում են նաև տարբեր սերունդների այլ հեղինակավոր գիտնական-մանկավարժներ, որոնք իրենց անուրանալի ներդրումն ունեն նրա գիտական արտադրանքի ընդհանուր հաշվեկշռում: Նկատի ունենք ակադ. Վաչե Նալբանդյանին՝ Եղիշեին, Նարեկացուն, Սայաթ-Նովային նվիրված մենագրություններով, միջնադարյան մյուս տաղերգուների ստեղծագործության այլևայլ խնդիրները լուսաբանող ուսումնասիրություններով, պրոֆ. Սահակ Բազյանին՝ Աբովյանին, Նալբանդյանին, Սրվանձտյանին նվիրված աշխատություններով, Պողոս Խաչատրյանին՝ հատկապես Գր. Նարեկացու «Մատյանի» քննական բնագրի պատրաստումով և հրատարակումով, ինչպես և նրա ստեղծագործության հիմախնդիրները քննող ուսումնասիրությամբ:

Ամբիոնի ներկա վարիչը՝ պրոֆ. Սամվել Մուրադյանը, որ նախքան դասախոսական աշխատանքի անցնելը 1969 - 72 թթ. աշխատել է ԵՊՀ հայագիտական կենտրոնում, իսկ 1972 - 1984 թթ. եղել է «Բանբեր Երևանի համալսարանի» հասարակագիտական հանդեսի պատասխանատու քարտուղարը, հայտնի է «Հարություն Սուրխաթյան» (1988), «Երվանդ Օտյան» (1996, լրամշակված՝ 2012), «Հովհաննես Շիրազ» (2012) մենագրություններով, նույն Հ. Շիրազի «Անի» (2011), «Թոնդրակեցիները» (2014) պատմափիլիսոփայական պոեմների հրապարակումով, «Գրական հանգրվաններ» գրքի երեք հատորներով (Ա՝ 2003, Բ՝ 2007, Գ՝ 2010), հայ գրականության ու մշակույթի տարաբնույթ խնդիրներին նվիրված բազմաթիվ հոդվածներով: Գնահատելի են նաև հայաստանյան և միջազգային բազմաթիվ գիտաժողովներին զեկուցումներով հանդես գալը, արդի գրական և մշակութային կյանքին բուռն մասնակցությունը, սփյուռքահայ հասարակական կազմակերպությունների հրավերով Երուսաղեմում, Լիբանանում, Սիրիայում, Իրանում, ԱՄՆ-ում և

այլուր, ինչպես նաև տարբեր հեռուստաալիքներով հայ գրականության մասին կարդացած դասախոսությունների շարքերը: Նա ԵՊՀ-ում գործող բանասիրության գծով աստիճանաշնորհող խորհրդի նախագահի տեղակալն է, ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես», ԵՊՀ-ում լույս տեսնող «Հայագիտական հետազոտություններ», ինչպես նաև «Վէմ» գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների և ՀԳՄ անդամ է, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհրդի անդամ է և նրա «Բարեգործ» թերթի գլխավոր խմբագիրը:

Պրոֆ. Ալբերտ Շարուրյանի հետաքրքրությունները նպատակամղված են եղել արևմտահայ գրողների, մասնավորապես Պ. Դուրյանի, Սրբ. Տյուսաբի, Գր. Զոհրապի, Դ. Վարուժանի ու Մ. Մեծարենցի կյանքի ու ստեղծագործության տարբեր խնդիրների լուսաբանմանը: Նրա տքնաջան աշխատանքի արդյունքը հիշյալ գրողներին նվիրված բանասիրական ծանրակշիռ ուսումնասիրություններ են, նրանց երկերի գիտական հրատարակություններն ու ծանոթագրությունները, որոնց մեջ առանձնանում է Գր. Զոհրապի ստեղծագործությունների լիակատար հրատարակությունը:

Պրոֆ. Զավեն Ավետիսյանն ունի հետաքրքրությունների լայն շրջանակ՝ հայոց հին և միջնադարյան գրականությունից մինչև նորագույն գրականություն, գրականության պատմության և տեսության բազմազան հարցեր, որոնք արծարծված են նրա մի շարք մենագրություններում, բուհական դասագրքերում, բազմաթիվ հոդվածներում ու քննադատական ելույթներում:

Պրոֆ. Վազգեն Սաֆարյանը բնորոշվում է հին և միջնադարյան գրականության տարաբնույթ հարցերի նկատմամբ իր տևական հետաքրքրասիրությամբ և հատկապես կիլիկյան շրջանի գրականությանը նվիրված արժեքավոր մենագրությամբ, ինչպես նաև Մուրացանին ու Նար-Դոսին, Հովհ. Թումանյանին ու Հր. Մաթևոսյանին նվիրված աշխատություններով:

Արդյունավետ է նաև պրոֆ. Ալբերտ Մակարյանի գիտամանկավարժական գործունեությունը: Հ. Ալամդարյանին, Հ. Պարոնյանին, գրական դիմանկարի ժանրին և հայ գրականության մեջ նրա դրսևորումներին նվիրված ուսումնասիրություններին զուգահեռ նա ջանադրումով կատարում է հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի և բանասիրական գիտությունների դոկտորի աստիճաններ շնորհող 012 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարի պարտականությունները:

Ամբիոնի աշխատանքներում իրենց լուրջ ներդրումն են ունեցել դոցենտներ Նելլի Հակոբյանը, Վարդան Վարդանյանը և ուրիշներ: Այժմ էլ եռանդով աշխատում են բան. գիտ դոկտոր, դոց. Սարգիս Մխիթարյանը, դոցենտներ Խաչատուր Վարդանյանը, Սերժ Սրապիոնյանը, Ռուբիկ Էլոյանը, Վարդան Եղիազարյանը, Արշալույս Գալստյանը, Հայկ Համբարձումյանը և ասիստենտ Նվարդ Վարդանյանը: Ամբիոնի բոլոր դասախոսներն էլ մասնակցում են համալսարանի և հանրապետության գիտական ու գրական կյանքին, համալսարանի ՈՒԳԸ աշխատանքներին: Նրանք սիրով ղեկավարում են ուսանողների զեկուցումները, որոնք կարդացվում են ուսանողական գիտական ընկրության նստաշրջաններում:

Պետք է ընդգծել, որ գրականագիտությունը համալսարանում զարգացել և զարգանում է ոչ թե ինքնամփոփ ու մեկուսացած, այլ միշտ էլ հաղորդակից է եղել համաշխարհային գրականագիտության առաջընթացին և հայ գրականության արժեքները գնահատել է գեղագիտական այն բարձր չափանիշներով, որոնք այսօր ընդունելի են Արևելքի և Արևմուտքի՝ մեծ գրականություն ունեցող երկրներում:

Կրթական բարեփոխումների ներկա փուլում ամբիոնը վերանայել է թե՛ բակալավրատի և թե՛ մագիստրատուրայի ուսումնական ծրագրերը, դրանք համապատասխանեցրել արդի պահանջներին:

ԵՊՀ հայ գրականության ամբիոնը թեև ստալինյան ժամանակներում շատերի պես տուժել է՝ ունենալով տաղանդաշատ մարդկանց կորուստ ու զանազան բռնադատումներ, սակայն միշտ իրեն բարձր է պահել ազգային իրական արժեքների գնահատման կողմնորոշումներում: Սերնդափոխության ընթացքում երիտասարդները ավագներից ժառանգել են և՛ գիտական, և՛ մանկավարժական հմտություններ: Բոլորն էլ պատվով են կատարում իրենց վստահված սրբազան գործը:

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Խորհրդահայ շրջանի գրականությունը կարևորելու պետական քաղաքականության որպես հետևանք՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայ գրականության պատմության ամբիոնի դասընթացների առանձնացումով 1968 թ. հիմնադրվեց նոր՝ խորհրդահայ գրականության ամբիոնը: Հիմնադրման թվականից մինչև 1981 թ. ամբիոնը ղեկավարել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Սմբատի Թամրազյանը: Խորհրդային Միության փլուզումից հետո՝ 1991 թ., ամբիոնը վերանվանվեց հայ նորագույն գրականության: Ամբիոնի ծրագրերում խորհրդահայ շրջանի գրականության հետ կարևոր տեղ հատկացվեց նաև սփյուռքահայ ու ժամանակակից շրջանի գրականությանը: 1981 թ. առ այսօր ամբիոնը ղեկավարում է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Վազգեն Արշալույսի Գաբրիելյանը:

Ամբիոնի նախկին և ներկա բոլոր անդամները համալսարանականներ են. նրանք իրենց գիտական մկրտությունը ստացել, թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունները պաշտպանել են նույն ամբիոնում: Նրանցից յոթը՝ Վազգեն Գաբրիելյանը, Գառնիկ Անանյանը (հետագայում ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, մահացել է 2007 թ.), Ժենյա Քալանթարյանը (2007 թվականից գրականության տեսության և գրական քննադատության ամբիոնի վարիչ), Լարիսա Մնացականյանը, Կիմ Աղաբեկյանը, Սերգեյ Աթաբեկյանը (մահացել է 2000 թ.), Արծրուն Ավագյանը (2000 թ.-ից Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան) պաշտպանել են գիտության դոկտորի, չորսը (Սեյրան Գրիգորյան, Արմեն Ղազարյան, Արմենուհի Արզումանյան, Սիրանուշ Դվոյան)՝ գիտության թեկնածուի ատենախոսություն: Ամբիոնի երկու տասնյակից ավելի ասպիրանտներ ու հայցորդներ, պաշտպանելով թեկնածուական, նրանցից չորսը՝ նաև դոկտորական ատենախոսություն, այսօր աշխատում են հանրապետության այլ ուսումնական ու գիտական հաստատություններում, տարբեր քաղաքներում, Սփյուռքի տարբեր գաղթօջախներում: Ամբիոնում սփյուռքահայ հինգ ուսանողներ պաշտպանել են թեկնածուական, իսկ ստաժոր լիբանանցի Գրիգոր Շահինյանը՝ դոկտորական ատենախոսություն:

Ամբիոնն իր գոյության չորս տասնյակ տարիներին նշանակալից աշխատանք է տարել նորագույն շրջանի հայ գրականության ուսումնասիրության, գիտական համակարգման, ուսուցման և մասնագետներ պատրաստելու գործում: Հայ նորագույն գրականությունը, որն ընդգրկում է Համաշխարհային առաջին պատերազմից մինչև մեր օրերը ժամանակահատվածի՝ Հայաստանում և Սփյուռքում ստեղծված հարուստ գրականությունը, գիտական ուսումնասիրության մեծ հնարավորություններ է տալիս հետազոտողներին, այդ իսկ պատճառով էլ մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների հետաքրքրությունը գնալով մեծանում է այս մասնագիտացման նկատմամբ: Ամբիոնի շրջանավարտները այսօր աշխատում են Հայաստանի գիտական ու կրթական օջախներում, զանգվածային լրատվամիջոցների ու գրահրատարակչության ասպարեզում, պետական հիմնարկներում:

Ամբիոնում ուսումնասիրվում և ուսուցանվում են դասընթացներ՝ նվիրված հայ նորագույն գրականության դասական և ժամանակակից շրջանների պատմությանը, առանձին հեղինակների ստեղծագործություններին (ներառելով ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի գրականությունը), ուսումնասիրվում և ուսուցանվում են քննադատության տեսություն, հայ քննադատական մտքի պատմություն, հայ գրականության դասավանդման մեթոդիկա դասընթացները: Ամբիոնը պատրաստում է բակալավր, մագիստրոս և գիտության թեկնածու հայ նորագույն գրականության և գրական քննադատության մասնագիտացումով:

Ամբիոնի շատ դասախոսներ հայտնի անուններ են հանապետության ուսումնական, գիտական ու գրական կյանքի շրջանակներում. նրանք Հայաստանի գրողների միության անդամներ են (Վ. Գաբրիելյան, Ժ. Քալանթարյան, Կ. Աղաբեկյան, Ա. Ավագյան, Ս. Գրիգորյան), զբաղվում են գրական քննադատությամբ, դպրոցական ու բուհական դասագրքերի հեղինակներ են: Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի «Գրականության» դասագրքի համահեղինակ է Լ. Մնացականյանը, 10-րդ դասարանի «Հայ գրականության» դասագրքի համահեղինակ է Ժ. Քալանթարյանը, 9-10-րդ դասարանի «Սփյուռքահայ գրականություն» դասագրքի հեղինակը Վ. Գաբրիելյանն է:

Ամբիոնի անդամների հեղինակած բուհական դասագրքերն ու ձեռնարկները, քրեստոմատիաներն ու կազմած ժողովածուները (Հր. Թամրազյան՝ «Սովետահայ գրականություն», Վ.

Գաբրիելյան՝ «Սփյուռքահայ գրականություն», «Սփյուռքահայ պոեզիա», «Սփյուռքահայ պատմվածք», «Գրավոր խոսք», Ժ. Քալանթարյան՝ «Հայ գրական քննադատության քրեստոմատիա»՝ երկու հատորով, Ա. Ավագյան՝ «Սփյուռքահայ դասական պատմվածք») մեծապես օգնում են ուսումնառության գործընթացին:

Գիտական ու գրական շրջաններում բարձր են գնահատվել ամբիոնի անդամների հրատարակած մենագրական ուսումնասիրությունները, հոդվածների ժողովածուները՝ նվիրված հայ դասական ու ժամանակակից գրողների ստեղծագործությունների քննությանը: Այդպիսիք են Հր. Թամրազյանի «Եղիշե Չարենց», «Սիամանթո», «Գրական դիմանկարներ», «Հայ քննադատության պատմություն», «Բանաստեղծը և ճակատագիրը», Վ. Գաբրիելյանի «Դանիել Վարուժան», «Դասականների ժամանակը», «Գրականության մեր ժամանակը», «Պատմության խորհուրդը և ներկան», Ժ. Քալանթարյանի «Հայ գրականագիտության պատմություն», «Վահագն Դավթյան», «Անդրադարձներ», «Ուրվագծեր արդի հայ գրականության», Լ. Մնացականյանի «19-րդ դարավերջի արևմտահայ քննադատական մտքի պատմությունից», «Քսաներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը», «Հոդվածներ և ուսումնասիրություններ», Կ. Աղաբեկյանի «Արդի հայ արձակի զարգացման միտումները», «Հրանտ Մաթևոսյան», «Հակոբ Օշական», Ս. Աթաբեկյանի «Բառի կեցության խորհուրդը», «Ակսել Բակունց», Ա. Ավագյանի «Կոստան Զարյան», «Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի», Ս. Գրիգորյանի «Ժամանակակից խորհրդահայ պոեմը», «Բանասիրություն և բանավեճ», «Եղիշե Չարենցի բնագիրը» գրքերը: Հիշարժան երևույթ են ամբիոնի հրատարակած «Չարենցյան ընթերցումներ» խորագրով ժողովածուի ինը հատորները, որոնց մեջ տեղ են գտել ամբիոնի կողմից կազմակերպված «Չարենցյան ընթերցումներ» գիտական նստաշրջաններում կարդացված զեկուցումները, ինչպես նաև «Հրանտ Մաթևոսյան» և «Քրիստոնեությունը և գրականությունը» գիտական հոդվածների ժողովածուները՝ նույնանուն գիտական նստաշրջանների նյութերով:

Ամբիոնի բոլոր անդամները հանդես են գալիս միջազգային, հանրապետական ու բուհական, գիտական նստաշրջաններում, կոնֆերանսներում, կլոր սեղաններում և գրական ասուլիսներում:

Հայ նորագույն գրականության ամբիոնը այսօր շարունակում է գիտական աշխատանքները վերջին տարիների՝ ամբիոնային ընդհանուր՝ «Հայաստանյան և սփյուռքյան գրականությունների զարգացման օրինաչափություններն ու աղերսները» թեմայի շրջանակներում: Գրվում են ուսումնասիրություններ, հոդվածներ, որոնք հրապարակվում են գիտական ու գրական մամուլում, առանձին գրքերով:

Վերջին տարիներին լույս են տեսել նաև ամբիոնի ասպիրանտ Արմեն Հովակիմյանի, հայցորդ Անահիտ Պետրոսյանի և Սևակ Ղազարյանի թեկնածուական ատենախոսությունների հիմքով ստեղծված գրքերը՝ նվիրված Համո Սահյանի պոետիկային, Նիկոլ Աղբալյանի գրականագիտական հայացքներին, Պարույր Սևակի անտիպ ժառանգությանը: Դասախոսների մի խումբ պրոֆ. Արծրուն Ավագյանի, ապա պրոֆ. Վազգեն Գաբրիելյանի ղեկավարությամբ այսօր շարունակում է աշխատանքը «Հայոց եղեռնապատումի գրականությունը» գիտական թեմայով (արդեն կան առանձին հրապարակումներ):

Կրթության բնագավառը՝ դասախոսությունները, գործնական պարապմունքները, կուրսային ու դիպլոմային աշխատանքների ղեկավարումն է, անշուշտ, ամբիոնի առաջնահերթ խնդիրը, ուստի մերթընդմերթ նորացվում են դասընթացների ծրագրերը, ստեղծվում է ուսումնական գրականություն, տպագրվում ու վերատպագրվում են ուսումնական և մեթոդական ձեռնարկներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Գրականագիտական տեսական հիմունքների դասավանդումը Երևանի պետական համալսարանում սկսվել է դեռևս 1920-ական թվականներից: Նախապես այս դասընթացը վարում էր անվանի գրականագետ Յոլակ Խանզադյանը: Սակայն տասնամյակներ շարունակ գրականագիտական տեսական առարկաները գտնվել են տարբեր ամբիոնների՝ հիմնականում արտասահմանյան գրականության ամբիոնի ուսումնական պլանում: 1956 թ. գրականության տեսության առարկաները անջատվել են արտասահմանյան գրականության ամբիոնից և փոխանցվել հայ գրականության ամբիոնին: Տարբեր տասնամյակների ընթացքում գրականության տեսություն են դասավանդել պրոֆեսորներ Գ. Աբովը, Էդ. Ջրբաշյանը, Էդ. Թոփչյանը, Ղ. Այվազյանը, Ա. Սիմոնովան: 1972 թ. ստեղծվել է գրականության տեսության և գեղագիտության ամբիոն՝ անվանի գրականագետ, տեսաբան, պրոֆ. (հետագայում ակադեմիկոս) Էդ. Ջրբաշյանի գլխավորությամբ: Ջրբաշյանը ամբիոնը ղեկավարել է մինչև 1986 թվականը՝ սկսած 1977 թ. այդ աշխատանքը համատեղելով ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տեսության բաժնի վարիչի, ապա ինստիտուտի տնօրենի պաշտոնները: Էդ. Ջրբաշյանը գրականության տեսություն է դասավանդել համալսարանում՝ սկսած 1950 թվականից, իսկ նրա «Գրականության տեսություն» դասագիրքը ունեցել է հինգ հրատարակություն և արժանացել ՀԽՍՀ պետական մրցանակի: Հետագայում հիշյալ դասագիրքը վերամշակված և «Գրականագիտության ներածություն» վերնագրով վերահրատարակվել է ևս երկու անգամ 1996 և 2011 թվականներին և առ այսօր ծառայում է իբրև բուհական դասագիրք: Տեսական դասընթացների դասավանդմանը մեծապես նպաստել է նաև Վովա Հովսեփյանի «Գեղագիտական ուսմունքների պատմություն» գիրքը, որը լույս է տեսել 1980 թ.:

Գրականության տեսության և գեղագիտության ամբիոնի կազմում էին արվեստաբան Եղիշե Հովհաննիսյանը, Վովա Հովսեփյանը, գրականագետ Պիոն Հակոբյանը, Միքայել Զավարյանը, Հենրիկ Էդոյանը և ուրիշներ:

1982 թ. արտասահմանյան գրականության և գրականության տեսության ամբիոնները համախմբվեցին մեկ միասնական ամբիոնի մեջ, որը ղեկավարում էր ակադ. Էդ. Ջրբաշյանը: 1986 թ. հունվարից արտասահմանյան գրականության և գրականության տեսության ամբիոնի վարիչ է ընտրվել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Հ. Էդոյանը, որի ղեկավարության շրջանում ամբիոնում աշխատել են արտասահմանյան գրականության մասնագետներ դոկտորներ Ա. Հարությունյանը, Կ. Մատինյանը, դոցենտներ Ն. Սանթրոսյանը, տեսաբաններ, դոցենտներ Վ. Նավասարդյանը, Ա. Բեքմեզյանը, Ա. Ջրբաշյանը, Ս. Հարությունյանը, գրականագետներ բ. գ. թ. Յու. Խաչատրյանը, Ն. Գոնչար-Խանջյանը, ասիստենտ Արփի Մարտիրոսյանը:

Այս ընթացքում ամբիոնը քայլեր է ձեռնարկել ուսումնական և օժանդակ գրականության հրատարակության ուղղությամբ: 1984 թ. տպագրվել է «Գրականագիտության ներածության քրեստոմատիան» (կազմողներ Ա. Բեքմեզյան, Վ. Նավասարդյան), պրոֆ. Հ. Էդոյանի «Եղիշե Չարենցի պոետիկան» (1986): Միևնույն ժամանակ ամբիոնի ուղղվածության մեջ էական դեր են կատարել արտասահմանյան գրականության առարկայի դասավանդումը և այս մասնագիտությամբ կադրերի պատրաստումը: 1986-2007 թթ. ընթացքում արտասահմանյան գրականության և գրականության տեսության միասնական ամբիոնում գիտական աշխատությունների ծանրակշիռ մասը նվիրված է եղել արտասահմանյան գրականությանը: Պաշտպանվել են տեսության գծով թեկնածուական ատենախոսություններ:

2007 թ. հունիսից կրկին վերափոխվել են ամբիոնի ուղղվածությունն ու անվանումը: Այն առանձնացել է արտասահմանյան գրականությունից և վերանվանվել է գրականության տեսության և գրաքննադատության ամբիոն: Ամբիոնի վարիչությունը ստանձնել է բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Ժենյա Քալանթարյանը: Ամբիոնի վեց անդամներից երկուսը գիտության դոկտորներ են (Ժ. Քալանթարյանը, Մ. Ջանփոլադյանը), երեքը՝ Վ. Նավասարդյանը, Ա. Բեքմեզյանը, Ա. Ջրբաշյանը՝ գիտությունների թեկնածու, դոցենտներ, մեկը՝ Ալվարդ Սեմերջյանը, գիտությունների թեկնածու, ասիստենտ: Ամբիոնն ունի մեկ ավագ լաբորանտ՝ Ա. Նալբանդյանը:

Ամբիոնի նոր ուղղվածության տեսանկյունից (տեսություն և քննադատություն) ուսումնական գրականության ցանկը համալրվել է ամբիոնի անդամների՝ պրոֆեսորներ Ժ. Քալանթարյանի «Հայ գրականագիտության պատմություն» (1986), «Գրական քննադատության տեսության և պատմության հարցեր» (1982), Մ. Ջանփոլադյանի «Հովհ. Թումանյանը և ժողովրդական էպոսը» (1969) մենագրություններով: Դոց. Ա. Ջրբաշյանը 2009 թ. հրատարակել է «Հայկական կլասիցիզմի ժանրային համակարգը» մենագրությունը:

Ամբիոնի պրոֆեսորներ Ժ. Քալանթարյանը և Մ. Ջանփոլադյանը ամբիոնի վերակազմավորումից հետո հրատարակել են նոր մենագրություններ (Ժ. Քալանթարյան «Գրական հորիզոններ», 2008), «Եղիշե Չարենց» (2012), Մ. Ջանփոլադյանը ("Давид Сасунский в руссих переводах и критике", 2012), "Книга скорби Нарекаци в русских переводах и критике", 2012), որոնց նշանակությունը տեսության խնդիրներով չի սահմանափակվում:

Իր նոր կազմով և ուղղվածությամբ գրականության տեսության ամբիոնը լուրջ աշխատանքներ է տանում ծրագրերի թարմացման և ստեղծման, գիտական սեմինարների կազմակերպման և նոր կադրերի պատրաստման ուղղությամբ: 2007 թ. հետո ամբիոնի հայցորդներից երեքը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, երկու ասպիրանտ հանձնել են որակավորման բոլոր քննությունները և ավարտում են ատենախոսությունները: Ամբիոնն ունի չորս ասպիրանտ՝ երեքը՝ հեռակա, մեկը՝ առկա: Ամբիոնի անդամները ակտիվորեն մասնակցում են հանրապետական և ԱՊՀ երկրների մասշտաբով (Մ. Ջանփոլադյան) կազմակերպվող գիտական գրական կոնֆերանսներին, հանդես գալիս զեկուցումներով: Մ. Ջանփոլադյանը 2007 թ. հոկտեմբերին զեկուցումով հանդես է եկել ԱՊՀ և բալթյան երկրների թարգմանիչների ֆորումում Երևանում, իսկ Թումանյանին նվիրված զեկուցումով՝ 2008 թ. նոյեմբերին՝ Կիևում: Վերջին զեկուցման համար Կիևից շնորհակալագիր է ստացվել ԵՊՀ ռեկտորի անունով: Ժ. Քալանթարյանը հայ արձակի արդի զարգացումները թեմայով զեկուցումներ է կարդացել համահայկական գրական համաժողովում, ժամանակակից արձակին նվիրված զեկուցումով՝ ՀԳՄ պլենումում (2008 թ. հուլիս, Ծաղկաձոր), հայագիտական երկրորդ միջազգային համաժողովում (Երևան, 2013 հոկտեմբեր): Բ. գ. թ., ասիստենտ Ա. Սեմիրջյանը զեկուցումներով մասնակցել է համալսարանական, հանրապետական, գրողների միության կազմակերպած գիտաժողովներին, իսկ 2012 թ. նաև Ս. Պետերբուրգում տեղի ունեցած Հայ լեզվաբանական 9-րդ գիտաժողովին:

Ամբիոնի անդամներից դոց. Վ. Նավասարդյանը աշխատում է ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողների համար նախատեսվող գրականության տեսության ռուսերեն-հայերեն զուգահեռ լեզուներով գրքի վրա:

Ամբիոնն ունի «Համաշխարհային գրականություն և գրականության տեսություն» մագիստրոսական մասնագիտացման ծրագիր, որտեղ դասավանդվում են «գրական ժանրերի տեսություն», «ստեղծագործական հոգեբանություն», «հայ և միջազգային գրական առնչություններ», «թարգմանության տեսություն», «արվեստների տեսակների դասակարգման ձևերն ու սկզբունքները«, ««Աստվածաշունչը» և համաշխարհային գրականությունը» և այլ առարկաներ:

Ամբիոնում աշխատանքներ են տարվում տեսության խնդիրներին ավելի մեծ տեղ տալու և դասընթացներն արդիականացնելու ուղղությամբ, և այդ նպատակով կազմակերպվում են գրական սեմինարներ, որոնք շարունակական լինելու միտում ունեն:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Մանկավարժության ամբիոնը Երևանի պետական համալսարանի հնագույններից է: Հիմնադրվել է 1921 թ.՝ ժամանակի տաղանդավոր գիտնական-մանկավարժների նախաձեռնությամբ ու ջանքերով: Մանկավարժության ամբիոնի կայացման և ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման ու զարգացման գործում իրենց ծանրակշիռ ներդրումն են ունեցել ճանաչված պրոֆեսորներ Գ. Էդիլյանը, Ար. Շավարշյանը, Մ. Սանթրոսյանը, Աբ. Մովսիսյանը, Թ. Ջուհարյանը, Հ. Մախչանյանը, դոցենտներ Ա. Իգնատյանը, Ս. Խուդոյանը, Ալ. Մանուկյանը, Փ. Հուրիխանյանը, Թ. Բալասանյանը, Լ. Ալեքսանյանը: Իրենց ամենօրյա տքնաջան ու արդյունավետ մանկավարժական և գիտահետազոտական աշխատանքներով, արդիական մոտեցումներով նրանք նոր որակ ու արժեք են տվել մանկավարժություն գիտությանը Հայաստանում՝ մշակման ենթարկելով թե՛ մանկավարժության տեսության ու պատմության և թե՛ մասնավոր մեթոդիկաների բազում հիմնահարցեր:

Ամբիոնում ստեղծվել են հրաշալի ավանդույթներ, որոնք, սերնդեսերունդ փոխանցվելով, հասել են մինչև մեր օրերը՝ իհարկե կրելով ստեղծագործական զարգացում: Ամբիոնի հիմնադիրների ստեղծած արժեքների պահպանման ու զարգացման գործին իրենց մեծ վաստակն են բերել ու այսօր էլ բերում են ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆ. Նազիկ Հարությունյանը, դոցենտներ Թամարա Հարությունյանը, Գարուն Բաբայանը, Վաղարշակ Գյուլբուդաղյանը, Արևիկ Ղազարյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Արմինե Աշիկյանը, Աննա Ալեքսանյանը, Արա Սաղաթելյանը և մյուս դասախոսները:

Լինելով բանասիրության ֆակուլտետի կազմում՝ մանկավարժության ամբիոնն իր գործունեությամբ համահամալսարանական ամբիոն է: Համալսարանի 14 ֆակուլտետներում դասավանդվում է «Ընդհանուր մանկավարժություն» առարկան: Համալսարանի 12 ֆակուլտետներում պատրաստվում են նաև մանկավարժ-ուսուցիչներ:

1998-1999 ուս.տարում մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ և համալսարանի ղեկավարության ջանքերով

բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայում բացվել է «Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագիրը երկու մասնագիտացումներով՝ հանրակրթության կառավարում և բարձրագույն կրթության կառավարում: «Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագիրն առայժմ միակն է հանրապետությունում, որ պատրաստում է կրթության կազմակերպիչներ հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերի համար:

2006 թվականից այս բաժնում անհատական ծրագրով սովորել են սփյուռքահայ ուսուցիչներ, տնօրեններ Լիբանանից, Սիրիայից և Թուրքիայից:

2010-2011 ուսումնական տարում բանասիրության ֆակուլտետի բակալավրիատում բացվեց «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագիրը: Պատրաստվում են սոցիալական մանկավարժներ հանրակրթական դպրոցների համար:

Սերտ է մանկավարժության ամբիոնի համագործակցությունը սփյուռքի հայկական գաղթօջախների դպրոցների և հայագիտական կենտրոնների հետ: Դա դրսևորվել է դասախոսություններով և տեղի հայկական ամենօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին մասնակցելով:

Ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆ. Ն. Հարությունյանը դասախոսություններով հանդես է եկել արտասահմանյան մի քանի երկրներում՝ ԱՄՆ, Լիբանան, Սիրիա, Իրան՝ սերտորեն համագործակցելով տեղի հայկական գաղթօջախների հայ մտավորականների հետ: Արդեն 21 տարի է, ինչ ամբիոնը զբաղվում է սփյուռքի հայկական դպրոցների ուսումնասիրությամբ: Պրոֆ. Ն. Հարությունյանի հեղինակությամբ 2002 թ. տպագրվել է մենագրություն՝ «Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները» խորագրով:

Իր գոյության 93 տարիների ընթացքում մանկավարժական աշխատանքին զուգընթաց ամբիոնում իրականացվել են գիտական հետազոտություններ մանկավարժության տեսության և պատմության, կրթության կառավարման բազմաբնույթ հարցերի վերաբերյալ, ստեղծվել են մենագրություններ, բուհական ձեռնարկներ, դպրոցական դասագրքեր, ուսուցչի մեթոդական ձեռնարկներ և 1000-ից ավելի գիտական հոդվածներ:

Ոչ պակաս բեղմնավոր է եղել ամբիոնի գիտահետազոտա-

կան աշխատանքները վերջին 20 տարիների ընթացքում:

1991 թ.-ին լույս է տեսել պրոֆեսոր Հ. Մախչանյանի «Մանկավարժական մտորումներ» մենագրությունը, իսկ 1997թ-ին պրոֆեսոր Հ. Մախչանյանի և դոց. Ալ.Մանուկյանի համահեղինակությամբ տպագրվել է «Մանկավարժության ընդհանուր հիմունքներ» բուհական ձեռնարկը:

Պրոֆեսոր Ն. Հարությունյանի հեղինակությամբ տպագրվել է 3 մենագրություն, դպրոցական 2 դասագիրք, ուսուցչի 2 մեթոդական ձեռնարկ, 2 բուհական ձեռնարկ, «Մանկավարժական հանրագիտարանի» երկհատորյակը և 80-ից ավելի գիտական հոդված:

Նազիկ Հարությունյանը՝ «Առաքել Բահաթրյան» (կյանքը և գործը), (1992), «Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները», (2002), «Հայ մանկավարժ կաթողիկոսները», (2012) մենագրությունների, «Մարդու իրավունքներ» դպրոցական 8-րդ դասարանի, (2001), «Հասարակագիտություն» 9-րդ դասարանի համար, (2008), «Իրավունք» ուսուցչի մեթոդական ձեռնարկ, (2001), «Հասարակագիտություն» ուսուցչի մեթոդական ձեռնարկ, (2007), "Социальная работа, учебное пособие, соавтор", (1995), «Մարդկային զարգացում» բուհական ձեռնարկ, (2004), «Հայ մանկավարժական մամուլ», (2010) գրքերի համահեղինակ է:

Ամբիոնի դոցենտ Թ. Հարությունյանը 2001թ-ին հրատարակել է «Ժողովրդական ուսուցիչ» մենագրությունը:

Վերջին 20 տարիների ընթացքում ամբիոնը և աշխատակիցները տպագրել են 200-ից ավելի գիտական հոդվածներ:

Ամբիոնը գիտական կադրեր է պատրաստում ոչ միայն Հայաստանի, այլ նաև սփյուռքի (Սիրիա, Կիպրոս) և Իրանի Իսլամական Հանրապետության համար: Այսօր ամբիոնում սովորում են 1 ասպիրանտ, 3 հայցորդ Հայաստանից, 1 ասպիրանտ Կիպրոսից և 4 ասպիրանտ Իրանից:

2012 թ.-ից համալսարանում գործում է ԲՈՀ-ի գիտական աստիճաններ շնորհող 065 մանկավարժության մասնագիտական խորհուրդը, որի կարճ գործունեության ընթացքում պաշտպանվել է 21 ատենախոսություն, որոնցից 5-ը՝ դոկտորական, 16-ը՝ թեկնածուական:

Ամբիոնի դասախոսները ակտիվորեն մասնակցում են համահամալսարանական, հանրապետական և միջազգային տարբեր գիտաժողովների. 2000 թ. Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում տեղի ունեցած միջազգային գիտաժողովին (պրոֆ. Ն. Հարությունյան), 2001 թ. «Քրիստոնյա Հայաստանը քաղաքակրթության խաչմերուկում» միջազգային գիտաժողովին՝ նվիրված Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին (Ն. Հարությունյան, Թ. Հարությունյան), Հայաստան-սփյուռք երկու համաժողովներին՝ 2001-2002 թթ. (պրոֆ. Ն. Հարությունյան): Ամբիոնի վարիչ Ն. Հարությունյանը զեկուցմամբ հանդես է եկել 2003 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Հայագիտական միջազգային առաջին համաժողովին, 2007 թ.՝ «Կրթությունը 21-րդ դարում» միջազգային գիտաժողովին Երևանում, 2009՝ ԵՊՀ 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին (Ն. Հարությունյան), 2014՝ ԵՊՀ 95-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:

Մանկավարժության ամբիոնն ակտիվորեն համագործակցում է Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների և դեսպանատների հետ (Համաշխարհային բանկ, Tempus ծրագիր, SOROS-Բաց հասարակություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Junior achievments-Պատանեկան նվաճումներ, Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության և Վրաստանի Հանրապետության դեսպանատները)՝ մասնակցելով նրանց կրթական տարբեր ծրագրերին, համատեղ կազմակերպելով գիտաժողովներ, կլոր սեղաններ, վերապատրաստման դասընթացներ:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Ալեքսանդրապոլի առևտրային դպրոցի շենքը, որտեղ 1920 թվականի հունվար-հունիս ամիսներին գործել է Հայաստանի համալսարանը

ՀՀ հանրային կրթության նախարար Նիկոլ Աղբալյանը

Հայաստանի համալսարանի առաջին ռեկտոր Յուրի Ղամբարյանը

Պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը

Ստեփան Մալխասյանցը

Վ.Մ. ՄՈԼՈՏՈՎԻ
ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
1949-50 ՈՒՍ-ՏԱՐՎԱ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Հայ ժողովրդի պատմության ամբիոն
(ձախից՝ Է. Դանիելյանը, Պ. Հովհաննիսյանը, Ս. Պողոսյանը, Ա. Աբրահամյանը, ամբիոնի վարիչ Լ. Խուրշուդյանը, Ս. Մելիք-Բախշյանը, Բ. Հարությունյանը, Հ. Մելիքսեթյանը, Շ. Թորոսյանը) (1980 թ.)

ՍՍՀՄ պատմության ամբիոնի անձնակազմը
(ձախից՝ Զ. Արզումանյանը, Ժ. Միրզաթանյանը, Մ. Մուրադյանը, Ա. Ներսիսյանը, Գ. Շառոյանը, Մ. Շիմշիրյանը, Հ. Հարությունյանը, Ռ. Մելիք-Սարգսյանը (1974 թ.))

Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը

Պատմաբան Լեոն

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ֆակուլտետի 1-ին ասպիրանտներից Աբգար Հովհաննիսյանը

Դոցենտ Հայկազ Ժամկոչյանը

Պատմության ֆակուլտետի գիտխորհրդի կազմը (1967 թ.)

ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Վահան Ռշտունին պատմության ֆակուլտետում դասախոսության ժամանակ (1967 թ.)

Պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանը

Պրոֆեսոր Ստեփան Ներսիսյանը



Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը

Ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը

Թղթակից անդամ Հ. Թամրազյանը, ակադեմիկոս Մ. Մկրյանը և թղթակից անդամ Էդ. Աղայանը

Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը

Ակադեմիկոս Գ. Սևակը

Ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը



Ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանը

Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը



Պրոֆեսոր Հովհաննես Բարսեղյանը լսարանում



Լևոն Ներսիսյանը դասի ժամանակ

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է. Մինասյանը աշխատանքային խորհրդակցության ժամանակ

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Է. Մինասյանը ամբիոնի վարիչների հետ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ավագյանը աշխատանքային խորհրդակցության ժամանակ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանը ֆակուլտետի դասախոսների հետ

95
ամյակ